



ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ
ԱՌԱՋԻՆ ԹՈՂԱՐԿՈՒՄ

Պարտատոմսերի ծրագրային ազդագիրը գրանցվել է
ՀՀ Կենտրոնական բանկի նախագահի 01.12.2008թ.
թիվ 1/1181 Ա Որոշմամբ

**Արժեթղթի ազդագիր
ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ**

«Կոնվերս Բանկ» Փակ Բաժնետիրական Ընկերություն
թողարկողի ֆիրմային անվանումը (անուն, ազգանունը)

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
կազմակերպական - իրավական ձևը

**0010, Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 26/1,
հեռ. (374 10) 511211, (374 10) 511200, ֆաքս: (374 10) 511212, էլ. փոստ՝ post@conversebank.am,
կայքը՝ www.conversebank.am
գտնվելու վայրը, կապի միջոցները (հեռախոս, ֆաքս, էլեկտրոնային փոստ և այլն)**

տեղաբաշխվող արժեթղթերի դասը՝ <u>պարտատու</u>	<u>անվանական, արժեկտրոնային</u>
արժեթղթերի ձևը՝	<u>Ոչ փաստաթղթային</u>
արժեթղթերի քանակը՝	<u>10000 հատ</u>
արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝	<u>30000 (երեսուն հազար) ՀՀ դրամ</u>
արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքը՝	<u>300000000 (երեք հարյուր միլիոն) ՀՀ դրամ</u>

«ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԸ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՉԻ ԿՐՈՒՄ ՍՈՒՅՆ ԱԶԳԱԳՐՈՒՄ ԶԵՏԵՂՎԱԾ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՍԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՃՇՏՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐ: ԳՐԱՆՑՄԱՆ ՓԱՍՏԸ ՉԻ ՀԱՎԱՍՏՈՒՄ ՆԵՐԳՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ»:

«Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ ազդագրում ներառված տեղեկությունները ճշգրիտ և ստույգ են, չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել ազդագրի ամբողջականությունը»:

ստորագրող անձինք՝			
<u>Արմեն Տեր-Տաճատյան</u>	<u>խորհրդի նախագահ</u>	<u></u>	<u></u>
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
<u>Զուան-Պաբլո Գեյիջյան</u>	<u>խորհրդի անդամ</u>	<u></u>	<u></u>
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
<u>Տեր Թորգոմ վրդ. /Ադամ/ Տոնիկյան</u>	<u>խորհրդի անդամ</u>	<u></u>	<u></u>
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
<u>Ջեյմս Ռիչարդ Չիկ</u>	<u>խորհրդի անդամ</u>	<u></u>	<u></u>
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
<u>Մաթիաս Գեյնգա Էրնեսկյան</u>	<u>խորհրդի անդամ</u>	<u></u>	<u></u>
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
<u>Արարատ Դուկասյան</u>	<u>գործադիր տնօրեն, վարչության նախագահ</u>	<u></u>	<u></u>
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
<u>Ռուբեն Կոպյան</u>	<u>գործադիր տնօրենի տեղակալ, վարչության անդամ</u>	<u></u>	<u></u>
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

(անուն, ազգանուն)	(պաշտոն) գործադիր տնօրենի տեղակալ, վարչության անդամ	(ստորագրություն)	(ամսաթիվ)
<u>Արթուր Մխիթարյան</u> (անուն, ազգանուն)	(պաշտոն) գործադիր տնօրենի տեղակալ, վարչության անդամ	(ստորագրություն)	(ամսաթիվ)
<u>Տիգրան Դավթյան</u> (անուն, ազգանուն)	(պաշտոն) գլխավոր հաշվապահ, վարչության անդամ	(ստորագրություն)	(ամսաթիվ)
<u>Արշակ Կարախանյան</u> (անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Ստորագրությունները վավերացնում են (ստորագրությունները վավերացվում են տնօրենների խորհրդի նախագահի կամ գործադիր տնօրենի, կամ նման իրավասություն ունեցող այլ անձի կողմից)՝

<u>Արարատ Դուկասյան</u> (անուն, ազգանուն)	գործադիր տնօրեն, վարչության նախագահ (պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
--	--	------------------	-----------

Ազդագրում ներառվող տեղեկությունների ցանկը՝ տես էջ 3:

Կ.Տ.

Ազդագրում ներառված են հետևյալ տեղեկությունները՝

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ.....	6
ԹՈՂԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՍՄԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	11
Ընդհանուր տեղեկություններ	11
Պարտատոմսերից ստացվող եկամուտների վերաբերյալ տեղեկություններ.....	13
Սահմանափակումների վերաբերյալ տեղեկություններ	13
Տեղեկություններ պարտատոմսերի տեղաբաշխմանը մասնակցող անձանց և նրանց մասնակցության չափի վերաբերյալ.....	13
Բաժանորդագրության վերաբերյալ տեղեկություններ.....	14
Պարտատոմսերից ստացվող եկամուտների հարկման կարգի նկարագիրը.....	14
Պարտատոմսերի սեփականատերերի հիմնական իրավունքները և պարտականությունները.....	15
Պարտատոմսերի հաշվառմամբ զբաղվող կազմակերպություններ.....	15
Շուկա ստեղծողի մասին տեղեկություններ	15
Թողարկման նպատակը.....	15
ԲԱՆԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	16
Ընդհանուր տեղեկություններ	16
Բանկի պատմությունը և զարգացումը	16
Ֆինանսական և այլ խմբերի վերաբերյալ տեղեկություններ.....	16
Բանկի մասնաճյուղերն ու ներկայացուցչությունները	16
Թողարկողի առողիտն իրականացնող անձինք.....	18
Փորձագետների մասնագիտական կարծիքը և այլ անձանցից ստացված տեղեկությունները.....	18
Պարտատոմսերով նախատեսված պարտավորությունների երաշխավորողի վերաբերյալ տեղեկություններ	18
Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի չափը.....	18
Բանկի գործունեության մասին տեղեկություններ	18
Ռիսկային գործոններ	18
Բանկի գործունեության հիմնական ոլորտների նկարագիրը	20
Այն անձանց անվանացանկը, որտեղ Բանկը, ներառյալ նրա դուստր ընկերությունները, բաժնային արժեթղթերի նշանակալից մասնակից են.....	24
Հարկային արտոնություններ.....	24
Դատական և իրավական ընթացակարգը.....	24
Փոխկապակցված գործարքների վերաբերյալ տեղեկություններ	25
Թողարկողի նախատեսվող գործունեությունը և հեռանկարները.....	26
Բանկի ֆինանսական վիճակի և գործունեության արդյունքների վերաբերյալ տեղեկություններ.....	27
Ֆինանսական հաշվետվություններ	27
Ֆինանսական վիճակի, գործունեության արդյունքների փոփոխությունների վերաբերյալ տեղեկություններ	27
Բանկի ֆինանսական գործունեությունը.....	27
Շահույթի կանխատեսումը և գնահատումը.....	28
Բանկի կառավարման մարմինների և կառավարմանը մասնակցող անձանց վերաբերյալ տեղեկություններ.....	32
Ընդհանուր տեղեկություններ կառավարման մարմինների վերաբերյալ.....	32
Բանկի հետ փոխկապակցված անձանց, թողարկողի նշանակալից մասնակիցների վերաբերյալ տեղեկություններ.....	40
Բանկի հետ փոխկապակցված անձանց մասին տեղեկություններ.....	40
Բանկի նշանակալից մասնակիցների վերաբերյալ տեղեկություններ.....	46
Բանկի կողմից թողարկված արժեթղթերի վերաբերյալ տեղեկություններ	46

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Սույն ամփոփաթերթը դիտվում է որպես ազդագրի ներածական համառոտ նկարագրություն, առաջարկվող արժեթղթերում ներդրում անելու վերաբերյալ ներդրողի որոշումը պետք է հիմնված լինի ամբողջական ազդագրի վրա:

1) «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի (ասյուիետ նաս Բանկ) թողարկած պարտատոմսերը անվանական, ոչ փաստաթղթային, արժեկտրոնային, ինվեստիցիոն /ներդրումային/ պարտատոմսեր են և պետք է տեղաբաշխվեն մեկից ավելի տրանշներով:

Բանկի կողմից թողարկած պարտատոմսերի ընդհանուր անվանական ծավալը կազմում է 1.500.000.000 (մեկ միլիարդ հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ՝ 50.000 (հիսուն հազար) հատ՝ յուրաքանչյուրը 30.000 (երեսուն հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով: Առաջին տրանշով տեղաբաշխվող պարտատոմսերի անվանական ծավալը կազմում է 300.000.000 (երեք հարյուր միլիոն) ՀՀ դրամ՝ 30.000 ՀՀ դրամ անվանական արժեքով, 10.000 հատ անվանական, արժեկտրոնային, ոչ փաստաթղթային պարտատոմս:

Պարտատոմսերի առաջին տրանշի տեղաբաշխումն սկսվում է սույն Ծրագրային Ազդագրի ՀՀ կենտրոնական բանկի կողմից գրանցելուց տաս աշխատանքային օր հետո: Պարտատոմսերի երկրորդ և յուրաքանչյուր հաջորդ տրանշի տեղաբաշխումն սկսվում է «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 11-րդ մասով նախատեսված լրացումը ՀՀ կենտրոնական բանկի կողմից գրանցելուց տաս աշխատանքային օր հետո:

Պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխման ավարտը համարվում է տեղաբաշխման սկզբից 30-րդ օրը ներառյալ: Եթե տվյալ օրը հանդիսանում է ոչ աշխատանքային, ապա տեղաբաշխման ավարտը համարվում է այդ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Պարտատոմսերի դիմաց վճարումները կատարվում են ՀՀ դրամով, ինչպես կանխիկ, այնպես էլ անկանխիկ ձևով՝ Բանկի դրամարկղ մուտք անելու կամ Կոնվերս Բանկ ՓԲԸ-ում բացված **1930035310040100** բանկային հաշվին գումարը փոխանցելու միջոցով:

Պարտատոմսերի դիմաց վճարումները Գնորդները պետք է իրականացնեն Գնման հայտի տրման հետ միաժամանակ, իսկ վճարումների չափը որոշվում է գնվող պարտատոմսերի քանակը բազմապատկելով տեղաբաշխման տվյալ օրվա գնով:

Պարտատոմսերի մարման օրը տեղաբաշխման սկսման օրվան հաջորդող 36-րդ ամսվա համապատասխան օրն է (պարտատոմսերի շրջանառության ժամկետը 3 տարի է):

Պարտատոմսերի վաղաժամկետ մարում չի նախատեսվում:

Պարտատոմսերով նախատեսված պարտավորությունների կատարումն ապահովող միջոցներ նախատեսված չեն, քանի որ վերջիններս առանց ապահովման են:

Պարտատոմսերի տեղաբաշխման գինը որոշվելու է համաձայն հետևյալ բանաձևի.

$$P = \frac{N}{\left(1 + R \times \frac{t}{365}\right)} \times \left\{ c \times \frac{m}{365} \times \sum_j^n \frac{1}{\left(1 + R \times \frac{m}{365}\right)^{j-1}} + \frac{1}{\left(1 + R \times \frac{m}{365}\right)^{n-1}} \right\}$$

որտեղ.

P – պարտատոմսի գինն է,

N – պարտատոմսի անվանական արժեքն է,

R – պարտատոմսի դիմաց վճարվող տարեկան տոկոսադրույքի բացարձակ արժեքն է,

m – տվյալ եռամսյակի օրերի քանակն է, (արժեկտրոնների վճարումը իրականացվելու է եռամսյակային պարբերականությամբ),

t – Մինչև տվյալ արժեկտրոնի վճարումը մնացած օրերի քանակն է,

c – տարեկան վճարվող արժեկտրոնային տոկոսադրույքն է,

n - արժեկտրոնի վճարումների քանակն է և հավասար է 12-ի,

j – արժեկտրոնի տվյալ հերթական համարն է, որը փոխվում է կախված տվյալ պահից մինչև վերջնական մարումը մնացած արժեկտրոնների վճարումների քանակից, և ընդունում է 1-ից 12 արժեքները:

Թողարկված պարտատոմսերի երկրորդ և հերթական յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխման ծավալը որոշվում է ելնելով շուկայական պահանջարկից և սահմանվում է Բանկի համապատասխան լիազորություններ ունեցող Կառավարման մարմնի կողմից:
Յուրաքանչյուր տրանշի պարտատոմսերի գինը տեղաբաշխման ողջ ընթացքի համար Բանկը պարտավորվում է հրապարակել իր ինտերնետային էջում՝ www.conversebank.am:

Պարտատոմսերի դիմաց վճարվող արժեկտրոնը հաշվարկում է եռամսյակային պարբերականությամբ՝ տեղաբաշխման սկսման օրվան հաջորդող 3-րդ, 6-րդ, 9-րդ, 12-րդ, 15-րդ, 18-րդ, 21-րդ, 24-րդ, 27-րդ, 30-րդ, 33-րդ և 36-րդ ամսվա համապատասխան օրերին:

Պարտատոմսերի դիմաց վճարվող արժեկտրոնի չափը հաշվարկում է հետևյալ բանաձևով.

$$A = \frac{N \times c}{100} \times \frac{m}{365}$$

որտեղ.

- A – յուրաքանչյուր տարի վճարվող արժեկտրոնի չափն է,
- N – Պարտատոմսի անվանական արժեքն է,
- c – տարեկան վճարվող արժեկտրոնային տոկոսադրույքն է,
- m – տվյալ եռամսյակի օրերի քանակն է:

Պարտատոմսերի առաջին տրանշի վճարվող արժեկտրոնի տոկոսադրույքը (c) **10.64 %** է:

Համաձայն «ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԲԱՆԿԱՅԻՆ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ ԵՐԱՇԽԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ օրենքի 2-րդ հոդված 1-ին մասին գ) կետի Բանկի կողմից թողարկված անվանական արժեթղթերով ներգրավված դրամական միջոցները համարվում են բանկային ավանդ: Ուստի ֆիզիկական անձանց, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերի ներդրումները Բանկի կողմից թողարկված անվանական պարտատոմսերում ինչպես նաև պարտատոմսերից ստացվող տոկոսները երաշխավորված են մինչև 2 մլն ՀՀ դրամի չափով՝ համաձայն նշված օրենքի 3-րդ հոդված 1-ին մասի ա կետի:

Որպես Ընկերության պարտատոմսերի տեղաբաշխող հանդես կգա «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերությունը (Ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիա՝ ՆԸ 6)՝ հասցեն ՀՀ, ք. Երևան 0002, Ամիրյան փողոց 27 գրասենյակ 14, հեռ. (37410) 50-15-27, 50-15-27, որը գործում է պայմանագրի հիման վրա:

Պարտատոմսեր ձեռք բերելու համար Գնորդը Բանկ է ներկայացնում Հայտ և միաժամանակ կատարում է համապատասխան վճարումը կամ ներկայացնում է համապատասխան վճարումը հավաստող փաստաթուղթ:

- Գնման հայտը առնվազն պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները
 - *իր անունը և ազգանունը, անձնագրային տվյալները, բնակության վայրը, ստորագրությունը (իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը, գտնվելու վայրը, իրավասու /լիազորված/ անձի ստորագրությունը).*
 - *ձեռք բերվող պարտատոմսերի քանակը.*
 - *Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայում կամ այլ լիցենզավորված պահառուի մոտ բացված անձնական հաշվի համարը.*

Պարտատոմսերում ներդրում կատարող անձը կարող է եկամուտ ստանալ հետևյալ դեպքերում՝

- պարտատոմսերի դիմաց ստացվող տոկոսից,
- մինչև մարումը վաճառքի և գնման գների դրական տարբերությունից (կապիտալի հավելում):

Բանկի թողարկած պարտատոմսերից ստացվող եկամուտը ենթակա է հարկման շահութահարկով (իրավաբանական անձանց համար) և եկամտահարկով (ֆիզիկական անձանց համար):

Պարտատոմսերի պահպանումն ու հաշվառումն իրականացվելու է Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա ԲԲԸ-ում՝ ըստ համապատասխան կարգի:

Պարտատոմսերի նկատմամբ իրավունքների և պարտականությունների հաշվառումը իրականացնելու է «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ն. հասցեն՝ ՀՀ, 0010, ք. Երևան, Սիեր Սկրտչյան Տք, հեռ. (37410) 566-446, 520-978:

Որպես Ընկերության պարտատոմսերի շուկա ստեղծող՝ պարտատոմսերի երկրորդային շուկայում, հանդես կգա «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերությունը (Ներդրմային ծառայությունների մատուցման լիցենզիա՝ ՆԸ 6)՝ հասցեն ՀՀ, ք. Երևան 0002, Ամիրյան փողոց 27 գրասենյակ 14, հեռ (37410) 50-15-26, 50-15-27, որը գործում է պայմանագրի հիման վրա:

Պարտատոմսերի թողարկումից ստացված գումարը հանդիսանալու է լրացուցիչ ռեսուրս բանկի կողմից տրամադրվող վարկերի ծավալները ավելացնելու համար:

Պարտատոմսերում ներդրումը կապված է որոշակի ռիսկերի հետ: Պոտենցիալ ներդրողը, մինչև պարտատոմսերում ներդրում կատարելու մասին որոշում ընդունելը, պետք է շրջահայաց լինի և հաշվի առնի ստորև բերված ռիսկերը և սույն ազդագրում ներառված այլ տեղեկատվությունը: Ստորև նշված ռիսկերը կամ դրանց մի մասը կարող են բացասաբար անդրադառնալ պարտատոմսերի առավանգանքի գների վրա, և որպես արդյունք՝ հանգեցնել նրան, որ ներդրողը կարող է կորցնել ներդրված գումարը կամ դրա մի մասը:

Պոտենցիալ ներդրողը պետք է գիտակցի, որ ստորև բերված ռիսկերը ոչ բոլոր ռիսկերն են, որ թողարկողը կարող է երբևէ կրել: Թողարկողը բացահայտել է միայն այն ռիսկերը, որոնք նա համարել է էական: Ենթադրաբար կարող են լինել լրացուցիչ ռիսկեր, որոնք թողարկողն այժմ չի համարում էական կամ, որոնք ներկայումս հայտնի չեն, և ցանկացած այդպիսի ռիսկ կարող է թողնել վերևում նշված ազդեցությունն ու հետևանքը:

Պարտատոմսերի հետ կապված ռիսկեր: Հայաստանի ֆինանսական շուկայում առկա տոկոսադրույքների տատանումը կարող է բացասաբար ազդել պարտատոմսերի եկամտաբերության և իրացվելության ցուցանիշների վրա:

Ներդրողները պետք է խորհրդակցեն իրենց իրավաբանների հետ պարզելու համար, թե արդյոք պարտատոմսերում ներդրումը հանդիսանում է իրավաբանորեն թույլատրելի ներդրում, և ինչպես ու ինչ ձևով պարտատոմսերը կարող են օգտագործվել որպես գրավի առարկա զանազան փոխառությունների համար: Դեռ ավելին, ֆինանսավարկային կազմակերպությունները պետք է խորհրդակցեն իրենց իրավաբանների կամ կարգավորող մարմինների հետ պարզելու համար պարտատոմսերով գործաքնների համապատասխանությունը՝ ակտիվների ռիսկերի կշռման կամ կիրառելի նմանատիպ այլ կանոններին:

Բանկի գործունեության հետ կապված ռիսկեր: Հայաստանում շարունակական բնույթ են կրում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները: Որպես զարգացող շուկա, Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Հետևաբար Հայաստանում ծավալված գործունեությունը կապված է որոշակի ռիսկերի հետ, որոնք բնորոշ չեն զարգացած երկրների շուկաներին: Նման ռիսկերը և դրանցից բխող հետևանքները կարող են ազդեցություն թողնել Բանկի ապագա գործունեության վրա: Բանկային գործունեությանը բնորոշ է ֆինանսական ռիսկերի բազմազանություն և այդ գործունեությունը ենթադրում է ռիսկերի որոշակի աստիճանի և համադրությունների վերլուծություն, գնահատում, ընդունում և կառավարում: Ռիսկի կրումը ֆինանսական գործունեության անբաժանելի մասն է, և գործառնական ռիսկերը գործունեության անխուսափելի հետևանքն են: Այդուհանդերձ, Բանկի նպատակն է հասնել ռիսկերի և օգուտների միջև համապատասխան հավասարակշռության և նվազագույնի հասցնել Բանկի ֆինանսական վիճակի վրա անցանկալի ազդեցությունները:

Կարևորագույն ռիսկերն են վարկային ռիսկը, իրացվելիության ռիսկը, շուկայական ռիսկը և այլ գործառնական ռիսկեր: Շուկայական ռիսկը ներառում է փոխարժեքների, տոկոսադրույքների և այլ գնային ռիսկերը:

Ռիսկերի վերաբերյալ տեղեկությունները առավել մանրամասն ներկայացված են էջ 16-ում:

2) Թողարկողի վերաբերյալ տեղեկություններ

ա. Ընկերության ֆիրմային լրիվ անվանումն է՝

հայերեն - «Կոնվերս Բանկ» փակ բաժնետիրական ընկերություն
ռուսերեն - закрытое акционерное общество “Конверс Банк”
անգլերեն - “Converse Bank” closed joint-stock company:

բ. «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ն Հայաստանի առաջատար բանկերից մեկն է: Բանկի հիմնական նպատակն է կապիտալի շարունակական, հուսալի տեղաբաշխումը, ինչպես նաև բանկի հաճախորդներին ժամանակին որակյալ բանկային ծառայությունների մատուցումը: Հաճախորդների և գործընկերների շնորհիվ «Կոնվերս Բանկը» վերջին երկու տարվա ընթացքում հինգ անգամ ընդլայնել է իր հաճախորդների քանակը: Բանկի

հավասարակշռված քաղաքականությունը կայունության, ինչպես նաև ֆինանսատնտեսական բարձր ցուցանիշների գրավականն է:

Անձնակազմի բարձր պրոֆեսիոնալիզմը Բանկին թույլ է տալիս արագ արձագանքել շուկայական ենթակառուցվածքում առկա փոփոխություններին, կենտրոնացնել և ուղղել անհրաժեշտ դրամական միջոցները առավել հեռանկարային ուղղություններով: Բանկի առաջնային ուղղություններից են՝ նոր բանկային տեխնոլոգիաների կիրառումը, ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ հաճախորդների կապիտալի հուսալի տեղաբաշխումը, վերջիններիս բանկային ծառայությունների ամբողջական փաթեթի առաջարկումն ու տրամադրումը:

Տարեցտարի Բանկի զարգացմանը և ընդլայնմանը գուզընթաց ավելացել է նաև Բանկի աշխատակիցների քվաքանակը: Այսօրվա դրությամբ Բանկն ունի 463 աշխատակից:

գ. Ստորև ներկայացված աղյուսակը հնարավորություն կտա համառոտ պատկերացում կազմել Բանկի գործունեության արդյունքների մասին:

ԱՆՎԱՆՈՒՄԸ	2005 թ.	2006 թ.	2007 թ.	30.09.2008 թ.
ԱԿՏԻՎՆԵՐ	41704089	35532090	58591201	66826197
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	33256451	25950845	47575086	53859466
ԿԱՊԻՏԱԼ	8447638	9581245	11016115	12966731
Ջուտ տոկոսային եկամուտ	1629287	2056178	2487575	2614096
Գործառնական եկամուտ (զուտ կոմիսիոն վճարները ներառյալ)	2678872	2166373	1018607	4750529
Շահույթ/(վնաս) հարկումից առաջ	2207704	1867461	1844715	2367975
Շահույթ (վնաս) հարկումից հետո	1722527	1412286	1444397	1921417
Ակտիվների ծախսաբերության գործակիցը (ROA, %)	4.13%	3.97%	2.47%	2.88%
Սեփական կապիտալի շահութաբերության գործակիցը (ROE, %)	20.39%	14.74%	13.11%	14.82%

դ. Բանկի կառավարման մարմիններն են՝

- բաժնետերերի ընդհանուր ժողովը,
- Բանկի խորհուրդը,
- Բանկի Գործադիր տնօրենը և Բանկի վարչությունը:

Կառավարմանը մասնակցող անձինք են՝

Արմեն Տեր-Տաճատյան (Խորհրդի նախագահ), Ջուան Պաբլո Գեչիդջյան (Խորհրդի անդամ), Ջեյմս Ռիչարդ Չիկ (Խորհրդի անդամ), Ադամ Տոնիկյան (Խորհրդի անդամ), Մաթիաս Գեյնգա Էրնեկյան (Խորհրդի անդամ), Արարատ Դուկասյան (Գործադիր տնօրեն), Ռուբեն Կոպյան (Գործադիր տնօրենի տեղակալ), Տիգրան Դավթյան (Գործադիր տնօրենի տեղակալ), Սուրեն Ջոհրաբյան (Գործադիր տնօրենի տեղակալ), Արթուր Մխիթարյան (Գործադիր տնօրենի տեղակալ), Լիլիթ Յորդանյան (Ներքին վերահսկողության ծառայության պետ-Գլխավոր վերստուգիչ), Արշակ Կարախանյան (Գլխավոր հաշվապահ - հաշվապահական հաշվառման վարչության պետ), Սերգեյ Ջհանգիրյան (Ներքին վերահսկողության ծառայության անդամ), Տաճատ Խերանյան (Ներքին վերահսկողության ծառայության անդամ)

ե. Թողարկողի հետ փոխկապակցված անձինք և սեփականատերերն են՝

Բանկի կանոնադրական կապիտալը բաղկացած է սովորական և արտոնյալ բաժնետոմսերից: Բանկի բաժնետերերն են՝ «Ընդվանդ Գլոբալ Ինվեսթմենթս» ՍՊԸ-ն, սովորական բաժնետոմսերի (95.00%) և արտոնյալ բաժնետոմսերի (0.0%), և Հայաստանյազ Առաքելական Սուրբ Եկեղեցին, ի դեմս՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, սովորական բաժնետոմսերի (5%) սեփականատեր:

Բանկի հետ փոխկապակցված անձանց մասին ավելի մանրամասն ներկայացված է էջ 35-ում:

գ. «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի կողմից մինչ այժմ թողարկվել և տեղաբաշխվել է 12331 /տասներկու հազար երեք հարյուր երեսունմեկ/ հատ սովորական բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 100,000.00 /հարյուր հազար/ ՀՀ դրամ անվանական արժեքով, և 333 /երեք հարյուր երեսուներեք/ հատ արտոնյալ փոխարկելի բաժնետոմս

՝ յուրաքանչյուրը 100.00 /հարյուր/ ՀՀ դրամ անվանական արժեքով, որոնք էլ ձևավորում են Բանկի կանոնադրական կապիտալը:

Անվտիաթերթը կազմվել է գործադիր տնօրենի տեղակալի՝ Տիգրան Դավթյանի կողմից:

Անվտիաթերթի կազմման համար պատասխանատու անձը պատասխանատվություն է կրում անվտիաթերթում պարունակվող տեղեկատվության ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ լինելու համար (այդ թվում՝ թարգմանությանը վերաբերող մասով) միայն այն դեպքում, եթե այն ոչ ճշգրիտ, անհամատեղելի է ազդագրի մյուս մասերի հետ դիտարկելու դեպքում:

Բանկի կողմից հրապարակվող տեղեկությունները ներդրողը կարող է ձեռք բերել բանկի ինտերնետային էջում՝ www.conversebank.am:

ԹՈՂԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՍՄԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընդհանուր տեղեկություններ

ա. «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի (ասյուիետ նաև Բանկ) կողմից թողարկված պարտատոմսերը անվանական, ոչ փաստաթղթային, արժեկտրոնային, ինվեստիցիոն /ներդրումային/ պարտատոմսեր են:

բ. Բանկի կողմից թողարկված պարտատոմսերի ընդհանուր անվանական ծավալը կազմում է 1.500.000.000 (մեկ միլիարդ հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ՝ 50.000 (հիսուն հազար) հատ՝ յուրաքանչյուրը 30.000 (երեսուն հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով: Առաջին տրանշով տեղաբաշխվող պարտատոմսերի անվանական ծավալը կազմում է 300.000.000 (երեք հարյուր միլիոն) ՀՀ դրամ՝ 30.000 ՀՀ դրամ անվանական արժեքով, 10.000 հատ անվանական, արժեկտրոնային, ոչ փաստաթղթային պարտատոմս:

գ. Թողարկված և տեղաբաշխվող պարտատոմսերից յուրաքանչյուրի անվանական արժեքը 30.000 (երեսուն հազար) ՀՀ դրամ է:

դ. Թողարկված պարտատոմսերը փոխարկելի չեն:

ե. Պարտատոմսերի առաջին տրանշի տեղաբաշխումն սկսվում է սույն Ծրագրային Ազդագրի ՀՀ կենտրոնական բանկի կողմից գրանցելուց տասնաշխատանքային օր հետո: Պարտատոմսերի երկրորդ և յուրաքանչյուր հաջորդ տրանշի տեղաբաշխումն սկսվում է «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 11-րդ մասով նախատեսված լրացումը ՀՀ կենտրոնական բանկի կողմից գրանցելուց տասնաշխատանքային օր հետո:

Պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխման ավարտը համարվում է տեղաբաշխման սկզբից 30-րդ օրը ներառյալ: Եթե տվյալ օրը հանդիսանում է ոչ աշխատանքային, ապա տեղաբաշխման ավարտը համարվում է այդ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Պարտատոմսերի տեղաբաշխման նշված ժամկետների փոփոխություններ Բանկը չի նախատեսում:

զ. Պարտատոմսերի առաջարկի և տեղաբաշխման հետաձգման կամ չեղյալ ճանաչման հանգամանքներ կարող են հանդիսանալ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 20 և 21 հոդվածներով սահմանված հիմքերի առկայությունը: Մասնավորապես՝

1. Եթե տեղաբաշխողը կամ Բանկը տեղաբաշխման ընթացքում ներկայացնում է ազդագրի լրացում, որը կապված է ազդագրում ներառված տեղեկատվության էական փոփոխության, նոր էական հանգամանքի կամ փաստի ի հայտ գալու հետ, ապա նա ներդրողի պահանջով պարտավորվում է չեղյալ համարել ներդրողի տված ակցեպտը և հետ վերադարձնել բաժանորդագրության ընթացքում նրանից ստացված միջոցները կամ հետ գնել մինչև լրացման ներկայացումը ներդրողին վաճառված արժեթղթերը՝ առնվազն նրա կողմից արժեթղթերի ձեռքբերման գնով: Հետգնման պահանջը կարող է ներկայացվել ազդագրի լրացման հրապարակումից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում, ընդ որում՝ հետգնման պահանջը պետք է տեղաբաշխողին ներկայացվի գրավոր:

2. Տեղաբաշխման ընթացքը կարող է կասեցվել ՀՀ կենտրոնական բանկի որոշմամբ այն դեպքերում, եթե՝

- տեղաբաշխման ընթացքում խախտվել են հրապարակային առաջարկը կարգավորող իրավական ակտերի պահանջները.

- տեղաբաշխման ընթացքում չեն պահպանվել ազդագրում սահմանված հրապարակային առաջարկի պայմանները.

- ազդագիրը պարունակում է էական սխալներ և ապակոմունորոշիչ տեղեկություններ, կամ նրանում էական փաստ է բաց թողնված կամ խեղաթյուրված:

Այս դեպքում տեղաբաշխումը կարող է շարունակվել ԿԲ-ի թույլտվությամբ՝ հայտնաբերված խախտումներն ու բացթողումները վերացնելու դեպքում:

3. Կասեցման ժամկետի ավարտի պահից 1 աշխատանքային օրվա ընթացքում տեղաբաշխումը չշարունակվելու դեպքում տեղաբաշխողը պարտավոր է դադարեցնել տեղաբաշխումը եւ ներդրողներին վերադարձնել տեղաբաշխման ընթացքում ստացված միջոցները:

Տեղաբաշխումը չեղյալ ճանաչվելու դեպքում ներդրողների գումարները վերադարձվում են տեղաբաշխման չեղյալ ճանաչելու պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում՝ անկանխիկ եղանակով՝ պարտատոմսերի ձեռք բերման հայտերում (պայմանագրերում) ներդրողների կողմից նշված բանկային հաշիվների վրա փոխանցելու միջոցով:

Բանկը պարտավորվում է տեղաբաշխումը կասեցնելու և շարունակելու, տեղաբաշխումը դադարեցնելու և դրա ընթացքում ստացված միջոցները վերադարձնելու մասին տեղեկատվությունը հրապարակել իր ինտերնետային էջում՝ www.conversebank.am:

է. Պարտատոմսերի դիմաց վճարումները կատարվում են միանվագ, միայն ՀՀ դրամով, ինչպես կանխիկ, այնպես էլ անկանխիկ ձևով՝ Բանկի դրամարկղ մուտք անելու կամ Կոնվերս Բանկ ՓԲԸ-ում բացված **1930035310040100** բանկային հաշվին գումարը փոխանցելու միջոցով:

Պարտատոմսերի դիմաց վճարումները Գնորդները պետք է իրականացնեն Գնման հայտի տրման հետ միաժամանակ, իսկ վճարումների չափը որոշվում է գնվող պարտատոմսերի քանակը բազմապատկելով տեղաբաշխման տվյալ օրվա գնով:

ը. Պարտատոմսերի մարման օրը տեղաբաշխման սկսման օրվան հաջորդող 36-րդ ամսվա համապատասխան օրն է (պարտատոմսերի շրջանառության ժամկետը 3 տարի է):

Բանկը մարման օրվան նախորդող օրվա ժամը 18.00-ի դրությամբ Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիայից վերցնում է պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրից քաղվածք, որի հիման վրա պարտատոմսերի մարման օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պարտատոմսերի սեփականատերերին՝ նրանց բանկային հաշիվներին փոխանցելու միջոցով, վճարում է համապատասխան գումարները (պարտատոմսերի անվանական արժեքը): Միաժամանակ Բանկը հանձնարարական է տալիս Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիային՝ պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրից տրված քաղվածքում նշված քանակության պարտատոմսերը մարելու համար:

Պարտատոմսերի վաղաժամկետ մարում չի նախատեսվում:

թ. Պարտատոմսերով նախատեսված պարտավորությունների կատարումն ապահովող միջոցներ նախատեսված չեն, քանի որ վերջիններս առանց ապահովման են:

ժ. Պարտատոմսերի Առաջարկի ծրագիրը հաստատվել է «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի Խորհրդի կողմից 29.07.08թ. (արձանագրություն 10): Պարտատոմսերի առաջին տրանշի տեղաբաշխման մասին որոշումն ընդունվել է «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի Խորհրդի կողմից 03.11.08թ. Խորհրդի նիստի արձանագրություն թիվ 13:

Պարտատոմսերի տեղաբաշխման գինը որոշվելու է համաձայն հետևյալ բանաձևի.

$$P = \frac{N}{\left(1 + R \times \frac{t}{365}\right)} \times \left\{ c \times \frac{m}{365} \times \sum_j^n \frac{1}{\left(1 + R \times \frac{m}{365}\right)^{j-1}} + \frac{1}{\left(1 + R \times \frac{m}{365}\right)^{n-1}} \right\}$$

որտեղ.

P – պարտատոմսի գինն է,

N – պարտատոմսի անվանական արժեքն է

R – պարտատոմսի դիմաց վճարվող տարեկան տոկոսադրույքի բացարձակ արժեքն է

m – տվյալ եռամսյակի օրերի քանակն է, (արժեկտրոնների վճարումը իրականացվելու է եռամսյակային պարբերականությամբ)

t – Մինչև տվյալ արժեկտրոնի վճարումը մնացած օրերի քանակն է,

c – տարեկան վճարվող արժեկտրոնային տոկոսադրույքն է

n - արժեկտրոնի վճարումների քանակն է և հավասար է 12-ի,

j – արժեկտրոնի տվյալ հերթական համարն է, որը փոխվում է կախված տվյալ պահից մինչև վերջնական մարումը մնացած արժեկտրոնների վճարումների քանակից, և ընդունում է 1-ից 12 արժեքները:

Թողարկված պարտատոմսերի երկրորդ և հերթական յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխման ծավալը որոշվում է ելնելով շուկայական պահանջարկից և սահմանվում է Բանկի համապատասխան լիազորություններ ունեցող Կառավարման մարմնի կողմից:

Յուրաքանչյուր տրանշի պարտատոմսերի գինը տեղաբաշխման ողջ ընթացքի համար Բանկը պարտավորվում է հրապարակել իր ինտերնետային էջում՝ www.conversebank.am:

Պարտատոմսերից ստացվող եկամուտների վերաբերյալ տեղեկություններ

Պարտատոմսերի դիմաց վճարվող արժեկտրոնը հաշվարկում է եռամսյակային պարբերականությամբ՝ տեղաբաշխման սկսման օրվան հաջորդող 3-րդ, 6-րդ, 9-րդ, 12-րդ, 15-րդ, 18-րդ, 21-րդ, 24-րդ, 27-րդ, 30-րդ, 33-րդ և 36-րդ ամսվա համապատասխան օրերին:

Պարտատոմսերի դիմաց վճարվող արժեկտրոնի չափը հաշվարկում է հետևյալ բանաձևով.

$$A = \frac{N \times c}{100} \times \frac{m}{365}$$

որտեղ՝

A – յուրաքանչյուր տարի վճարվող արժեկտրոնի չափն է,

N – Պարտատոմսի անվանական արժեքն է,

c – տարեկան վճարվող արժեկտրոնային տոկոսադրույքն է,

m – տվյալ եռամսյակի օրերի քանակն է:

Բանկն արժեկտրոնների հաշվարկման օրվան նախորդող օրվա ժամը 18.00-ի դրությամբ Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիայից վերցնում է պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրից քաղվածք, որի հիման վրա պարտատոմսերի սեփականատերերին՝ նրանց բանկային հաշիվներին փոխանցելու միջոցով, վճարում է համապատասխան գումարները:

Արժեկտրոնի գումարը Բանկը վճարում է պարտատոմսերի սեփականատերերին արժեկտրոնի հաշվարկման օրվանից սկսած երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Պարտատոմսերի առաջին տրանշի վճարվող արժեկտրոնի տոկոսադրույքը (c) **10.64 %** է:

Ոչ ռեզիդենտ անձանց համար վճարումների առանձանահտկություններ սահմանված չեն:

Սահմանափակումների վերաբերյալ տեղեկություններ

ա. Պարտատոմսերի թողարկման ինչպես նաև պարտատոմսերում ներդրում կատարողների նկատմամբ Բանկի կանոնադրությամբ կամ պարտատոմսերի թողարկման մասին որոշմամբ սահմանափակումներ սահմանված չեն:

Միակ սահմանափակումը ներկայումս կարելի համարել այն, որ պարտատոմսերը Ֆոնդային բորսայում ցուցակվելուց հետո, պետք է շրջանառվեն միայն ֆոնդային բորսայում, համաձայն «Արժեթղթերի Շուկայի մասին» ՀՀ օրենքի 129-րդ հոդվածի և ՀՀ կենտրոնական բանկի 16.04.2008թ. քիվ 125-Ն որոշման:

բ. Պարտատոմսերի ձեռք բերման բաժանորդագրության առավելագույն և նվազագույն մեծություն սահմանված չէ:

Տեղեկություններ պարտատոմսերի տեղաբաշխմանը մասնակցող անձանց և նրանց մասնակցության չափի վերաբերյալ

Թողարկված պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացվելու է ինչպես Բանկի, այնպես էլ լիցենզավորված տեղաբաշխողի միջոցով:

Որպես Ընկերության պարտատոմսերի տեղաբաշխող հանդես կգա «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերությունը (Ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիա՝ ՆԸ 6)՝ հասցեն ՀՀ, ք. Երևան 0002, Ամիրյան փողոց 27 գրասենյակ 14, հեռ (37410) 50-15-27, 50-15-27, որը գործում է պայմանագրի հիման վրա: Տեղաբաշխողի վարձատրության չափը սույն տրանշի տեղաբաշխման համար կազմում է տեղաբաշխված պարտատոմսերի անվանական արժեքի 0.3%-ը: Տեղաբաշխողը պարտատոմսերի վաճառքի համար հիմք է ընդունում Բանկին ներկայացված Գնման հայտը կամ դրա պատճենը, իսկ գինը որոշվում է վերևում բերված բանաձևի միջոցով:

Տեղաբաշխողը՝ որպես բրոքեր, կնքում է պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման գործարքներ՝ գնորդներից /ներդրողներից/ առաջարկի ծրագրով սահմանված Բանկին ներկայացված Գնման Հայտերի հիման վրա համապատասխան հանձնարարագրեր է տալիս Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիային:

Տեղաբաշխողը գործադրելու է լավագույն ջանքեր (best efforts), պարտատոմսերը ներդրողներին տեղաբաշխելու համար:

Բաժանորդագրության վերաբերյալ տեղեկություններ

ա. Պարտատոմսեր ձեռք բերելու համար Գնորդը Բանկ է ներկայացնում Հայտ և միաժամանակ կատարում է համապատասխան վճարումը կամ ներկայացնում է համապատասխան վճարումը հավաստող փաստաթուղթ:

Գնման հայտը առնվազն պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները

- *իր անունը և ազգանունը, անձնագրային տվյալները, բնակության վայրը, ստորագրությունը (իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը, գտնվելու վայրը, իրավասու /լիազորված/ անձի ստորագրությունը).*

- *ձեռք բերվող պարտատոմսերի քանակը.*

- *Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայում կամ այլ լիցենզավորված պահառուի մոտ բացված անձնական հաշվի համարը.*

Պարտատոմսերի դիմաց վճարվող գումարը հաշվարկվում է վերը նշված բանաձևով հաշվարկված մեկ պարտատոմսի գինը բազմապատկելով ձեռք բերվող պարտատոմսերի քանակով՝ ընդ որում, եթե Գնման հայտի ներկայացումը և համապատասխան գումարի վճարումը կատարվել է մինչև տվյալ օրվա 16:00-ն ներառյալ, ապա պարտատոմսի գինը հաշվարկվում է տվյալ օրով: Ժամը 16:00-ից հետո ներկայացված Գնման հայտի համար վճարվող գումարի չափը հաշվարկվում է տվյալ օրվան հաջորդող աշխատանքային օրվա պարտատոմսի գնով:

Գնման Հայտերը բավարարվում են ըստ ներկայացման ժամկետի հերթականության:

բ. Գնորդների կողմից գնման հայտերը ներկայացնելուց հետո 12 ժամվա ընթացքում դրանք կարող են հետ կանչվել գնորդի կողմից:

գ. Եթե ներդրողի կողմից բաժանորդագրությունը հետ է կանչվում մասնակիորեն, ապա նախկինում ներկայացված հայտը համարվում է անվավեր և ներկայացվում է նոր հայտ:

Չբավարարված, ամբողջությամբ կամ մասնակի հետ կանչված հայտերի համապատասխան գումարները Բանկը վերադարձնում է գնորդներին 2 աշխատանքային օր հետո՝ գնորդների համապատասխան հաշիվներին փոխանցելու միջոցով:

Պարտատոմսերից ստացվող եկամուտների հարկման կարգի նկարագիրը

Պարտատոմսերում ներդրում կատարող անձը կարող է եկամուտ ստանալ հետևյալ դեպքերում՝

- պարտատոմսերի դիմաց ստացվող տոկոսից,

- մինչև մարումը վաճառքի և գնման գների դրական տարբերությունից (կապիտալի հավելում):

Բանկի թողարկած պարտատոմսերից ստացվող եկամուտը ենթակա է հարկման շահութահարկով (իրավաբանական անձանց համար) և եկամտահարկով (ֆիզիկական անձանց համար): Հայաստանի Հանրապետությունում շահութահարկ են վճարում ՀՀ-ում ստեղծված կազմակերպությունները և ոչ ռեզիդենտները (օտարերկրյա պետություններում ստեղծված կազմակերպությունները, ինչպես նաև միջազգային կազմակերպությունները և դրանց կողմից Հայաստանի Հանրապետությունից դուրս ստեղծված կազմակերպությունները): Ընդ որում՝ վերջիններիս համար հարկվող օբյեկտ է համարվում հայաստանյան աղբյուրներից ստացվող հարկվող շահույթը: Հարկվող շահույթը հարկատուի համախառն եկամտի և «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է: Շահութահարկի գումարը հաշվարկվում է հարկվող շահույթի նկատմամբ՝ 20 տոկոս դրույքաչափով: Ոչ ռեզիդենտ կազմակերպությունների համար շահութահարկը հաշվարկվում է այլ դրույքաչափով: Այսպես՝ եթե ոչ ռեզիդենտը հայաստանյան աղբյուրներից ստանում է պասիվ եկամուտներ (տոկոսներ, կապիտալի հավելում և այլն), ապա նրա հարկային գործակալը պարտավոր է գանձել շահութահարկ՝ 10 տոկոս դրույքաչափով:

ՀՀ-ում եկամտահարկ են վճարում ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք: Ընդ որում՝ ռեզիդենտ է համարվում այն ֆիզիկական անձը, որը հարկային տարում սկսվող կամ ավարտվող տասներկուամսյա ցանկացած ժամանակահատվածում գտնվել է Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր առմամբ 183 օր և ավելի, կամ ում կենսական շահերի կենտրոնը գտնվում է Հայաստանի Հանրապետությունում: Հարկվող եկամուտը հարկատուի համախառն եկամտի և «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի դրույթներին համաձայն իրականացված նվազեցումների դրական տարբերությունն է: Պարտատոմսերից կապիտալի

հավելաճից ստացված եկամուտները ենթակա չեն հարկման, իսկ տոկոսները հաշվառվում են համախառն եկամտում և հարկվում են 10 տոկոս դրույքաչափով:
Պարտատոմսերից ստացված եկամուտների հարկման կանոնները նույնն են ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար:
Ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց, ինչպես նաև ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց համար որպես հարկային գործակալ հանդես է գալիս Բանկը:

Պարտատոմսերի սեփականատերերի հիմնական իրավունքները և պարտականությունները

Պարտատոմսերի ձեռք բերմամբ պարտատոմսերի սեփականատերերը ստանում են հետևյալ իրավունքները.

- Ստանալ պարտատոմսով նախատեսված արժեկտրոնները և մարման գումարը:
- Բանկի կողմից պարտատոմսերի արժեկտրոնները և/կամ մարման գումարը սույն ծրագրով սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում ձեռնարկել պարտատոմսերի սեփականության իրավունքից բխող իր պահանջների բավարարման ուղղությամբ օրենքով թույլատրվող գործողություններ:
- Բանկի կողմից պարտատոմսերի արժեկտրոնները և/կամ մարման գումարը սույն ծրագրով սահմանված ժամկետից ուշացնելու հիմքով (սնանկ ճանաչվելու արդյունքում) դատական կարգով լուծարման դեպքում օգտվել օրենքով պարտատիրոջ իրեն վերապահված իրավունքներից:
- Իր ցանկությամբ օտարել պարտատոմսերը ֆոնդային բորսայում կամ արտաբորսայում՝ օրենքով սահմանված կարգով:
- Օրենքով սահմանված կարգով գրավադրել պարտատոմսերը:
- Օրենքով նախատեսված այլ իրավունքներ:

Պարտատոմսերի ձեռք բերմամբ սեփականատերերը պարտավորվում են ստանձնել հետևյալ պարտականությունները՝

- Մինչև պարտատոմսերի ձեռքբերումը Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայում կամ ՀՀ կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված պահառուի մոտ բացել արժեթղթերի անձնական հաշիվ:
- Կատարել պարտատոմսերի ձեռքբերումից, օտարումից և այլ գործողություններից ծագող դրամային և ոչ դրամային ցանկացած պարտավորություն:

Բանկի կողմից թողարկված պարտատոմսերում ֆիզիկական անձանց, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերի ներդրումները երաշխավորված են մինչև 2 մլն ՀՀ դրամի չափով, համաձայն «ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԲԱՆԿԱՅԻՆ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ ԵՐԱՇԽԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ օրենքի 2-րդ հոդված 1-ին մասին գ կետի և 3-րդ հոդված 1-ին մասին ա կետի:

Պարտատոմսերի հաշվառմամբ զբաղվող կազմակերպություններ

Պարտատոմսերի պահպանումն ու հաշվառումն իրականացվելու է Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա ԲԲԸ-ում՝ ըստ համապատասխան կարգի:

Պարտատոմսերի նկատմամբ իրավունքների և պարտականությունների հաշվառումը իրականացնելու է «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարի» ԲԲԸ-ն. հասցեն՝ ՀՀ, 0010, ք. Երևան, Սիեր Սկրտչյան 5բ, հեռ. (37410) 566-446, 520-978:

Բացի ՀԳ-ից, պարտատոմսերի սեփականատերերը կարող են այդ պարտատոմսերի իրավունքներն ու պարտավորությունները հաշվառել նաև օրենքով սահմանված կարգով լիցենզավորված այլ պահառուի մոտ՝ համապատասխան արժեթղթերի հաշիվ բացելու միջոցով: Պարտատոմսերի նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցվում է ՀՀ օրենսդրությամբ և պահառուի ներքին կանոնակարգերով սահմանված կարգով:

Շուկա ստեղծողի մասին տեղեկություններ

Որպես Ընկերության պարտատոմսերի շուկա ստեղծող՝ պարտատոմսերի երկրորդային շուկայում, հանդես կգա «Կասիտալ Ասեթ Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերությունը (Ներդրմային ծառայությունների մատուցման լիցենզիա՝ ՆԸ 6)՝ հասցեն ՀՀ, ք. Երևան 0002, Ամիրյան փողոց 27 գրասենյակ 14, հեռ (37410) 50-15-27, 50-15-27, որը գործում է պայմանագրի հիման վրա:

Թողարկման նպատակը

Պարտատոմսերի թողարկումից ստացված գումարը հանդիսանալու է լրացուցիչ ռեսուրս բանկի կողմից տրամադրվող վարկերի ծավալները ավելացնելու համար:

ԲԱՆԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընդհանուր տեղեկություններ

Բանկի պատմությունը և զարգացումը

ա. Ընկերության ֆիրմային լրիվ անվանումն է՝

հայերեն - «*Կոնվերս Բանկ*» փակ բաժնետիրական ընկերություն
ռուսերեն - *закрытое акционерное общество “Конверс Банк”*
անգլերեն - “*Converse Bank*” *closed joint-stock company*:

Բանկի կրճատ անվանումն է՝

հայերեն - «*Կոնվերս Բանկ*» ՓԲԸ
ռուսերեն - *ЗАО “Конверс Банк”*
անգլերեն - “*Converse Bank*” *CJSC*:

բ. Ընկերության կազմակերպական-իրավական ձևը՝ փակ բաժնետիրական ընկերություն (գրանցված 20.12.1993թ.): «Կոնվերս Բանկը» հանդիսանում է «Կոնվերս փայտտիրական բանկի» իրավահաջորդը, որն էլ իր հերթին հանդիսանում է «Հյուսիս-Հայկական» փայտտիրական բանկի իրավահաջորդը: Բանկը հիմնադրվել է 1993 թ. որպես «Հյուսիս-Հայկական» փայտտիրական բանկ: 1994թ. վերանվանվել է որպես «Կոնվերս բանկ» փայտտիրական բանկի, 1996 թվականի սեպտեմբերի 13-ին գրանցվել է որպես «Կոնվերս Բանկ» փակ բաժնետիրական ընկերություն:

գ. Ընկերությունը առաջին անգամ գրանցվել է 20.12.1993 թ. գրանցման վկայական թիվ 0164, գրանցման համարը 57, որպես «Հյուսիս-Հայկական» փայտտիրական բանկ: Որպես «Կոնվերս Բանկ» փակ բաժնետիրական ընկերություն՝ գրանցվել է 1996 թվականի սեպտեմբերի 13-ին: «Կոնվերս Բանկ» փակ բաժնետիրական ընկերություն գրանցվել է ՀՀ, ք.Երևան Վազգեն Սարգսյան 26/1 հասցեում, իսկ Բանկի գրանցող մարմին հանդիսանում Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկը: Բանկը փաստացի գործունեություն է իրականացնում 1993 թվականից:

Բանկի ֆիրմային անվանումը և ապրանքային /սպասարկման/ նշանը /լոգոտիպը/ պաշտպանված է ՀՀ նորմատիվ իրավական ակտերով և գրանցված է ՀՀ արտոնագրային վարչությունում /ֆիրմային անվանման գրանցման մասին 03.06.1999թ. որոշում, գրանցման համարը 107913, ապրանքային /սպասարկման/ նշանը գրանցված է նշանների գրանցման պետական մատյանում 19.12.2001թ., ապրանքային /սպասարկման/ նշանի գրանցման վկայական թիվ 6458/:

Բանկային գործունեության թիվ 57 Լիցենզիան Բանկը ստացել է 20.12.1993թ., իսկ լիցենզիայում փոփոխություններ կատարվել են 21.02.1995թ.-ին, 20.05.1996 թ.-ին, 31.12.1996 թ.-ին, 23.05.1997 թ.-ին, և 13.11.2001 թ.-ին:

Ֆինանսական և այլ խմբերի վերաբերյալ տեղեկություններ

Բանկը չի հանդիսանում որևէ ֆինանսական և այլ խմբերի ու միությունների անդամ:

Բանկի մասնաճյուղերն ու ներկայացուցչությունները

Կոնվերս Բանկն ունի 25 մասնաճյուղեր Երևանում և Հայաստանի տարբեր մարզերում:

Գլխամասային գրասենյակ գտնվում է ՀՀ, 0010, Երևան, Հանրապետության Հրապարակ, Վազգեն Սարգսյանի փ., 26/1 հասցեում, Հեռախոս՝ (374 10) 511200, 511211, Ֆաքս՝ (374 10) 511212
E-mail: post@conversebank.am:

"Նոր Նորք" մասնաճյուղ ՀՀ, 0056, Երևան, ՆորՆորք համայնք, Գալի պող. 12/10, Հեռախոս՝ (374 10) 644660	"Մոսկովյան" մասնաճյուղ ՀՀ, 0009, Երևան, Մաշտոցի 39/12 Հեռախոս՝ (374 10) 521526
"Կենտրոնական" մասնաճյուղ ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի 49 Հեռախոս՝ (374 10) 281015 Ֆաքս՝ (374 10) 230996	"Արտաշատ" մասնաճյուղ ՀՀ, 0701, ք. Արտաշատ, Օգոստոսի 23, փող. թիվ 117ա, Հեռախոս՝ (374 235) 22499, 22478
"Ավան" մասնաճյուղ ՀՀ, 0060, Երևան, Ավան, Հ. Հովհաննիսյան թաղ., "Ավան" ունիվերսալ Հեռախոս՝ (374 10) 614472, 614423	"Արմավիր" մասնաճյուղ ՀՀ, 0901, Արմավիրի շրջան, ք. Արմավիր, Երևանյան 22 ա, Հեռախոս՝ (374) 237 62273, 60742, 281433
"Արարատյան" մասնաճյուղ ՀՀ, 0006, Երևան, Բազրատունյաց 15 Գարեգին Նժդեհի հրապարակի տարածքում Հեռախոս՝ (374 10) 465006, 465007, 465008, 464477	"Մեծամոր" մասնաճյուղ ՀՀ, 0910, ք. Մեծամոր, Քղաքապետարանի շենք, 1-ին հարկ Հեռախոս՝ (374) 237 32070, 10 281833
"Զվարթնոց" մասնաճյուղ Երևան մ/օ "Զվարթնոց" 42 VIP սրահ Հեռախոս՝ (374 10) 593596	"Էջմիածին" մասնաճյուղ ՀՀ 1101, Արմավիրի մարզ, ք. Էջմիածին, Մաշտոցի 10, Հեռախոս՝ (374) 231 49000, 49005
"Ավիացիա" մասնաճյուղ Երևան մ/օ "Զվարթնոց" 42, մեկնան սրահ Հեռախոս՝ (374 10) 493197	Սևան" մասնաճյուղ ՀՀ, 1501, ք. Սևան, Ն ափրյան 153, Հեռախոս՝ (374) 261 25452
"Զվարթնոց օդանավակայան" մասնաճյուղ Երևան մ/օ "Զվարթնոց" 42, մեկնան սրահ Հեռախոս՝ (374 10) 493197, 493198	"Լոռի" մասնաճյուղ ՀՀ 2021 ք. Վանաձոր, Գ. Լուսավորչի 54 Հեռախոս՝ (374 322) 42912, 42118 Ֆաքս՝ (374 322) 42119
ՀՀ 2021 ք. Վանաձոր, Խորենացու 1գ Հեռախոս՝ (374) 322 42910, 41258 Ֆաքս՝ (374) 322 42916	"Չարենցավան" մասնաճյուղ ՀՀ 2501, Կոտայքի մարզ, ք. Չարենցավան, Խանջյան 21 Հեռախոս՝ (374) 226 41597
"Հրազդան" մասնաճյուղ ՀՀ 2302, Կոտայքի մարզ, ք. Հրազդան Միկոշրջան 104, 1-ին հարկ, Հեռախոս՝ (374) 223 34709, 24707 Ֆաքս՝ (374) 223 24707	"Աբովյան" մասնաճյուղ ՀՀ 2202, Կոտայքի մարզ, ք. Աբովյան Սահմանադրության հրապարակ 8 Հեռախոս՝ (374) 222 33080, 22025, 22035, 20690
"Նոր Հաճրն" մասնաճյուղ ՀՀ 2412, Կոտայքի մարզ, Չարենցի 8, ք. Նոր Հաճրն Հեռախոս՝ (374) 224 43810, 43840, 43830 Ֆաքս՝ (374) 224 43810	"Շիրակ" մասնաճյուղ ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի Օդանավակայանի սպասարահում գտնվող կրպակ Հեռախոս՝ (374 312) 42095
«Գյումրի» մասնաճյուղ ՀՀ, 3106, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Գ. Նժդեհի 4բ, Հեռախոս՝ (374 312) 42095, 41794 Ֆաքս՝ (374 312) 32654, 40629	"Իջևան" մասնաճյուղ ՀՀ, 4001 ք. Իջևան, Վալանսի փող. 6/1 Հեռախոս՝ (374) 263 40844, 40899
"Կումայրի" մասնաճյուղ ՀՀ, 3106, ք. Գյումրի, Խ. Հայրիկ Հեռախոս՝ (374 312) 35695, 35625, 35605, 35615	«Կիլիկիա» մասնաճյուղ ՀՀ 0001, Երևան, Հրազդանի կիրճ 4/1 Հեռախոս՝ (374 10) 519265, 519266, 519267, 519268
«Սայաթ Նովա» մասնաճյուղ ՀՀ 0001, Երևան, Սայաթ-Նովա 19 Հեռախոս՝ (374 10) 546053, 546056, 546057	

Թողարկողի առդիտն իրականացնող անձինք

ա. Վերջին երեք տարիների ընթացքում Բանկի առդիտն իրականացրել է «Գրանտ Թորնթոն Ամիո» Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերությունը՝ հասցեն ՀՀ, 0012, ք. Երևան, Վաղարշյան 8/1, հեռ. (374 10) 260964, ֆաքս: (374 10) 260961:

բ. Ազդագրի գրանցման ներկայացմանը մախորդող վերջին 3 տարվա ընթացքում թողարկողի առդիտն իրականացրած անձանց կողմից աշխատանքից հրաժարման, վերընտրությանը չմասնակցելու, աշխատանքից ազատման դեպքեր չեն եղել:

Փորձագետների մասնագիտական կարծիքը և այլ անձանցից ստացված տեղեկությունները

Թողարկողը չունի փորձագետ կամ խորհրդատու, որոնց մասնագիտական կարծիքն օգտագործվել է սույն ազդագրում:

Պարտատոմսերով նախատեսված պարտավորությունների երաշխավորողի վերաբերյալ տեղեկություններ

Պարտատոմսերով նախատեսված պարտավորությունների երաշխավորող չկա, քանի որ տեղաբաշխվող պարտատոմսերը առանց ապահովման են:

Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի չափը

Թողարկողի կանոնադրական կապիտալը 1.233.133.300 (մեկ միլիարդ երկու հարյուր երեսուներեք միլիոն հարյուր երեսուներեք հազար) ՀՀ դրամ է: Բանկի կանոնադրական կապիտալը բաղկացած է 12331 հատ սովորական բաժնետոմսերից, յուրաքանչյուրը 100.000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով, 333 հատ արտոնյալ փոխարկելի բաժնետոմսերից, յուրաքանչյուրը 100 (մեկ հարյուր) ՀՀ դրամ անվանական արժեքով: Ընկերության բոլոր բաժնետոմսերը տեղաբաշխված են, լրիվ վճարված և պատկանում են Բանկի բաժնետերերին:

Վերջին երեք տարիների ընթացքում կանոնադրական կապիտալի փոփոխություն տեղի չի ունեցել:

Չվճարված բաժնետոմսեր չկան:

Ընկերությունը կանոնադրական կապիտալի մեծացման վերաբերյալ նոր մտադրություններ չունի:

Բանկի գործունեության մասին տեղեկություններ

Ռիսկային գործոններ

Պարտատոմսերում ներդրումը կապված է որոշակի ռիսկերի հետ: Պոտենցիալ ներդրողը, մինչև պարտատոմսերում ներդրում կատարելու մասին որոշում ընդունելը, պետք է շրջահայաց լինի և հաշվի առնի ստորև բերված ռիսկերը և սույն ազդագրում ներառված այլ տեղեկատվությունը: Ստորև նշված ռիսկերը կամ դրանց մի մասը կարող են բացասաբար անդրադառնալ պարտատոմսերի առուվաճառքի գների վրա, և որպես արդյունք՝ հանգեցնել նրան, որ ներդրողը կարող է կորցնել ներդրված գումարը կամ դրա մի մասը:

Պոտենցիալ ներդրողը պետք է գիտակցի, որ ստորև բերված ռիսկերը ոչ բոլոր ռիսկերն են, որ թողարկողը կարող է երբևէ կրել: Թողարկողը բացահայտել է միայն այն ռիսկերը, որոնք նա համարել է էական: Ենթադրաբար կարող են լինել լրացուցիչ ռիսկեր, որոնք թողարկողն այժմ չի համարում էական կամ, որոնք ներկայումս հայտնի չեն, և ցանկացած այդպիսի ռիսկ կարող է թողնել վերևում նշված ազդեցությունն ու հետևանքը:

Պարտատոմսերի հետ կապված ռիսկեր: Հայաստանի ֆինանսական շուկայում առկա տոկոսադրույքների տատանումը կարող է բացասաբար ազդել պարտատոմսերի եկամտաբերության և իրացվելության ցուցանիշների վրա:

Ներդրողները պետք է խորհրդակցեն իրենց իրավաբանների հետ պարզելու համար, թե արդյոք պարտատոմսերում ներդրումը հանդիսանում է իրավաբանորեն թույլատրելի ներդրում, և ինչպես ու ինչ ձևով պարտատոմսերը կարող են օգտագործվել որպես գրավի առարկա զանազան փոխառությունների համար: Դեռ ավելին, ֆինանսավարկային կազմակերպությունները պետք է խորհրդակցեն իրենց իրավաբանների կամ կարգավորող մարմինների հետ պարզելու համար պարտատոմսերով գործաքների համապատասխանությունը՝ ակտիվների ռիսկերի կշռման կամ կիրառելի մասնատիպ այլ կանոններին:

Բանկի գործունեության հետ կապված ռիսկեր: Հայաստանում շարունակական բնույթ են կրում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները: Որպես զարգացող շուկա, Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան

ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Հետևաբար Հայաստանում ծավալված գործունեությունը կապված է որոշակի ռիսկերի հետ, որոնք բնորոշ չեն զարգացած երկրների շուկաներին: Նման ռիսկերը և դրանցից բխող հետևանքները կարող են ազդեցություն թողնել Բանկի ապագա գործունեության վրա: Բանկային գործունեությանը բնորոշ է ֆինանսական ռիսկերի բազմազանություն և այդ գործունեությունը ենթադրում է ռիսկերի որոշակի աստիճանի և համադրությունների վերլուծություն, գնահատում, ընդունում և կառավարում: Ռիսկի կրումը ֆինանսական գործունեության անբաժանելի մասն է, և գործառնական ռիսկերը գործունեության անխուսափելի հետևանքն են: Այդուհանդերձ, Բանկի նպատակն է հասնել ռիսկերի և օգուտների միջև համապատասխան հավասարակշռության և նվազագույնի հասցնել Բանկի ֆինանսական վիճակի վրա անցանկալի ազդեցությունները:

Կարևորագույն ռիսկերն են վարկային ռիսկը, իրացվելիության ռիսկը, շուկայական ռիսկը և այլ գործառնական ռիսկեր: Շուկայական ռիսկը ներառում է փոխարժեքների, տոկոսադրույքների և այլ գնային ռիսկերը:

Վարկային ռիսկը` Բանկի գործունեությունը ենթարկվում է վարկային ռիսկի` կապված վարկառուի կողմից պարտավորության չկատարելու հետ, որը Բանկին կորուստներ կարող է պատճառել: Վարկային ռիսկը Բանկի կարևորագույն ռիսկն է, այդ պատճառով էլ Բանկն այն առանձնակի ուշադրությամբ է վերահսկում:

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերը կամ իրական արժեքը կտատանվի այնպիսի շուկայական փոփոխականների պատճառով, ինչպիսիք են տոկոսադրույքները և արտարժույթի փոխարժեքները:

Տոկոսադրույքի ռիսկը ծագում է այն հավանականությունից, որ տոկոսադրույքների փոփոխություններն ուղղակիորեն կազդեն Բանկի ֆինանսական գործիքների հետ կապված դրամական միջոցների հոսքի և նրանց իրական արժեքի վրա:

Արտարժույթի ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների արժեքը կտատանվի արտարժույթի փոխարժեքներում փոփոխությունների հետևանքով:

Իրացվելիության ռիսկը կապված է Բանկի ֆինանսական պարտավորությունները ժամանակին մարելու կարողությամբ նորմալ և սթրեսային իրավիճակներում:

Ռիսկերի ի հայտ գալու հավանականությունը ըստ առանձին ռիսկերի նշված է ստորև`

Վարկային ռիսկերի ի հայտ գալու հնարավորությունը`

ա/ պայմանավորված բանկի վարվող քաղաքականությամբ բերված է խելամիտ և միջազգային պրակտիկայում ընդունելի մակարդակի և համաձայնեցված է բանկի աճի և ֆինանսական արդյունքի հնարավորություններին: Վարկային քաղաքականությունով ընդունելի մակարդակը սահմանափակված է 5% խնդրահարույց վարկերի ցուցանիշով, որը փաստացի մի քանի անգամ ավելի փոքր է նախանշվածից:
բ/ պայմանավորված արտաքին գործոններով կախված է նաև ՀՀ և որոշ չափով` միջազգային տնտեսական զարգացումներով: Այնուամենայնիվ, բանկի վարկային քաղաքականությունով և ներքին այլ ակտերով դրված սահմանափակումները (հաճախորդի վարկունակություն, վարկի ապահովվածություն և նրա արժեքի շուկայական ռիսկերի սահմանափակումներ ու պարտադիր ապահովագրություն, այլ մոտեցումներ) թույլ են տալիս ենթադրելու վարկային ռիսկի նկատմամբ բանկի դիմակայելու բարձր ներուժը: Նախանշված վարկային պորտֆելի 5%-ից ավել խնդրահարույց վարկերի ցուցանիշի վերաբերյալ հնարավոր վատթարացման հավանականությունը ցածր է գնահատվում առաջիկա 2-3 տարիների համար:

Ներդրումային գործունեություն և դրանից ռիսկերի ի հայտ գալու հնարավորություն

Բանկի արժեթղթերի պորտֆելը հիմնականում ձևավորված է ՀՀ պետական պարտատոմսերի և ՀՀ ԿԲ արժեթղթերի հաշվին: Այլ առևտրային նպատակով պահվող և վաճառքի համար մատչելի ներդրումները սահմանափակ են և վերջին տարիներին էական կշիռ չեն կազմել բանկի հաշվեկշռում (մինչև ակտիվների 0.5-1%): Միջազգային շուկաներից բխող ռիսկերը ոչ էական ազդեցություն են ունեցել բանկի ընդհանուր ֆինանսական արդյունքի վրա: Ներդրումները արժեթղթերում առավելապես իրականացվել են իրացվելիության պաշարի ապահովման նպատակով, միաժամանակ ապահովելով բարձր իրացվելի ակտիվների արդյունավետ կառավարման նպատակը: Նշված քաղաքականության փոփոխություններ առաջիկայում չեն սպասվում, ՀՀ պետական արժեթղթերի շուկայի վատթարացման սպասումներ չեն նախանշվում, ուստի այս բնագավառում ռիսկերի սպասումները մոտ են գրոյական մակարդակի:

Շահութաբեր գործառնություններ և դրանցից ռիսկերի ի հայտ գալու հնարավորություն

Իր շահութաբեր գործառնությունները բանկը հիմնականում ծրագրում է և իրականացնում է պորտֆելային կառավարման մոտեցումով և առանձին ռիսկային և շահութաբեր գործառնությունների իրականացման պրակտիկա գրեթե չունի: Նման գործառնություններ իրականացնելու դեպքում բանկը իր ռիսկերը բերում է

նվազագույնի, իսկ էական ռիսկերի սպասումների դեպքում հրաժարվում է նմանատիպ գործառնություններից: Այս ռիսկի հավանականությունը մոտ է գրոյական մակարդակի:

Ֆինանսական դրությունը և դրանից ռիսկերի ի հայտ գալու հնրավորությունները

Վերջին տարիների Բանկի ֆինանսական դրությունը բնութագրվում է որպես կայուն և անընդհատ աճող՝ շահույթի շարունակական աճ, շահութաբերության բարձր մակարդակ, ռեսուրսների բազայի և վարկային ներդրումների շարունակական աճ: Ֆինանսական դրությունից բխող ռիսկեր չեն արձանագրվել և չեն սպասվում մոտ ապագայում: Դրանց ի հայտ գալու հավանականությունը ցածր է գնահատվում:

Բանկի գործունեության հիմնական ոլորտների նկարագիրը

ա. Բանկի հիմնական գործունեությունը վարկավորումը և ավանդների ընդունումն է, ՀՀ-ում և արտերկրներ փոխանցումների և փոխարկման գործարքների իրականացումը, ինչպես նաև իրավաբանական և ֆիզիկական անձանց արտարժույթային և այլ բանկային ծառայությունների մատուցումը:

Ընդհանուր բանկային համակարգը ՀՀ-ում կարելի է հակիրճ ներկայացնել հետևյալ մի քանի ցուցանիշներով՝

2008թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ ՀՀ բանկային համակարգի վարկային ներդրումների ծավալը կազմել է 608,2 միլիարդ ՀՀ դրամ, որը նախորդ ժամանակահատվածի (2008թ. հունիսի 30) համեմատ աճել է մոտ 13.7%-ով: Հաճախորդներին տրամադրված վարկային ներդրումների գծով զգալի աճ է արձանագրվել հետյալ բանկերի կողմից՝ «ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ-ի՝ 14,79 միլիարդ դրամի, «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի՝ 6,29 միլիարդ դրամի, «Ակբա-Կրեդիտ-Ագրիկոլ-Բանկ» ՓԲԸ-ի 5,49 միլիարդ դրամի և «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ի 5,29 միլիարդ դրամի:

Ընդհանուր բանկային համակարգում 2008թ. վերջին եռամսյակի ընթացքում հաճախորդների նկատմամբ պարտավորությունների ցուցանիշները աճել են 19,5 միլիարդ դրամով՝ 2008թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ՝ կազմելով 525,8 միլիարդ դրամ: Եռամսյակային աճը կազմել է 3.87%: Աճման ցուցանիշների մեջ մեծ տեսակարար կշիռ ունեն «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի՝ 84,1 միլիարդ դրամի աճը, «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ի 83,2 միլիարդ դրամի աճը, «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի 48,0 միլիարդ դրամի աճը, և «Յունիբանկ» ՓԲԸ-ի 48,0 միլիարդ դրամի աճը:

2008թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ ՀՀ բանկային համակարգի զուտ շահույթը կազմել է 19.8 միլիարդ դրամ, նախորդ ժամանակահատվածի (2008թ. հունիսի 30) համեմատ աճելով 64.3%-ով: Տարեկան կտրվածքով 30.09.2007թ. համեմատ զուտ շահույթը աճել է 3,0 միլիարդ դրամով, իսկ տարեկան աճը կազմել է 18.5%: Ծախույթի եռամսյակային աճի մեջ մեծ տեսակարար կշիռ ունեն «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ի 1,875 միլիարդ դրամի, «ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ-ի՝ 1,315 միլիարդ դրամի, «Ակբա-Կրեդիտ-Ագրիկոլ-Բանկ» ՓԲԸ-ի 1,139 միլիարդ դրամի և «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի՝ 1,124 միլիարդ դրամի աճը:

Ընդհանուր բանկային համակարգում «Կոնվերս Բանկ» ՓԲԸ իրականացրած գործունեությունը ներկայացվում է ստորև՝

Բանկի համար հիմնական գործունեության ոլորտներից է հանդիսանում վարկավորումը: «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ն տրամադրում է վարկեր իրավաբանական և ֆիզիկական անձանց ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ արտարժույթով: Վարկերի գծով մարումները կատարվում են այն արժույթով, որով տրամադրվել են, իսկ վարկերի գծով տոկոսները մարվում են ՀՀ դրամով /արտարժույթային վարկերի դեպքում՝ հաշվարկված մարման օրվա դրությամբ Բանկի կողմից սահմանված արտարժույթի փոխարժեքով/: Բանկը վարկեր է տրամադրում ինչպես սեփական միջոցներով, այնպես էլ միջազգային ծրագրերով ֆինանսավորմամբ:

Միջազգային ծրագրերով վարկավորում է իրականացնում է Համաշխարհային բանկի ծրագրերի և "Գերմանա-հայկական" հիմնադրամի ֆինանսավորմամբ:

Բանկը սեփական միջոցներով իրականացնում է՝

- Սպառողական վարկերի տրամադրում
- Տնտեսվարող սուբյեկտներին վարկերի տրամադրում
- Ապրանքների ապառիկ ձեռք բերման նպատակով ֆինանսավորում
- Սեկ անգամյա սպառողական վարկային քարտերի տրամադրում
- Վերականգնվող վարկային քարտերով վարկավորում
- Հիփոթեքային վարկերի տրամադրում

Բանկը մասնավորապես մասնագիտացված է փոքր և միջին բիզնեսի վարկավորման ծրագրերում: Այս կապակցությամբ Կոնվերս Բանկը հավատարմագրվել է Համաշխարհային բանկի կողմից Հայաստանում Փոքր և Միջին Բիզնեսի Ջարգացման Ծրագրի ֆինանսավորման շրջանակներում և «ԼԻՆՄԻ»

հիմնադրամի կողմից ՀՀ կառավարությանը տրամադրված Հայաստանում փոքր և միջին բիզնեսի զարգացման ծրագրի վարկավորման շրջանակներում:

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի գործունեության հիմնական ոլորտներից է ֆիզիկական և իրավաբանական անձանցից, ինչպես նաև անհատ ձեռնարկատերերից ավանդների ընդունումը:

Բանկը ավանդներ ընդունում է Հայաստանի Հանրապետության դրամով և արտարժույթով՝ ինչպես կանխիկ, այնպես էլ անկանխիկ ձևով: Ավանդների տոկոսների վճարումը կատարվում է կանխիկ և անկանխիկ տարբերակով՝ կախված հաճախորդի ցանկությունից: Հաշվարկված տոկոսների վճարումը կատարվում է ՀՀ դրամով:

Բանկն ավանդներ է ընդունում հետևյալ եղանակներով՝

- Սովորական
- Ավելացներու իրավունքով
- Երեխաների անունով կուտակային
- Խնայողական

Կոնվերս Բանկ ՓԲԸ առաջարկում է նաև հետևյալ ծառայությունները.

- Բոլոր տիպի հաշվարկային գործառնությունների իրականացում ՀՀ դրամով, ազատ փոխարկելի արտարժույթով և սահմանափակ փոխարկելի արտարժույթով,
- Բանկի հաշվետեր հաճախորդների հաշիվներից կոմունալ վարձավճարների ավտոմատ գանձում,
- Առքուվաճառքի գործարքի վճարման ապահովման (ակրեդիտիվ) ծառայություն,
- Հեռակառավարվող համակարգերի օգնությամբ հաճախորդների սպասարկում,
- Փոխանցումներ , որոնք իրականացվում են Թղթակցային հարաբերությունների լայն ցանցի շնորհիվ (CONTACT, MIGOM, BLIZKO, INTEREXPRESS, LEADER, ALLURE, ЗОЛОТАЯ КОРОНА),
- Պլաստիկ քարտերի սպասարկում,
- Պահատվություն,
- Անհատական պահարանների տրամադրում:

Ընդհանուր առմամբ Բանկի կողմից մատուցվող ծառայությունները ունեն զարգացման ընդհանուր դրական միտում:

բ. Հաշվի առնելով, որ Բանկի հիմնական եկամուտները ձևավորվում են միջոցների ներգրավման և տեղաբաշխման տարբերություններից, որը զուգորդվում է բանկային այլ բազմաբնույթ ծառայությունների մատուցմամբ, ստորև ներկայացվում են միջոցների ներգրավման և տեղաբաշխման ուղղությունները, ինչպես նաև վարկերի և ավանդների միջին գինը:

Վերջին երեք տարիների ընթացքում Բանկի կողմից տեղաբաշխված միջոցների հիմնական բնութագրիչները հետևյալն են՝

Տեղաբաշխման ուղղությունները	2005թ.		2006թ.		2007թ.		2008թ. III եռամսյակ	
	ծավալը (հազ. դրամ)	միջին %-ը	ծավալը (հազ. դրամ)	միջին %-ը	ծավալը (հազ. դրամ)	միջին %-ը	ծավալը (հազ. դրամ)	միջին %-ը
Վարկեր՝ այդ թվում	61,068,613	16.85%	43,137,944	17.15%	59,688,035	15.37%	38,056,898	14.33%
-բիզնեսի վարկավորում	40,670,178	18.42%	29,875,347	17.01%	35,199,135	14.21%	23,088,585	14.20%
-սպառողական վարկեր	3,439,517	18.76%	5,192,169	20.47%	16,535,182	17.77%	4,974,914	17.06%
- հիփոթեքային վարկեր	352,501	13.74%	477,811	26.25%	2,402,244	15.62%	4,751,392	12.44%
- ավտովարկ.	1,232,689	20.05%	707,437	17.73%	2,553,482	14.70%	3,214,937	14.87%
- այլ	7,719,058	7.77%	2,332,367	10.66%	2,997,993	12.66%	2,027,070	12.67%
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում	1,110,953	2.69%	156,401	4.50%	-	0.00%	0	0.00%
ՀՀ պետական և ՀՀ կենտրոնական բանկի արժեթղթերում	6,633,007	5.50%	8,456,188	5.65%	23,346,551	6.16%	4,104,437	7.91%

Վերջին երեք տարիների ընթացքում Բանկի կողմից ներգրավված միջոցների հիմնական բնութագրիչները հետևյալն են՝

Ներգրավման ուղղությունները	2005թ.		2006թ.		2007թ.		2008թ. III եռամսյակ	
	ծավալը (հազ. դրամ)	միջին %-ը	ծավալը (հազ. դրամ)	միջին %-ը	ծավալը (հազ. դրամ)	միջին %-ը	ծավալը (հազ. դրամ)	միջին %-ը
Ավանդներ՝ այդ թվում	1,196,566,816	0.31%	677,427,790	0.45%	499,717,257	0.74%	44,917,242	4.16%
- ժամկետային ավանդներ	30,301,308	5.30%	19,086,094	6.04%	27,020,714	6.31%	22,270,457	7.64%
- ցպահանջ ավանդներ	1,166,265,508	0.18%	658,341,696	0.29%	472,696,543	0.42%	22,646,785	0.73%
- այլ	-	0.00%	-	0.00%	-	0.00%	-	0.00%
Բանկերից և այլ ֆինանսական հաստատություններից	2,337,145	2.89%	1,056,370	5.17%	1,954,976	5.98%	1,932,278	7.84%

Բանկը կատարում է հաճախորդների վճարահաշվարկային սպասարկում և մատուցում է բանկային ցանկացած ծառայություն, որոնց մասին ցուցանիշները, դրանց շարժը ներկայացված է ստորև:

	31.12.05 դրությամբ	31.12.06 դրությամբ	31.12.07 դրությամբ	30.09.08 դրությամբ
Իրավաբանական անձ հաշվետների թիվ, անձ	2516	2047	2507	3451
Ֆիզիկական անձ հաշվետների թիվ, անձ	13134	16742	22339	50657
Ընթացիկ հաշիվների քանակը, հատ	21401	24456	33209	40107
Ժամկետային հաշիվների քանակը, հատ	1154	1839	2180	2170
Իրավաբանական անձանց կողմից արտերկիր ուղարկված գումարներ (մլն. ՀՀ դրամ)	5.2	6.0	8.7	21,043
Իրավաբանական անձանց անունով արտերկիր ստացված գումարներ (մլն. ՀՀ դրամ)	3.8	2.0	3.5	18,029
Ֆիզիկական անձանց կողմից արտերկիր ուղարկված գումարներ (SWIFT, Western Union, Migom և այլ) (մլն. ՀՀ դրամ)	1.1	1.2	1.8	6,162
Ֆիզիկական անձանց անունով արտերկիր ստացված գումարներ արտասահմանից (SWIFT, Western Union, Migom և այլ) (մլն. ՀՀ դրամ)	5.1	6.5	10.2	27,031

գ. Կոնվերս Բանկը գործունեությունը է իրականացնում Հայաստանի բանկային հատվածում: Հայաստանի բանկային սեկտորը վերջին տարիների ընթացքում գտնվում է զարգացման և վերելքի փուլում: Հայաստանի ֆինանսական շուկայի ակտիվների գերակշիռ մասը կենտրոնացած է բանկային սեկտորում: Բանկային հատվածի ակտիվների աճը 2006թ. կազմել է 19.5% (544.166 միլիարդ ՀՀ դրամին համարժեք), իսկ բանկային սեկտորի ակտիվների և ՀՆԱ-ի հարաբերությունը կազմել է 20.4%: 2007թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկային հատվածի ակտիվները կազմել է 784.1 մլրդ ՀՀ դրամ, իսկ 30.09.2008թ.՝ 966.7 մլրդ դրամ:

Վերջին երեք տարիների ընթացքում Կոնվերս Բանկի գրաված դիրքը մնացած 22 բանկերի համեմատ ըստ առանձին ուղղությունների ունի հետևյալ տեսքը՝

Դիրքը ըստ ուղղությունների	2005	2006	2007	2008 III եռամսյակ
Ակտիվներ	3-րդ	6-րդ	5-րդ	6-րդ
Կապիտալ	3-րդ	3-րդ	4-րդ	6-րդ
Վարկեր	4-րդ	9-րդ	5-րդ	6-րդ
Պարտավորություններ	4-րդ	6-րդ	5-րդ	6-րդ

	2005 թ.	2006 թ.	2007 թ.	2008 թ. III եռամսյակ
Շահութաբերության գործակիցներ				
Սեփական Կապիտալի Շահութաբերության գործակից (ROE)	20.39%	14.74%	12.51%	14.82%
Ակտիվների շահութաբերության գործակից (ROA)	4.13%	3.97%	2.33%	2.88%

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի մասնաբաժինը ՀՀ բանկային համակարգում ներկայացված է ստորև:

Բանկի մասնաբաժինը ՀՀ բանկային համակարգում

(հազ. դրամ)

		Ակտիվներ	Վարկային ներդրումներ	Պարտավորություններ	Ընդհանուր կապիտալ
31.12.2005 դրությամբ	Համակարգ	440674145	208144447	345913389	94760756
	ԲԱՆԿ	41377306	17904111	32974983	8402323
	%	9.39%	8.60%	9.53%	8.87%
31.12.2006 դրությամբ	Համակարգ	524634072	259290647	404362097	120271975
	ԲԱՆԿ	35421288	12388170	25193756	9627532
	%	6.75%	4.78%	6.23%	8.00%
31.12.2007 դրությամբ	Համակարգ	784079371	401719671	618037987	166041384
	ԲԱՆԿ	58591201	30177025	47565755	11025446
	%	7.47%	7.51%	7.70%	6.64%
30.09.2008 դրությամբ	Համակարգ	966700000	608293509	749300000	217300000
	ԲԱՆԿ	66826197	39283820	53859466	12966731
	%	6.91%	6.45%	7.19%	5.95%

դ. Բանկի հիմնական մրցակիցները

Բանկի մրցակիցները հանդիսանում են ՀՀ-ում գործունեություն ծավալող բոլոր առևտրային բանկերը, սակայն, ելնելով առևտրային բանկերի գործունեության հիմնական ուղղություններից և ցուցանիշներից, կարելի է ասել, որ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի հիմնական մրցակիցներն են հանդիսանում ԷյՋ-Էս-Բի-Սի Հայաստան Բանկը, Արդշինինվեստբանկը, ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկը, Հայէկոնոմբանկը, Յունիբանկը, ՎՏԲ-Հայաստան Բանկը:

30.09.08 դրությամբ Բանկի հիմնական մրցակիցների ցուցանիշները հետևյալներն են.

(հազ. դրամ)

	Ակտիվներ	Ընդհանուր Կապիտալ	Վարկային ներդրումներ	Պարտավորություններ
ԷյՋ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան	108 474 831	14 385 126	68 908 325	94 089 705
Արդշինինվեստբանկ	117 060 544	23 015 674	76 747 282	94 044 870
ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ	101 293 136	24 758 913	72 685 565	76 534 250
Յունիբանկ	68 015 091	8 595 130	46 486 449	59 419 961
ՎՏԲ-Հայաստան Բանկ	98 019 837	23 178 753	73 975 146	74 841 084
Հայէկոնոմբանկ	49 604 815	8 491 995	26 311 788	41 112 820

Հաշվի առնելով, որ բանկերի գործունեության առավել կարևոր ուղղություններ միջոցների ներգրավումը և դրանց տեղաբաշխումն է, ստորև ներկայացվում են «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի հիմնական մրցակիցների կողմից տրամադրած վարկերի և ներգրավված ավանդների գումարները և համապատասխանաբար դրանց բաժինը ընդհանուր բանկային հատվածում 2008 թվականի սեպտեմբերի 30-ի դրությամբ:

	Ավանդներ ¹		Վարկեր ²	
	ծավալը (հազ. դրամ)	բաժինը (%)	ծավալը (հազ. դրամ)	բաժինը (%)
ԷյՋ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան	84117048	15.99%	68908325	11.32%
Արդշինինվեստբանկ	83236935	15.83%	76747282	12.62%
ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ	28989842	5.51%	72685565	11.95%
Յունիբանկ	48013228	9.13%	46486449	7.64%
ՎՏԲ-Հայաստան Բանկ	38005370	7.23%	73975146	12.16%
Հայէկոնոմբանկ	22165838	4.22%	26311788	4.33%
Կոնվերս բանկ	48026148	9.13%	39283820	6.46%

Նոր մրցակիցների ի հայտ գալու վերաբերյալ տեղեկություններ չկան:

¹ Ավանդների գումարները իրենց մեջ ներառում են ժամկետային և ցայտահանց ավանդների, ինչպես նաև հաճախորդների հաշվարկային հաշիվներում առկա միջոցների համադրվածությունը (հաճախորդների նկատմամբ պարտավորություններ):

² Վարկերի գումարները իրենց մեջ ներառում են ինչպես տրամադրված վարկերը, այնպես էլ այդ վարկերի գծով հաշվեգրված տոկոսներն ու պարտադիր պահուստները (վարկային ներդրումներ):

ե. Նախորդ երեք տարիների ընթացքում, ինչպես նաև 2008 թվականի երեք եռամսյակներում Բանկի կողմից չեն կնքվել այնպիսի պայմանագրեր, որոնց գինը գերազանցում է Բանկի ակտիվների (31.12.2007թ. դրությամբ 58591201 հազ. դրամ) 5 տոկոսը (2 929 560 հազ դրամ):

Այն անձանց անվանացանկը, որտեղ Բանկը, ներառյալ նրա դուստր ընկերությունները, բաժնային արժեթղթերի նշանակալից մասնակից են

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ն նշանակալից մասնակցություն ունի հետևյալ ընկերությունում՝

ընկերության անվանումը	«Կոնվերսինկասագիա» ՍՊԸ
կազմակերպա-իրավական ձևը	սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
գտնվելու վայրը	ՀՀ, ք. Երևան, Կոմիտաս 49
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ին պատկանող բաժնային արժեթղթերի տեսակարար կշիռը (տոկոս)	96% բաժնեմաս
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի մասնակցության չափը (ՀՀ դրամ)	48000000

«Կոնվերսինկասագիա» ՍՊԸ-ն, հանդիսանալով «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի դուստր ընկերություն, որևէ այլ անձի բաժնային արժեթղթերի նշանակալից սեփականատեր չի:

Հարկային արտոնություններ

Բանկը չի օգտվում որևէ հարկային արտոնությունից:

Դատական և իրավական ընթացակարգը

Նախորդ 12 ամիսների ընթացքում Բանկի նկատմամբ դատարանի, պետական մարմինների կողմից կիրառված են հետևյալ պատասխանատվության միջոցները (վարչական, քաղաքացիաիրավական)՝

Պատասխանատվության միջոց կիրառող մարմնի անվանումը	պատասխանատվության ենթարկելու հիմքերը	տեսակը	չափը	կատարման աստիճանը
ՀՀ ԿԲ	24.09.2007թ-ի ՀՀ ԿԲ-ի ծանուցում 26.09.2007թ-ի ՀՀ ԿԲ-ի ծանուցման պատասխան 28.09.2007թ-ի ՀՀ ԿԲ-ի ծանուցման պատասխան /ի լրում 26.09.2007թ-ի ծանուցման պատասխանի/ 11.10.2007թ-ի ՀՀ ԿԲ-ի ծանուցում 11.10.2007թ-ի ՀՀ ԿԲ-ի ծանուցման պատասխան 19.10.2007թ-ի ՀՀ ԿԲ-ի ծանուցում 31.10.2007թ-ի ՀՀ ԿԲ-ի ծանուցման պատասխան 19.11.2007թ-ի ՀՀ ԿԲ-ի թիվ 1/117թգ-Ա որոշում՝ ՀՀ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 55 հոդվածի 4-րդ մասի, 60 հոդվածի բ) և ե) կետերի, ինչպես նաև «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի կողմից իրականացվող վարկավորման ընթացակարգի 8, 9, 11 -րդ կետերի պահանջները խախտելու համար:	նախազգուշացում՝ ապագայում խախտումը կանխելուն ուղղված միջոցառումներ ձեռնարկելու հանձնարարականով	-----	կատարված է
ՀՀ ԿԲ	22.05.2008թ-ի ՀՀ ԿԲ-ի ծանուցում 13.06.2008թ-ի ՀՀ ԿԲ-ի ծանուցման պատասխան 22.05.2008թ-ի ՀՀ ԿԲ-ի ծանուցում 02.06.2008թ-ի ՀՀ ԿԲ-ի ծանուցման պատասխան 27.06.2008թ-ի ՀՀ ԿԲ-ի ծանուցում 04.07.2008թ-ի ՀՀ ԿԲ-ի ծանուցման պատասխան 25.07.2008թ-ի ՀՀ ԿԲ-ի թիվ 1/35թգ-Ա որոշում՝ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի կողմից «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումն ու հրապարակումը» կանոնակարգ 3-ի 3-րդ, 273-րդ, 30-րդ կետերի և ՀՀ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 55 հոդվածի 4-րդ մասի պահանջները խախտման համար	նախազգուշացում՝ խախտումները բացառելուն ուղղված միջոցառումներ ձեռնարկելու հանձնարարականով	-----	կատարված է
ՀՀ ԿԲ	09.06.2008թ-ի ՀՀ ԿԲ-ի ծանուցում 10.06.2008թ-ի ՀՀ ԿԲ-ի ծանուցման պատասխան 30.07.2008թ-ի ՀՀ ԿԲ-ի ծանուցում 05.08.2008թ-ի ՀՀ ԿԲ-ի ծանուցման պատասխան 22.08.2008թ-ի ՀՀ ԿԲ-ի թիվ 1/56թգ-Ա որոշում՝ անարժանահավատ տեղեկություններ ներկայացնելու համար	նախազգուշացում՝ խախտումները բացառելուն ուղղված միջոցառումներ և ձեռնարկված միջոցառումների	-----	կատարված է

	18.09.2008թ. ՀՀ ԿԲ-ի պատասխան գրություն՝ հանձնարարականի կատարման վերաբերյալ	վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն գրավոր ձևով ԿԲ ներկայացնելու հանձնարարականով		
--	---	---	--	--

Բանկի դեմ սնանկության կամ լուծարային վարույթի կիրառման նախաձեռնություններ վերջին 12 ամսիների ընթացքում չի եղել:

Փոխկապակցված գործարքների վերաբերյալ տեղեկություններ

«Կոնվերս բանկ» ՓԲԸ վերջին 12 ամսիների ընթացքում իր հետ փոխկապակցված անձանց հետ իրականացված 2 մլն ՀՀ դրամը գերազանցող գործարքներից մի մասը համարվում են գաղտնի, և առանձին ներկայացվել են ՀՀ Կենտրոնական Բանկ: Իսկ հրապարակման ենթակա գործարքները ներկայացվում են ստորև.

Բանկը իր հետ փոխկապակցված մի քանի ֆիզիկական անձանց հետ կնքել է գործարքներ (մասնավորապես տրամադրել է վարկ), որոնց մասին տեղեկությունները ներկայացվում են ստորևբերված աղյուսակում:

Գործարքի մյուս կողմը	գործարքի առարկան	գործարքի արժեքը (հազ. դրամ) (վարկի մնացորդը 31.10.2008թ. -ի դրությամբ)	Վարկի հատկացման ժամկետ	Վարկի մարման ժամկետ	գործարքի ընդհանուր մասնաբաժինը թողարկողի եկամուտներում
ԿՈՊՅԱՆ ՈՌԻԲԵՆ ՄԻՀՐԱՆԻ	վարկի տրամադրում	44,240	18/03/2008	17/03/2023	0.931%
		20,645	25/03/2008	17/03/2023	0.435%
		7,959	14/04/2008	14/04/2011	0.168%
		9,049	06/08/2008	17/03/2023	0.190%
		622	06/10/2008	01/10/2010	0.013%
ՄԵԽԹԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ ՎԱԼԵՆՏԻՆԻ	վարկի տրամադրում	14,167	20/08/2008	06/08/2011	0.298%
		32,256	07/03/2008	07/03/2023	0.679%
ԶՈՂՐԱԲՅԱՆ ՍՈՒՐԵՆ ԱՐՇԱԿԻ	վարկի տրամադրում	36,663	06/03/2008	06/03/2023	0.772%
		3,000	06/06/2008	01/07/2009	0.063%
ՀՈՎՀԼՆՆԻՍՅԱՆ ՈՌԻԲԵՆ ՀԵՆՐԻԿԻ	վարկի տրամադրում	24,720	17/09/2008	07/09/2023	0.520%
		4,988	07/02/2008	07/02/2013	0.105%
		1,169	16/10/2007	15/10/2009	0.025%
ԳԱՎԹՅԱՆ ՏԻԳՐԱՆ ՇՉՈՐՄԻ	վարկի տրամադրում	9,723	08/09/2008	10/09/2011	0.205%
		2,752	29/05/2008	03/05/2010	0.058%
ԿՈՊՅԱՆ ՎԱՐԳԱՆ ՄԻՀՐԱՆԻ	վարկի տրամադրում	11,239	16/06/2008	16/06/2014	0.237%
ԳԵՉԻԳՋՅԱՆ ԶՈՒԱՆ ՊԱԲԼՈ	վարկի տրամադրում	2,167	25/04/2008	03/05/2010	0.046%
		633	25/04/2008	03/05/2010	0.013%

Բանկի հետ փոխկապակցված և կապակցված իրավաբանական անձանց տրամադրված վարկերի մասին տեղեկությունները հետևյալներն են՝

Գործարքի մյուս կողմը	գործարքի առարկան	գործարքի արժեքը (հազ. դրամ) (վարկի մնացորդը 31.10.2008թ. -ի դրությամբ)	Վարկի հատկացման ժամկետ	Վարկի մարման ժամկետ	գործարքի ընդհանուր մասնաբաժինը թողարկողի եկամուտներում
Հայփոստ ՓԲԸ	վարկի տրամադրում	350,000	10/12/2007	10/12/2009	7.37%
		200,000	15/04/2008	15/04/2010	4.21%
		235	22/07/2008	01/08/2010	0.00%
Պրոդեն Էս Էյ	վարկի տրամադրում	25,535	05/09/2007	01/09/2009	0.54%
Բոսվադո Ֆինանս Կորպորեյշն	վարկի տրամադրում	10,773	05/09/2007	01/09/2009	0.23%
Յունիտեք Ագրո Էս Էյ	վարկի տրամադրում	3,147	05/09/2007	01/09/2009	0.07%
Մանտա Կատարինա Կորպորեյշն	վարկի տրամադրում	2,580	05/09/2007	01/09/2009	0.05%

Թողարկողի նախատեսվող գործունեությունը և հեռանկարները

Բանկի նախատեսվող գործունեությունը հեռանկարները 2008-2010թթ ներկայացվում են հետևյալ հիմնական խնդիրների տեսքով, որոնց լուծումը հակիրճ ներկայացվում է յուրաքանչյուր կետում:

1. ընդհանուր կապիտալի և միջև հարկումը շահույթի, ակտիվների, տնտեսությանը տրամադրված վարկերի, հաճախորդներից ներգրավված միջոցների մեծությամբ ՀՀ բանկային համակարգում առաջին հնգյակում տեղ զբաղեցնելու նպատակով Բանկը նախատեսում է ունենալ հետևյալ ցուցանիշները.

- միջև հարկումը շահույթը՝ 2008թ. – 2.2 մլրդ դրամ, 2009թ.- 4 մլրդ դրամ, 2010թթ. – 5.1 մլրդ դրամ,
- ընդհանուր կապիտալը՝ 2008թ. – 12.6 մլրդ դրամ, 2009թ.- 15.6 մլրդ դրամ, 2010թթ. – 19.5 մլրդ դրամ,
- ակտիվները՝ 2008թ. – 70.6 մլրդ դրամ, 2009թ.՝ 85.6 մլրդ դրամ, 2010թթ.՝ 100.3 մլրդ դրամ,
- տնտեսությանը տրամադրված վարկերը՝ 2008թ. – 43.1 մլրդ դրամ, 2009թ.- 53.9 մլրդ դրամ, 2010թթ. – 64.6 մլրդ դրամ,
- հաճախորդներից ներգրավված միջոցները՝ 2008թ. – 49.5 մլրդ դրամ, 2009թ.- 59.4 մլրդ դրամ, 2010թթ. – 69.3 մլրդ դրամ,
- ակտիվ հաճախորդների քանակի աճ՝ 2008թ.- 71.6%, 2009թ.-35% և 2010թ.- 30%:

2. դիվերսիֆիկացված, ցածր ռիսկային վարկային պորտֆել ունենալու նպատակով ցածր ռիսկային նպատակային ստանդարտացված վարկային տեխնոլոգիաների՝ տնտեսապես առողջ սուբյեկտների խմբերին մանրածավալ, միջնաճանկետ և երկարաժամկետ, նվազ եկամտաբերությամբ վարկավորման ընդլայնումը՝ մասնավորապես փոքր և միջին բիզնեսի զարգացմանն ուղղված վարկավորման ծավալների, սպառողական վարկերի, միջազգային ֆինանսական կազմակերպությունների (ՀԲ,ԳՀՀ) հետ համագործակցության հաշվին: 2008թ.-ին վարկային ներդրումների (ներառյալ ֆակտորինգի) նպատակային աճը կազմում է 48.6% կամ 14.6 մլրդ դրամ, 2009 թ-ին՝ 25%, 2010թթ.՝ 20%:

3. Բանկի մասնաճյուղային ցանցի ընդլայնումը՝ ՀՀ տնտեսապես ակտիվ տարածաշրջաններում, մասնավորապես՝ Երևանում և խոշոր մարզկենտրոններում նոր մասնաճյուղերի ստեղծումը (2008թ.՝ 10 նոր մասնաճյուղ, 2009թ.՝ 10 և 2010թ.՝ 10),

Հաճախորդների և եկամուտների աճի նպատակով ծառայությունների մատուցման խնդիրներ են՝ ա/ հաճախորդների ինտենսիվ և նպատակային ներգրավումը, ռեսուրսային բազայի ընդլայնումը, առկա ծառայությունների մարկետինգային ինտենսիվ խթանումը,

բ/ որպես առանցքային ծառայություն՝ պլաստիկ քարտերի բնագավառի հետագա զարգացումը.

- տրամադրված պլաստիկ քարտերի քանակի ավելացումը. 2008թ.-ին կաճեն 47.6%-ով և կկազմեն 28770 հատ, 2009թ.-ին կկազմեն 35954 հատ, 2010թ.-ին՝ 44905, 2008թ.-ին 30 նոր բանկոմատների, 50 նոր պոս-տերմինալների ձեռքբերումը և տեղադրումը և հետագայում ցանցի 25%-ով ավելացումը, այդ թվում ՀՀ շրջաններում,
- նոր քարտային պրոդուկտների՝ VISA PLATINUM քարտերի սպասարկում, ներդրում,
- բոլոր բանկոմատներում VISA չիպային քարտերի սպասարկման սերտիֆիկացում,
- Fraud Guard համակարգի կիրառում,
- Քարտային համակարգի և փոխանցումների համակարգերի ինտեգրացում,

գ/ 2008թ.-ին նոր ծառայությունների ներդրումը՝

- ագրոբիզնեսի ֆինանսավորում, լիզինգային գործառնություններ,
- KFW-ի «Փոքր ՀէԿ-երի ֆինանսավորում» ծրագրային վարկերի տրամադրում,
- նոր ավանդատեսակների ներդրում,
- դիսկոնտային քարտերի նախագծի մշակում, առևտրի և սպասարկման կետերի ներգրավում,

Տեղեկատվական տեխնոլոգիաների խնդիրների լուծումը նախատեսվում է իրականացնել հետևյալ ուղղություններով՝

- 2008թ. նոր սերնդի «Գործառնական օր» բանկային ավտոմատացված սպասարկման ծրագրային համակարգի, այդ թվում նոր OLAP համակարգի ձեռքբերում և ներդրում,
- անցում MS Windows լիցենզիոն օպերացիոն համակարգին,
- մասնաճյուղային ցանցի վերափոխում, արդիականացում, այդ թվում 2008թ.-ին մասնաճյուղերում Արմենտել ընկերության տվյալների փոխանցման CDN ցանցի ներդրման ավարտ, որը կապահովի համակարգչային մասնաճյուղային ցանցի հուսալիության բարձրացումը,
- 2008թ.-ին կսկսվի SS կառավարման համակարգերի ներդրում՝ համաձայն COBIT և ITIL միջազգային ստանդարտների, որը ուղղված է առավել սերտ փոխկապակցել բիզնեսի և SS-ի խնդիրները,
- Terminal Server համակարգի վերափոխում, Պահուստային կենտրոնում Outlook համակարգի տեղադրում,
- SWIFT Net միգրացիայի 2-րդ փուլի նախապատրաստական աշխատանքների իրականացում,
- Ինտերնետին միացման անվտանգության մակարդակի բարձրացում, DMZ համակարգի կառուցում,
- SS կառավարման համակարգի (COBIT) ուսումնասիրում և որոշ դրույթների ներդրում:

Բանկի ֆինանսական վիճակի և գործունեության արդյունքների վերաբերյալ տեղեկություններ

Ֆինանսական հաշվետվություններ

«Կոնվերս բանկ» ՓԲԸ-ի 2005թ., 2006թ., 2007թ., և 2008թ. երրորդ եռամսյակի ֆինանսական հաշվետվությունները կազմված են Կենտրոնական բանկի սահմանաձև կարգով և ներկայացված են եղել նախկինում ներկայացված ազդագրի 92-ից 108 էջերում:

Ֆինանսական վիճակի, գործունեության արդյունքների փոփոխությունների վերաբերյալ տեղեկություններ

Նախորդ երեք տարիների և 2008 թվականի 3-րդ եռամսյակի ընթացքում «Կոնվերս բանկ» ՓԲԸ-ի գործունեության ֆինանսական արդյունքները և ակտիվների տարեկան եկամտաբերությունը ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

ԱՆՎԱՆՈՒՄԸ	2005 թ.	2006 թ.	2007 թ.	30.09.2008 թ.
ԱԿՏԻՎՆԵՐ	41704089	35532090	58591201	66826197
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	33256451	25950845	47575086	53859466
ԿԱՊԻՏԱԼ	8447638	9581245	11016115	12966731
Ջուտ տոկոսային եկամուտ	1629287	2056178	2487575	2614096
Գործառնական եկամուտ (զուտ կոմիսիոն վճարները ներառյալ)	2678872	2166373	1018607	4750529
Շահույթ/(վնաս) հարկումից առաջ	2207704	1867461	1844715	2367975
Շահույթ (վնաս) հարկումից հետո	1722527	1412286	1444397	1921417
Ակտիվների ծախսաբերության գործակիցը (ROA, %)	4.13%	3.97%	2.47%	2.88%
Սեփական կապիտալի շահույթաբերության գործակիցը (ROE, %)	20.39%	14.74%	13.11%	14.82%

Ընկերության ակտիվները հիմնականում աճել են բացառությամբ 2006 թվականի, որը հիմնականում պայմանավորված է եղել 2006թ. Բանկի կողմից դրամադրված վարկերի և ֆինանսական ներդրումների կրճատմամբ:

Բանկի ֆինանսական գործունեությունը

ա. Բանկի պարտավորությունները (ռեսուրսները) ունեն հետևյալ կառուցվածք.

Ֆինանսական միջնորդություն կատարող անձանց, այդ թվում՝ բանկերի, բնականոն գործունեության համար ռեսուրսների գլխավոր աղբյուրներն են հանդիսանում սեփական կապիտալը և ներգրավված միջոցները: Բանկը վարկերի տրամադրման և միջոցների այլ տեղաբաշխումների նպատակով վերջին տարիներին զգալիորեն ամրապնդել է իր ռեսուրսային բազան:

	31.12.2005 դրությամբ	Տես. կշիռ %	31.12.2006 դրությամբ	Տես. կշիռ %	31.12.2007 դրությամբ	Տես. կշիռ %	30.09.2008 դրությամբ	Տես. կշիռ %
Ռեսուրսներ, ընդամենը, այդ թվում՝	41704089	100 %	35532090	100 %	58591201	100 %	66826197	100 %
Սեփական կապիտալ	8447638	20.3%	9581245	27.0%	11016115	18.8%	12966731	19.4%
Պարտավորություններ, որից՝	33256451	79.7%	25950845	73.0%	47575086	81.2%	53859466	80.6%
հաճախորդներից ներգրավված միջոցներ	24639037	59.1%	20554953	57.8%	40706032	69.5%	48026148	71.9%
Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ	3141086	7.5%	2504568	7.0%	5860286	10.0%	4368017	6.5%
այլ պարտավորություններ	1614255	3.9%	894210	2.5%	428083	0.7%	893984	1.3%

30.09.2008թ. դրությամբ Բանկի պարտավորությունների կատարման մակարդակը բնորոշող ստորև ներկայացված աղյուսակում, ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված նորմատիվային ցուցանիշների փաստացի մակարդակը վկայում են, որ Բանկի պարտավորությունների կատարման հնարավորությունները պահպանվել են բարձր մակարդակի վրա:

Նորմատիվներ	Նորմատիվի փաստացի մեծությունը՝ հաշվարկված բանկի համար	ՀՀ կենտրոնական բանկի սահմանափակ նորմատիվի թույլատրելի մեծությունը
1	2	3
Ն ₁ Ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը	20.16%	12.00%
Ն ₂ ¹ Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը	29.94%	15.00%
Ն ₂ ² Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցությունը	81.28%	60.00%

բ. Բանկի սեփական կապիտալի կառուցվածքը 2005-30.09.2008թթ ունի հետևյալ տեսքը.

Կապիտալ	2005 թ.	2006 թ.	2007 թ.	30.09.2008 թ.
Կանոնադրական կապիտալ	1233133	1233133	1233133	1233133
Էմիսիոն եկամուտ	63233	63233	63233	63233
Պահուստներ՝	2816067	2753789	2574473	2558043
Գլխավոր պահուստ	461773	648183	648183	648183
Վերագմահատման պահուստներ	2354294	2105606	1926290	1909860
Կուտակված շահույթ (վնաս)	4335205	5531090	7145276	9112322
Ընդամենը՝ կապիտալ	8447638	9581245	11016115	12966731

Ինչպես երևում է աղյուսակից Բանկի սեփական կապիտալը նշված ժամանակաշրջանում ունեցել է միայն աճի միտում, որը հիմնականում պայմանավորված է եղել կուտակված (չբաշխված) շահույթի աճով: Սեփական կապիտալի նվազման միտում Բանկին հայտնի չէ:

Շահույթի կանխատեսումը և գնահատումը

ա. «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի 2008-2010թթ. կանխատեսումներով Բանկի զուտ շահույթի ցուցանիշը 2008թ.-ին 2007թ. նկատմամբ կաճի 30.9%-ով և կկազմի 1794 մլն դրամ, 2009թ.-ին կկազմի 3192 մլն դրամ, 2009թ.-ին՝ 4091 մլն դրամ: Շահութաբերության ակնկալվող ցուցանիշները հետևյալն են՝ - ըստ ակտիվների (ROA). 2008թ.՝ 2.54%, 2009թ.՝ 3.7%, 2010թ.՝ 4.08%,

Բանկը առաջիկա 3 տարում նախատեսել է տարեկան շահաբաժինների վճարում՝ կանոնադրական կապիտալի 15%-ի չափով:

Նշված ցուցանիշների ապահովումը Բանկը նախատեսում է ապահովել ստորև նշված խնդիրների կատարման և քաղաքականությունների ապահովմամբ:

Միջոցների ներգրավումը

Բանկի պարտավորությունները 2008թ.-ի ավարտին կկազմեն 58 մլրդ դրամ՝ 2007թ. նկատմամբ աճելով 10.2 մլրդ դրամով կամ 21.5%-ով, 2009թ. կաճեն 11.9 մլրդ դրամով կամ 20.6%-ով, 2010թ.՝ 10.8 մլրդ դրամով կամ 15.5%-ով: Ռեսուրսային բազայի աճը հիմնականում պայմանավորված կլինի ռեզիդենտ իրավաբանական անձանց և հիմնարկների ցպահանջ միջոցների (2008թ.՝ 4.7 մլրդ դրամով, 2009թ.՝ 4.8 մլրդ դրամով, 2010թ.՝ 4.3 մլրդ դրամով), ռեզիդենտ ֆիզիկական անձանց ժամկետային միջոցների՝ 2008թ.-ին 2.3մլրդ. դրամով, 2009թ.-ին՝ 2.1 մլրդ. դրամով, 2010թ.-ին՝ 1.9 մլրդ. դրամով, ռեզիդենտ ֆիզիկական անձանց ցպահանջ միջոցների աճով (ըստ տարիների՝ 1.1, 1 և 0.9 մլրդ դրամով), իրավաբանական անձանց ժամկետային միջոցների աճով (ըստ տարիների՝ 1.2, 1.8 և 1.6 մլրդ դրամով):

2008-2010թթ.-ին ռեզիդենտ հաճախորդների նկատմամբ պարտավորությունների աճի ծրագրված արագացումը պայմանավորված կլինի բանկային համակարգի հաճախորդների բազայի աճով, ՀՀ տնտեսական աճի գործոններով, բանկի հաճախորդների ներգրավման միջոցառումներով:

Ռեզիդենտ հաճախորդների ռեսուրսային բազայի ընդլայնումը կապահովվի մասնաճյուղային ցանցի, ներգրավվող ավանդների, քարտային բիզնեսի, փոքր և միջին բիզնեսի վարկավորման, սպառողական վարկերի, ֆակտորինգային գործառնությունների ծրագրված և նոր ծառայությունների ներդրումով, որոնք որպես աճանցյալ արդյունք կհանգեցնեն հաճախորդների բազայի և, հետևաբար, պարտավորությունների աճին:

Միջոցների տեղաբաշխումը և Բանկի ներդրումային գործունեությունը

Ակտիվների ծավալի և կառուցվածքի հիմնավորում. Բանկի ակտիվները 2008թ. ավարտին կաճեն 11.8 մլրդ դրամով կամ 20.2%-ով և կկազմեն 70.6 մլրդ դրամ, 2009թ. կաճեն 15 մլրդ դրամով կամ 21.2%-ով, 2010թ.՝ 14.7 մլրդ դրամով կամ 17.2%-ով: Ծրագրվող ժամանակաշրջանում ակտիվների ձևավորման քաղաքականությունը հիմնականում ուղղված կլինի դիվերսիֆիկացված, նվազ ռիսկային պորտֆելի ձևավորմանը և աճին՝ փոքր և միջին բիզնեսի վարկավորման, սպառողական վարկերի, ֆակտորինգային գործառնությունների ծրագրված ընդլայնմանը, իրացվելիության բավարար մակարդակի պահպանմանը: Ակտիվների աճը հիմնականում պայմանավորված կլինի տնտեսությանը տրված վարկերի (2008թ.՝ 14.1 մլրդ դրամով կամ 48.4%-ով, 2009թ.՝ 10.8 մլրդ դրամով կամ 25%-ով, 2010թ.՝ 10.8 մլրդ դրամով կամ 20%-ով), ֆակտորինգային գործառնությունների (2008թ.-ին՝ 578 մլն դրամով, 2009թ.՝ 406 մլն դրամով, 2010թ.՝ 406 մլն դրամով) աճով:

Ակտիվները կկրեն կառուցվածքային փոփոխություններ՝

- 2008թ.-ին տնտեսությանը տրված վարկերի տեսակարար կշիռը ընդհանուր ակտիվներում կաճի 11.6 տոկոսային կետով և 2008-ից 2010թթ.-ները կտատանվի 61-64%-ի շրջանակներում,
- 2008թ.-ին պետական արժեթղթերի տեսակարար կշիռը ընդհանուր ակտիվներում կնվազի շուրջ 4.1 տոկոսային կետով և կկազմի 4.2%, այնուհետև կաճի և 2010թ.-ին կկազմի ակտիվների մոտ 5%,
- ֆակտորինգային գործառնությունների տեսակարար կշիռը ընդհանուր ակտիվներում կաճի 0.5 տոկոսային կետով և 2008-2010 թթ. կմնա գրեթե հաստատուն՝ 2.3-2.4% սահմաններում:

Վարկային պորտֆելի նկարագիր.

Դրված նպատակների և խնդիրների ներքո վարկային պորտֆելի ընդլայնման ուղիներն ու ծրագրերն են՝

1. փոքր և միջին բիզնեսի զարգացմանն ուղղված վարկավորման ծավալների ընդլայնումը՝ 2008թ.՝ 54%-ով կամ 2666 մլն դրամով, 2009 և 2010թթ.՝ 25%-ով,
2. հիփոթեքային վարկավորման ծավալների ընդլայնումը՝ 2008թ.- 2.2 անգամ կամ 2.7 մլրդ դրամով, 2009 և 2010թթ.՝ 37% և 20%-ով համապատասխանաբար:
3. ավտոմեքենաների ձեռք բերման նպատակով վարկավորման ծավալների ընդլայնումը՝ 2008թ.- 63%-ով կամ 1582 մլն դրամով, 2009 և 2010թթ.՝ 25%-ով,
4. ֆակտորինգային գործառնությունների (ապրանքների ապառիկ ձեռք բերման ֆինանսավորման) ծավալների ընդլայնումը՝ 2008թ.- 80%-ով կամ 723 մլն դրամով, 2009 և 2010թթ.՝ 25%-ով,
5. ոսկու և թանկարժեք քարերի գրավով վարկերի ավելացումը՝ 2008թ.-ին ծավալները կաճեն 58%-ով և կկազմեն մոտ 3355 մլն դրամ, 2008,2009թթ.-ին ծրագրված է միջին չափով մոտ 20% տարեկան աճ,
6. Ագրոբիզնեսի ֆինանսավորման և լիզինգային գործառնությունների ծավալները դեռ վերջնականորեն գնահատված չեն և հետագայում պորտֆելի լրացուցիչ աճ կապահովեն:

Նշված ծրագրերը կբերեն վարկային պորտֆելի աճին և վարկային ռիսկի հետագա դիվերսիֆիկացմանը՝ մանրածավալ, միջնաժամկետ և երկարաժամկետ, ցամաք ռիսկային, բայց բավարար եկամտաբերությամբ որակյալ վարկային պորտֆելի ձևավորման գործընթացի շարունակմանը: Վերոհիշյալ ուղղությունները 2008թ.-ին կբերեն հիմնականում միջնաժամկետ և մասամբ երկարաժամկետ վարկային ներդրումների աճի: Տնտեսության ճյուղերից հիմնական նպատակային ճյուղեր կհանդիսանան սննդի արդյունաբերությունը, առևտրի և սպասարկման, ագրոբիզնեսի հատվածը, սպառողական և հիփոթեքային վարկերի ոլորտները: Փոքր և միջին բիզնեսի վարկավորման և սպառողական վարկերի ծրագրերը բխում են բանկի կողմից գնահատված շուկաներից և իրատեսական են: Նշենք, որ 2008թ.-ին վարկային պորտֆելի փաստացի աճը կկազմի 14.6 մլրդ դրամ կամ մոտ 48.6%, 2008 և 2009 թթ.-ին՝ 11.2 մլրդ -ական դրամ:

Ոչ ավանդական բանկային գործառնություններ

Բանկը 2007թ. ծրագրված ոչ ավանդական ծառայությունների ոլորտում չի պլանավորում որևէ նոր նախաձեռնություն իրականացնել և կբավարարվի արդեն ներդրված Visa mini և Gift քարտերի պրոդուկտների զարգացման ուղղությամբ քայլեր ձեռնարկելով:

Միջոցների տեղաբաշխումը ՀՀ ԿԲ-ում և այլ բանկերում

ՀՀ ԿԲ-ում Բանկը միջոցները հիմնականում կտեղաբաշխի պարտադիր պահուստներում (կաճեն ներգրավված միջոցներին համապատասխան): Չեն բացառվում ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի և արտարժույթային սվոփ գործառնությունները, կարճաժամկետ ավանդները՝ ազատ միջոցների առկայության դեպքում: Այլ բանկերի ուղղակի վարկավորում նախատեսված չէ: Նախատեսվում են ոչ ռեզիդենտ բանկերում օվերնայթերի տեղաբաշխում և միջոցների դեպոնացում ակրեդիտիվային և քարտային գործառնությունների գծով:

Ներդրումային գործունեություն

ՀՀ պետական արժեթղթերի եկամտաբերության սպասումները անփոփոխ թողեցին Բանկի քաղաքականություն (ավելցուկային միջոցների հաշվին պորտֆելի ձևավորումը) այս դաշտում: Ծրագրվող ժամանակաշրջանում՝ 2008թ.-ին, ծրագրվում է պորտֆելի կրճատում և ուղղում դեպի վարկավորում: Այս բնագավառում շեշտը կդրվի վաճառքի համար մատչելի արժեթղթերի, երկրորդային շուկայում գործառնությունների վրա: 2008-2010թթ. ծրագրվում է 3-5 մլրդ դրամի պորտֆելի՝ հիմնականում վաճառքի համար մատչելի արժեթղթերի հաշվին: Նշենք, որ Բանկը առաջին քայլերն է ձեռնարկել ՀՀ ԿԲ կողմից վարկանիշ ստացած կազմակերպությունների թողարկած պարտքային արժեթղթերի ձեռք բերման ուղղությամբ, այդ պորտֆելը 2008թ. կպահպանվի:

Ֆինանսական արդյունքներ.

Տոկոսային եկամուտները 2008թ.-ին կաճեն 2246 մլն դրամով կամ 64.3%-ով, 2009թ.՝ 1916 մլն դրամով կամ 33.4%-ով, 2010թ.՝ 1437 մլն դրամով կամ 18.8%-ով: Հիմնական աճը կայանում էր տնտեսությանը տրված վարկերից եկամուտների աճով (2008թ.-ին՝ 2480 մլն դրամով, 2009թ.-ին՝ 1798 մլն դրամով, 2010թ.-ին՝ 1290 մլն դրամով): Վարկերից եկամուտների աճը պայմանավորված է բացառապես ծավալների աճով, քանի որ եկամտաբերությունն որոշակի անկում է ապրելու:

Տոկոսային ծախսերը 2008թ.-ին կաճեն 727 մլն դրամով կամ 71.8%-ով (հիմնականում իրավաբանական անձանցից ներգրավված ժամկետային միջոցների դիմաց՝ 391 մլն դրամի, այդ թվում ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց ժամկետային միջոցների դիմաց՝ 165 մլն դրամի, ֆիզիկական անձանցից ներգրավված միջոցների դիմաց՝ 157 մլն. դրամ աճի հաշվին): 2009թ. տոկոսային ծախսերը կաճեն 401 մլն դրամով կամ 23%-ով, 2010թ.՝ 422 մլն դրամով կամ 19.7%-ով:

Արդյունքում գուտ տոկոսային եկամուտները 2008թ.-ին կաճեն 61.2%-ով կամ 1518 մլն դրամով, իսկ 2009, 2010թթ. կաճեն համապատասխանաբար 37.9% և 17.4%-ով: Չուտ տոկոսային եկամուտների այս սպասումներն ակտիվների և պարտավորությունների, դրանց եկամտաբերության և ծախսատարության վերոհիշյալ հիմնավորումների արդյունք են:

Ոչ տոկոսային եկամուտները 2008թ.-ին կաճեն 786 մլն դրամով կամ 38.2%-ով, 2009թ. կաճեն 613 մլն դրամով կամ 21.5%-ով, 2010թ.՝ 556 մլն դրամով կամ 16.1%-ով: 2008թ. այս եկամուտների աճը հիմնականում կայանում էր ստացված միջոցների՝ 308 մլն դրամի, ֆակտորինգից ստացված գուտ եկամուտների՝ 147.8 մլն դրամի, արտարժույթի առք ու վաճառքից ստացված գուտ եկամուտների՝ 130 մլն դրամի չափով: Ոչ տոկոսային եկամուտների մակարդակը համահունչ կաճի հաճախորդների քանակի և գործառնությունների ծրագրված ծավալներին համապատասխան:

Ոչ տոկոսային ծախսերը 2008թ.-ին կաճեն 1701 մլն դրամով կամ 65.1%-ով, 2009թ.՝ 499 մլն դրամով կամ 11.6%-ով, 2010թ.՝ 452 մլն դրամով կամ 9.4%-ով: Նման աճը պայմանավորվում է վարչական և ծախսերի, այդ թվում՝ մասնաճյուղային ցանցի ընդլայնման, հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիայի, աշխատավարձի ուղղված ծախսերի աճով:

Չուտ ոչ տոկոսային եկամուտները 2008թ.-ին կկազմեն -1469 մլն դրամ, 2009թ.՝ -1356 մլն դրամ, 2010թ.՝ -1252 մլն դրամ:

Բանկը շահույթի ավելացման և իր արջև դրված խնդիրների կատարման համար նախատեսում է իրականացնել բանկի կառավարման համակարգի բարելավում, որը իր մեջ ներառում է կառուցվածքը, համակարգերը, կորպորատիվ կուլտուրան, ներքին հսկողական համակարգը և ռիսկերի կառավարման քաղաքականությունը:

Տարածաշրջանային քաղաքականություն.

Կարևորելով մասնաճյուղային ցանցի ընդլայնման գործընթացը, որն ուղղված է մրցակցությանը և մրցակցային ռիսկերին դիմակայելուն, հետագա զարգացմանը, Բանկը ՀՀ տնտեսապես ակտիվ տարածաշրջաններում, մասնավորապես Երևանում և խոշոր մարզկենտրոններում, 2008-2010թթ. կստեղծի ևս 30 նոր մասնաճյուղ: Նպատակային տարածաշրջաններից կհանդիսանան Երևանի, Վայոց Ձորի, Արագածոտնի և Սյունիքի մարզերը: Կգործարկվեն Բանկի միայն լիարժեք մասնաճյուղեր: Ներդրումները մեկ մասնաճյուղի բացման համար գնահատվում են 15 մլն դրամ, իսկ ներդրումային ծախսերը կծածկվեն գործունեության առաջին 12-15 ամսում: Նոր մասնաճյուղերի համար չի ծրագրվում շենքերի ձեռք բերում, ծրագրվում է մվազագույնը 9 հոգուց բաղկացած անձնակազմ, Բանկի միասնական սերվերով, online կապով աշխատանքի կազմակերպում:

բ. Բանկի կառավարման մարմինները հնարավորություն ունեն ազդելու Բանկի գործունեության և շահույթի վրա ազդող հետևյալ հիմնական գործոնների վրա.

- Բանկի ներգրավվող և տեղաբաշխվող միջոցների ծավալները և տոկոսադրույքները,
- Բանկի ռիսկերի ընդունելի մակարդակի որոշում և պահպանում,
- Բանկի ծախսերի ուղղությունների որոշում և հսկողություն,
- Նոր բանկային արտադրանքների և ծառայությունների ներդրում,

Բանկի կառավարման մարմինները հնարավորություն չունեն ազդելու Բանկի գործունեության և շահույթի վրա ազդող հետևյալ հիմնական գործոնների վրա.

- բանկային ավանդների ու վարկերի առաջարկի ու պահանջարկի և դրանից բխող տոկոսադրույքների փոփոխության վարքագիծ,
- արժեզրկման ու փոխարժեքի վարքագիծ,
- Կենտրոնական Բանկի կողմից սահմանվող տոկոսադրույքները,
- անհատաբաժնեի ուժի ազդեցության գործոններ (արտակարգ դրության հայտարարելը, հաղորդակցության միջոցների աշխատանքների դադարեցումը, բնական աղետները, պատերազմը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Բանկի բնականոն գործունեությունը):

գ. Սույն կետում նշված տեղեկությունները ընդամենը կանխատեսումներ են և ներդրմային որոշումներ կայացնելիս չպետք է հիմնվել դրանց վրա:

դ. Նախորդ պլանային ժամանակահատվածում «Կոնվերս բանկ» ՓԲԸ-ի կողմից իրականացված կանխատեսումներից չեն կատարվել միայն ստորև նշվածները՝


- մինչև հարկումը շահույթը կազմել է 1.79 մլրդ դրամ, ծրագրայինը՝ 1.93 մլրդ դրամի փոխարեն,
- ակտիվ հաճախորդների քանակը աճել է 6057-ով կամ 32.2%-ով, ծրագրային աճը նախատեսվել է՝ 43.8% կամ 8226,
- փոքր և միջին բիզնեսի զարգացմանն ուղղված վարկավորման ծավալները աճել են 22.8%-ով կամ 0.9 մլրդ դրամով մինչ դեռ ծրագրային աճը կանխատեսվել էր 50%-ով կամ 2 մլրդ դրամով:

Նշված խնդիրների ոչ լիովին կատարումը էականորեն չի ազդել Բանկի ընդհանուր կանխատեսումների կատարողականի վրա, քանի որ որոշ նախկինում կատարված կանխատեսումներ գերակատարվել են և Բանկի նախկին կատարված կանխատեսումները համապատասխանում են և համադրելի են ներկա կանխատեսումների հետ:

Բանկի կառավարման մարմինների և կառավարմանը մասնակցող անձանց վերաբերյալ տեղեկություններ

Ընդհանուր տեղեկություններ կառավարման մարմինների վերաբերյալ

ա. Բանկի կառավարման մարմինների սխեմատիկ կառուցվածքը հետևյալն է՝



Ժողովը

1. Ժողովը, բանկի կառավարման բարձրագույն մարմինն է: Բանկը պարտավոր է ամեն տարի գումարել տարեկան ժողով, որը հրավիրվում է ֆինանսական տարվա ավարտից հետո վեց ամսվա ընթացքում:
2. Տարեկան ժողովից բացի անհետաձգելի հարցերի քննարկման համար կարող են գումարվել արտահերթ ժողովներ:
3. Ժողովի իրավասությանն են պատկանում՝
 - ա) Կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը,
 - բ) Բանկի վերակազմակերպումը,
 - գ) Բանկի լուծարումը,
 - դ) ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարման հանձնաժողովի նշանակումը,
 - ե) Խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և պաշտոնավարման ժամկետի սահմանումը /որը չի կարող մեկ տարուց պակաս լինել/, ինչպես նաև նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
 - զ) հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը,
 - է) բանկի կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը,
 - ը) Խորհրդի ներկայացմամբ բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի հաստատումը,
 - թ) բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների, շահույթների և վնասների բաշխման հաստատումը: Տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը,
 - ժ) Ժողովի վարման կարգի հաստատումը,
 - ժա) հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը,
 - ժբ) բաժնետոմսերի համախմբումը, բաժանումը.
 - ժգ) Խորհրդի անդամների վարձատրության չափի սահմանումը,
 - ժդ) օրենքով նախատեսված դեպքերում բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը,
 - ժե) օրենքով նախատեսված այլ հարցեր:
4. Ժողովում ձայնի իրավունքից օգտվում են՝
 - ա) Բանկի հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը.

- բ) Բանկի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը՝ ՀՀ օրենսդրությամբ և Կանոնադրությամբ սահմանված դեպքերում, այսուհետ՝ «Քվեարկող բաժնետոմսեր»:
5. Ժողովի որոշումներն ընդունվում են Ժողովին մասնակցող Քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ, եթե ՀՀ օրենսդրությամբ և Կանոնադրությամբ ձայների այլ քանակ սահմանված չէ:
6. Ժողովին մասնակցելու իրավունք ունեն.
 ա) Բանկի հասարակ /սովորական/ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը՝ իրենց պատկանող բաժնետոմսերի քանակին համապատասխան ձայների քանակով.
 բ) Բանկի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը՝ իրենց պատկանող արտոնյալ բաժնետոմսերի քանակին և անվանական արժեքին համապատասխան ձայների քանակով.
 գ) Բանկի բաժնետեր չհանդիսացող Խորհրդի և Գործադիր մարմնի անդամները՝ խորհրդակցական ձայնի իրավունքով.
 դ) Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման անդամները՝ որպես դիտորդ.
 ե) Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձը՝ որպես դիտորդ /եթե նրա եզրակացությունն առկա է գումարվող Ժողովի նյութերում/,
 զ) Կենտրոնական բանկի ներկայացուցիչները՝ որպես դիտորդ:
7. Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվում է «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
 Բանկը բաժնետերերի ընդհանուր ժողովի անցկացման մասին Կենտրոնական բանկին ծանուցում է դրա անցկացումից ոչ ուշ, քան 15 օր առաջ:
8. Տարեկան Ժողովի գումարման մասին Բանկի բաժնետերերը ծանուցվում են նշանակված օրվանից առնվազն 10 օր առաջ՝ պատվիրված նամակների միջոցով: Ժողովի օրակարգը հաստատվում է Խորհրդի կողմից՝ հաշվի առնելով առանձին բաժնետերերի կողմից տրված առաջարկությունները:
9. Ժողովի որոշումներն ընդունվում են քվեարկությունների արդյունքում, որի արդյունքները արտացոլվում են Ժողովի արձանագրության մեջ՝ Ժողովի օրակարգում ընդգրկված յուրաքանչյուր հարցի վերաբերյալ: Քվեարկությունը Ժողովում իրականացվում է «Բանկի մեկ քվեարկող բաժնետոմս՝ մեկ ձայն» սկզբունքով, բացառությամբ Խորհրդի անդամների ընտրության և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:
10. Ժողովի իրավիրման և անցկացման աշխատանքները կազմակերպում է Խորհրդի քարտուղարը (քարտուղարությունը) կամ Բանկի այլ լիազորված ստորաբաժանում կամ աշխատակից (այսուհետ՝ Խորհրդի քարտուղար):
11. Ժողովն իրավասու է, եթե Ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 50 տոկոսից ավելին տիրապետող բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները): Քվեարկության դեպքում ուղիղ 15 օր հետո իրավիրվում է նոր Ժողով: Ժողովի մասնակիցների նոր ցուցակ չի կազմվում: Օրակարգի փոփոխություն չի կատարվում:
12. Ժողովը նախագահում է Խորհրդի նախագահը, նրա բացակայության դեպքում Խորհրդի անդամներից մեկը՝ Խորհրդի անդամների ընտրությամբ (կամ Ժողովի մասնակիցների քվեարկությամբ):
13. Ժողովների արձանագրությունները կազմում է Խորհրդի քարտուղարը: Ժողովի արձանակցությունը կազմվում է դրա ավարտից 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ առնվազն 2 օրինակով, որոնք ստորագրում են Ժողովի նախագահը և Խորհրդի քարտուղարը:
 Ժողովի նախագահը պատասխանատվություն է կրում Ժողովի արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:
14. Բաժնետերերի պահանջով նրանց տրվում է արձանագրության պատճեն կամ քաղվածք նրանից:
15. Բացի տարեկան Ժողովից անհետաձգելի հարցերի քննարկման համար գումարվում են նաև արտահերթ Ժողովներ:
16. Արտահերթ Ժողովը գումարվում է Խորհրդի որոշմամբ՝ սեփական նախաձեռնությամբ, Բանկի գործադիր մարմնի, Բանկի աուդիտն իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Բանկի առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետերերի (բաժնետերերի) պահանջով: Բացառությամբ Խորհրդի կողմից սեփական նախաձեռնությամբ արտահերթ Ժողովի գումարումից, մնացած դեպքերում արտահերթ Ժողովը գումարվում է արտահերթ Ժողով գումարելու պահանջ ունեցող անձի կողմից նման պահանջը ներկայացնելու պահից 45 օրվա ընթացքում: Արտահերթ Ժողովի գումարման հետ կապված հարցերը լուծվում են Խորհրդի կողմից՝ պահպանելով ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պահանջները:
17. Արտահերթ Ժողովները գումարվում են բաժնետերերի համատեղ ներկայությամբ կամ հեռակա կարգով քվեարկության միջոցով, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:
18. Հեռակա կարգով քվեարկությունը կատարվում է քվեաթերթիկներով:
19. Հեռակա կարգով քվեարկության ժամանակ քվեաթերթիկները տրամադրվում են բաժնետերերին էլեկտրոնային տարբերակով կամ փոստով՝ պատվիրված նամակով, կամ էլ առձեռն՝ Ժողովի կայացման օրվանից առնվազն 10 օր առաջ:
20. Քվեաթերթիկը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները.
 ա. Բանկի անվանումը,

- բ. Ժողովի գումարման օրը, ժամը և վայրը,
 - գ. քվեարկության դրվող յուրաքանչյուր հարցի ձևակերպումը,
 - դ. քվեարկության դրվող յուրաքանչյուր հարցի վերաբերյալ քվեարկության տարբերակները՝ “կողմ”, “դեմ” և “ձեռնպահ”,
 - ե. լրացված քվեաթերթիկները Բանկի կողմից ընդունելու օրը, ժամը և վայրը,
 - զ. ցուցում այն մասին, որ քվեաթերթիկը պետք է ստորագրվի բաժնետիրոջ (լիազորված ներկայացուցչի) կողմից,
 - թ. քվեաթերթիկը լրացնելու կարգի պարզաբանումը:
21. Բաժնետերերի կողմից լրացված և ստորագրված քվեաթերթիկները ուղարկվում են Խորհրդի քարտուղարին՝ Ժողովի կայացման օրվանից երեք օրվա ընթացքում էլեկտրոնային տարբերակով կամ փոստով՝ պատվիրված նամակով, կամ էլ առձեռն:
 22. Խորհրդի քարտուղարը անփոփում է քվեաթերթիկների արդյունքները և քվեարկության արդյունքում կազմում արձանագրություն: Քվեաթերթիկները կցվում են արձանագրությանը և Խորհրդի քարտուղարի կողմից գնափում և հանձնվում Բանկի արխիվ՝ պահպանության:
 23. Ժողովների արձանագրությունների հիման վրա կազմվում են Ժողովի որոշումները, որոնք համարակալվում են՝ նշելով Ժողովի անցկացման ամսաթիվը: Ժողովի որոշումները տպագրվում են և ստորագրվում Խորհրդի նախագահի կողմից:
 24. Ժողովի որոշումներն ընդունվում են Ժողովին մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:
 25. Որոշումների բնօրինակները պահպանվում են Խորհրդի քարտուղարի մոտ՝ մինչև սահմանված կարգով դրանք արխիվ հանձնելը:
 26. Ժողովի որոշումներով սահմանված ժամկետների պահպանման նկատմամբ վերահսկողությունը, տարածման և տեղեկացման գործընթացը դրվում է Խորհրդի քարտուղարի կամ այլ լիազորված աշխատակցի վրա:
 27. Ժողովի որոշումները կարող են ընդունվել այնպիսի նիստով, որի ժամանակ Ժողովի մասնակիցները կարող են հաղորդակցվել միմյանց հետ հեռախոսային, հեռուստակապի կամ այլ կապի միջոցով՝ իրական ժամանակի ռեժիմում:
- Նման կարգով Ժողովի նիստերի գումարման և անցկացման կարգը սահմանվում է Բանկի Խորհրդի որոշմամբ:

Խորհուրդը

1. Խորհուրդն իրականացնում է Բանկի գործունեության ընդհանուր ղեկավարումը օրենքով և Կանոնադրությամբ Խորհրդի իրավասությանը վերապահված հարցերի սահմաններում: Խորհուրդը կազմված է 5 /հինգ/ անդամներից: Խորհրդի անդամներն ընտրվում են տարեկան Ժողովում, իսկ Խորհրդի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում՝ արտահերթ Ժողովում՝ ներկա մասնակիցների կողմից: Ընդ որում Խորհրդի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշում ընդունելու հետ միաժամանակ արտահերթ Ժողովում պետք է որոշում կայացվի Խորհրդի նոր անդամի ընտրության մասին:
- Ժողովին Խորհրդի անդամների թեկնածուների վերաբերյալ առաջարկությունները կարող են ներկայացնել Բանկի բաժնետերերը, ինչպես նաև Խորհուրդը (բացառությամբ առաջին անգամ խորհրդի ձևավորման դեպքի):
- Խորհրդի անդամներն ընտրվում են «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:
2. Խորհուրդի իրավասությանն են պատկանում՝
 - ա) Բանկի գործունեության հիմնական ուղղությունների որոշումը, ներառյալ Բանկի հեռանկարային զարգացման ծրագրի հաստատումը,
 - բ) Ժողովի տարեկան և արտահերթ նիստերի գումարումը, օրակարգի հաստատումը, ինչպես նաև դրանց գումարման և անցկացման կազմակերպման հետ կապված՝ նախապատրաստական աշխատանքների իրականացման ապահովումը,
 - գ) Բանկի Գործադիր տնօրենի և Վարչության անդամների նշանակումը, նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը,
 - դ) Բանկում ներքին հսկողության ստանդարտների սահմանումը, Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման ձևավորումը, նրա տարեկան աշխատանքային ծրագրի հաստատումը, ներքին աուդիտի աշխատակիցների լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը,
 - ե) Բանկի տարեկան ծախսերի նախահաշվի ու կատարողականի հաստատումը,
 - զ) Բանկի ներքին վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը,
 - է) Բանկի կանոնադրական հիմնադրամի ավելացումը,
 - ը) շահութաբաժինների վճարման վերաբերյալ Ժողովին առաջարկությունների ներկայացումը, այդ թվում՝ շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող Բանկի մասնակիցների ցուցակի կազմումը, որում պետք է ընդգրկվեն Բանկի այն

մասնակիցները, որոնք ընդգրկվել են Բանկի մասնակիցների ռեեստրում՝ տարեկան Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակը կազմելու օրվա դրությամբ,

բ) Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների նախնական հաստատումը և Ժողովին ներկայացումը,

ժ) Ժողովի հաստատմանը Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի ներկայացումը,

ժա) Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձին վճարման չափի սահմանումը,

ժբ) Բանկում իրականացված աուդիտորական կամ այլ ստուգումների արդյունքում բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների նախաձեռնումն ու դրանց իրականացման վերահսկումը,

ժգ) Բանկի կողմից օրենքով սահմանված ֆինանսական գործառնությունների իրականացման կարգը սահմանող ներքին իրավական ակտերի ընդունումը,

ժդ) Բանկի տարածքային և ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունների հաստատումը, Բանկի ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների միջև գործառնության պարտականությունների բաշխումը,

ժե) Կանոնադրության 9.2.3 կետի «բ», «ժգ» ենթակետերով նախատեսված հարցերի ներկայացումը Ժողովի քննարկմանը,

ժզ) Բանկի պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխման մասին որոշման ընդունումը,

ժէ) Բանկի պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը,

ժը) Բանկի մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների ստեղծումը,

ժթ) Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության՝ հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու նպատակով կիրառվող սկզբունքների, հիմունքների, եղանակների, կանոնների, ձևերի և կարգերի սահմանումը,

ժի) դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը,

իա) դուստր կամ կախյալ ընկերություններին մասնակցությունը,

իբ) առևտրային կազմակերպությունների միությունների հիմնադրումը,

իգ) առևտրային կազմակերպությունների միություններում մասնակցությունը,

իդ) գույքի շուկայական արժեքի որոշումը,

իե) օրենքով նախատեսված այլ որոշումների ընդունումը:

3. Ներքին վերահսկողության նվազագույն պայմաններից ելնելով՝ Խորհուրդը, բացի վերը նշված իրավասություններից, իրականացնում է նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված ներքին հսկողության նվազագույն պայմաններով նախատեսված իրավասություններ:

4. Խորհրդի նիստերը պետք է գումարվեն առնվազն երկու ամիսը մեկ անգամ:

Խորհրդի նիստերը գումարում է Խորհրդի նախագահը՝ իր, Խորհրդի անդամի, Բանկի գլխավոր տնօրենի, Վարչության, ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի, Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի, Կենտրոնական բանկի խորհրդի, ինչպես նաև Բանկի քվեարկող բաժնետոմսերի 5 և ավելի տոկոս ունեցող բաժնետիրոջ (բաժնետերերի) գրավոր պահանջով:

5. Խորհրդի նիստերի քվորումը համարվում է ապահովված, եթե Խորհրդի նիստերին մասնակցում են Խորհրդի անդամների առնվազն 2/3-ը: Քվեարկության ժամանակ Խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: Խորհրդի որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ:

Խորհրդի նիստերի բոլոր հարցերի քննարկումը կարող է տեղի ունենալ միայն Բանկի Գործադիր տնօրենի պարտադիր մասնակցությամբ, բացառությամբ Գործադիր տնօրենի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման, ինչպես նաև նրա վարձատրության պայմանների հաստատման հարցերի: Բանկի Գործադիր տնօրենը մասնակցում է Խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով:

6. Խորհրդի նիստերը նախագահում է Խորհրդի նախագահը, նրա բացակայության դեպքում՝ Խորհրդի անդամներից մեկը՝ խորհրդի անդամների ընտրությամբ:

7. Խորհրդի նախագահը հերթականությամբ ներկայացնում է օրակարգում ընդգրկված հարցերը և հրավիրում յուրաքանչյուր հարցի մասով համապատասխան զեկուցողին:

8. Հարցի վերաբերյալ զեկուցումը լսելուց հետո, անհրաժեշտության դեպքում, զեկուցողը տալիս է պարզաբանումներ Խորհրդի անդամների կողմից առաջադրվող հարցերին:

9. Չեկուցվող հարցի վերաբերյալ քննարկումներն ավարտելուց հետո Խորհրդի նախագահը, քննարկվող հարցի վերաբերյալ Խորհրդի կողմից որոշում կայացնելու համար քննարկման արդյունքում ձևակերպված առաջարկություն/ներ/ը դնում է քվեարկության:

10. Խորհրդի քվեարկության արդյունքները հաշվում և անփափում է Խորհրդի քարտուղարը: Քվեարկության արդյունքները հայտարարվում են տվյալ Խորհրդի նիստում:

11. Խորհրդի նիստերը արձանագրվում են Խորհրդի քարտուղարի կողմից: Խորհրդի արձանագրությունը կազմվում է դրա ավարտից 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ առնվազն 2 օրինակով, որոնք ստորագրում են Խորհրդի նախագահը, անդամները և քարտուղարը: Խորհրդի նիստերի արձանագրությունները ներկայացվում են ներքին աուդիտի ստորաբաժանմանը ստորագրման պահից առնվազն 10 օրվա ընթացքում:

12. Խորհրդի նիստերը կարող են գումարվել հեռակա կարգով, որոնք գումարվում են Կանոնադրությամբ հեռակա կարգով Ժողովների գումարման համար սահմանված կարգով:

13. Խորհրդի որոշումները կարող են ընդունվել այնպիսի նիստով, որի ժամանակ Խորհրդի անդամները կարող են հաղորդակցվել միմյանց հետ հեռախոսային, հեռուստակապի կամ այլ կապի միջոցով՝ իրական ժամանակի ռեժիմում:

Նման կարգով Խորհրդի նիստերի գումարման և անցկացման կարգը սահմանվում է Բանկի Խորհրդի որոշմամբ:

14. Խորհուրդն իր աշխատանքն արդյունավետ կազմակերպելու նպատակով կարող է ստեղծել հանձնաժողովներ: Խորհրդին կից հանձնաժողովներում կարող են ընդգրկվել Խորհրդի անդամները և Բանկի այլ ղեկավարներ կամ աշխատակիցներ: Խորհրդին կից հանձնաժողովների որոշումներն ունեն խորհրդակցական բնույթ:

15. Խորհուրդը պատասխանատու է բանկի բնականոն և արդյունավետ գործունեության, Բանկի ակտիվների պահպանության, Բանկի բաժնետերերին, Կենտրոնական բանկին և հասարակությանը ճշգրիտ ու արժանահավատ տեղեկատվություն ներկայացնելու, ինչպես նաև Բանկի գործադիր մարմնի վերահսկման համար:

Խորհուրդը, ինչպես նաև գործադիր մարմինը, պատասխանատու են բանկում էթիկական նորմերի, ինչպես նաև մասնագիտական վարքագծի կանոնների ձևավորման և ներդրման համար:

Գործադիր մարմինը

1. Բանկի ընթացիկ գործունեության ղեկավարումը իրականացնում է միանձնյա գործադիր մարմնի՝ գործադիր տնօրենի և կոլեգիալ գործադիր մարմնի՝ Բանկի վարչության (այսուհետ՝ «Վարչություն») կողմից: Գործադիր տնօրենը հանդիսանում է վարչության նախագահը:

2. Գործադիր տնօրենի և վարչության իրավասությանն են պատկանում Բանկի ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը, բացառությամբ Կանոնադրությամբ Ժողովի և Խորհրդի բացառիկ իրավասությանը վերապահված հարցերի:

3. Գործադիր տնօրենի նշանակումը և Վարչության ձևավորումը, ինչպես նաև նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը կատարվում է Խորհրդի որոշմամբ:

4. Վարչությունը ներառում է Գործադիր տնօրենին, նրա տեղակալին (տեղակալներին), գլխավոր հաշվապահին, Իրավաբանական վարչության պետին և Ռ-իսկերի կառավարման վարչության պետին: Վարչության կազմում ընդգրկված ղեկավարները հանդիսանում են Բանկի ղեկավարներ և իրենց լիազորությունները կարող են իրականացնել միայն որակավորման ու մասնագիտական համապատասխանության վկայականի առկայության դեպքում: Առանց որակավորման և մասնագիտական համապատասխանության վկայականի Բանկի ղեկավար աշխատելու պայմաններն ու ժամկետները սահմանվում են ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով:

5. Վարչությունը գործում է ՀՀ օրենքների, Կանոնադրության, ինչպես նաև Խորհրդի կողմից հաստատված Բանկի ներքին իրավական ակտերի հիման վրա, որոնք առավել մանրամասն սահմանում են Վարչության նիստերի իրավիքման ու անցկացման ժամկետներն ու կարգը, ինչպես նաև նրա կողմից որոշումների ընդունման կարգը:

6. Վարչության նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության՝ Գործադիր տնօրենի կամ Վարչության առնվազն 2 (երկու) անդամների նախաձեռնությամբ:

7. Վարչությունն իրավասու է, եթե նիստին ներկա են Վարչության անդամների առնվազն 1/2-ը: Որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ: Հավասար ձայների դեպքում Վարչության նախագահի ձայնը որոշիչ է:

8. Գործադիր տնօրենի, Վարչության անդամների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են ՀՀ նորմատիվ իրավական ակտերով և/կամ Բանկի ու նրանցից յուրաքանչյուրի հետ կնքված աշխատանքային պայմանագրով: Վարչության անդամների՝ որպես Բանկի պաշտոնյաների, հետ աշխատանքային պայմանագրերը Բանկի անունից ստորագրում է Խորհրդի նախագահը կամ Խորհրդի կողմից լիազորված այլ անձ:

Գործադիր տնօրենը և Վարչության անդամներն այլ կազմակերպություններում կարող են վճարովի պաշտոններ զբաղեցնել միայն Խորհրդի համաձայնությամբ:

9. Վարչության իրավասությանն են պատկանում.

- ա) Բանկի կողմից կիրառվող սակագների և դրույքների սահմանումը,
- բ) Բանկի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց միջնորդավճարների սահմանումը,
- գ) ծառայությունների և բանկային գործիքների պայմանների հաստատումը,
- դ) Բանկի ակտիվների և պասիվների կառավարումը,
- ե) Բանկի պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումը,
- զ) ներքին կարգապահության կանոնների հաստատում,
- է) աշխատանքի նկարագրերի (պաշտոնեական հրահանգների) հաստատում,
- ը) Բանկի հրապարակային պայմանագրերի օրինակելի ձևերի հաստատումը,
- թ) Բանկի ընթացիկ գործունեության հետ կապված այլ՝ Գործադիր տնօրենի իրավասությանը չվերապահված հարցերի լուծումը:

10. Վարչության նիստերը կազմակերպում և վարում է Գործադիր տնօրենը, որն ի պաշտոնե հանդիսանում է Վարչության նախագահը: Վերջինիս բացակայության դեպքում Վարչության նիստերը կազմակերպում և վարում է Գործադիր տնօրենի տեղակալներից մեկը:

11. Վարչության նախագահը հերթականությամբ ներկայացնում է օրակարգում ընդգրկված հարցերը և հրավիրում յուրաքանչյուր հարցի մասով համապատասխան զեկուցողին:

12. Հարցի վերաբերյալ զեկուցումը լսելուց հետո, անհրաժեշտության դեպքում, զեկուցողը տալիս է պարզաբանումներ Վարչության անդամների կողմից առաջադրվող հարցերին:

13. Ձեկուցվող հարցի վերաբերյալ քննարկումներն ավարտելուց հետո Վարչության նախագահը, քննարկվող հարցի վերաբերյալ Վարչության կողմից որոշում կայացնելու համար քննարկման արդյունքում ձևակերպված առաջարկություն/ներ/ը դնում է քվեարկության:

14. Վարչության քվեարկության արդյունքները հայտարարվում են տվյալ Վարչության նիստում: Քվեարկության արդյունքները հայտարարվում են տվյալ Վարչության նիստում:

15. Վարչության նիստերը արձանագրվում են քարտուղարի կողմից: Վարչության նիստի արձանագրությունը կազմվում է դրա ավարտից 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ առնվազն 1 օրինակով, որը ստորագրում են Վարչության նախագահը, անդամները և քարտուղարը:

16. Վարչության նիստերի արձանագրությունները ներկայացվում են Խորհրդին, Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձին՝ վերջիններիս պահանջով, ինչպես նաև ներքին աուդիտի ստորաբաժանմանը՝ ստորագրման պահից առնվազն 10 օրվա ընթացքում:

Գործադիր տնօրենը պատասխանատվություն է կրում արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:

17. Գործադիր տնօրենը՝

ա) տնօրինում է Բանկի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Բանկի անունից, այդ թվում՝ տրամադրում է բանկային երաշխիքներ,

բ) ներկայացնում է Բանկը Հայաստանի Հանրապետությունում և նրա տարածքից դուրս,

գ) տալիս է լիազորագրեր,

դ) գործում է Բանկի անունից առանց լիազորագրի,

ե) սահմանված կարգով կնքում է պայմանագրեր,

զ) Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Բանկի աշխատանքային կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների կանոնադրությունները, Բանկի վարչակազմակերպական կառուցվածքը, ինչպես նաև Վարչության կողմից հավանության արժանացած ներքին ակտերը, բացառությամբ այն ներքին ակտերի, որոնց հաստատման իրավասությունը վերապահված է Վարչությանը,

է) հաստատում է Բանկի աշխատատեղերը,

ը) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, սահմանում է աշխատակիցների պարտականությունները, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ, և վերահսկում է դրանց կատարումը,

թ) սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և ազատում Բանկի աշխատակիցներին և կնքում աշխատանքային պայմանագրեր, բացառությամբ Ժողովի և Խորհրդի կողմից նշանակվող անձանցից,

ժ) Բանկի աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ,

ժա) ստեղծում է մշտական և/կամ/ ընթացիկ աշխատանքային հանձնաժողովներ,

ժբ) կազմում, ստորագրում և պետական լիազորված մարմին է ներկայացնում ՀՀ նորմատիվ իրավական ակտերով սահմանված հաշվետվություններ, այդ թվում՝ ֆինանսական հաշվետվություններ,

ժգ) ստորագրում է Վարչության նիստերի արձանագրություններն ու որոշումները,

ժդ) բացում է բանկային հաշիվներ,

ժե) պարտավոր է Բանկի հիմնադիրների /բաժնետերերի/ պահանջով հատուցել իր կողմից Բանկին պատճառված վնասները, եթե այլ բան չի նախատեսված օրենքով կամ պայմանագրով,

ժզ) գործում է ՀՀ իրավական ակտերի և Կանոնադրության հիման վրա.

ժէ) իրավունք ունի առանց Ժողովի և/կամ/ Խորհրդի նախնական համաձայնության գործարքներ կնքել Բանկի անունից, եթե գործարքի գումարը չի գերազանցում Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 25 տոկոսը,

ժը) կազմակերպում է Ժողովի, Խորհրդի և Վարչության կողմից ընդունված որոշումների կատարումը, հաշվետու է Ժողովին, Խորհրդին ու Վարչությանը և իրավունք չունի Ժողովի, Խորհրդի անդամների համար պարտադիր որոշումներ կայացնելու,

ժթ) իրականացնում է օրենքով կամ Կանոնադրությամբ Ժողովի, Խորհրդի, ներքին աուդիտի ստորաբաժանման իրավասությանը չվերապահված այլ լիազորություններ

ի) կարող է ունենալ տեղակալներ, խորհրդակալներ, որոնց իրավասությունները սահմանվում են Բանկի ներքին ակտերով,

իա) արձակում է հրաման իր բացակայության կամ պաշտոնեական պարտականությունների կատարման անհնարինության դեպքում իր պարտականությունները տեղակալներից մեկի վրա դնելու մասին,

իբ) որոշում է Բանկի պայմանագրերով հատուկ պայմաններ կիրառելու մասին,

իզ) մինչև լուծարման հանձնաժողովի ձևավորումն իրականացնում է լուծարման հանձնաժողովի լիազորությունները,

իդ) իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ իրավասություններ:

18. Ներքին վերահսկողության նվազագույն պայմաններից ելնելով՝ Գործադիր տնօրենը, բացի վերը նշված իրավասություններից, իրականացնում է նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված ներքին հսկողության նվազագույն պայմաններով նախատեսված իրավասություններ:

Ներքին աուդիտի ստորաբաժանում

1. Ներքին աուդիտի ստորաբաժանման /այսուհետ՝ ներքին աուդիտ/ ղեկավարը և անդամները նշանակվում են Խորհրդի կողմից: Ներքին աուդիտի անդամ չեն կարող լինել Բանկի կառավարման մարմինների անդամները, այլ ղեկավարներ ու աշխատակիցներ, ինչպես նաև Գործադիր մարմնի անդամների հետ փոխկապակցված անձինք:

Ներքին աուդիտի ղեկավարը և անդամները պարտավոր են պահպանել Բանկի աշխատակիցների համար սահմանված աշխատանքային կարգապահությունը:

2. Ներքին աուդիտը Խորհրդի կողմից հաստատված կանոնակարգի համաձայն՝

ա) հսկողություն է իրականացնում Բանկի ընթացիկ գործունեության և գործառնական ռիսկերի նկատմամբ,

բ) հսկողություն է իրականացնում Գլխավոր տնօրենի, Վարչության, Բանկի տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների կողմից օրենքների, այլ իրավական ակտերի և Բանկի ներքին ակտերի, Գլխավոր տնօրենին, Վարչությանը տրված հանձնարարականների կատարման նկատմամբ,

գ) եզրակացություններ և առաջարկություններ է տալիս Խորհրդի ներկայացրած, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ առաջադրած հարցերի վերաբերյալ:

Ներքին աուդիտի իրավասություններին վերաբերող հարցերը չեն կարող փոխանցվել Բանկի կառավարման մարմինների կամ այլ անձանց լուծմանը:

3. Ներքին աուդիտի ղեկավարը Խորհրդին, Վարչությանը և Գլխավոր տնօրենին է ներկայացնում հետևյալ հաշվետվությունները՝

ա) հերթական՝ տարեկան ծրագրով սահմանված ստուգումների արդյունքների մասին,

բ) արտահերթ, եթե բացահայտվել են ներքին աուդիտի հիմնավորված կարծիքով էական խախտումներ, ընդ որում, եթե խախտումները հետևանք են Գլխավոր տնօրենի, Վարչության կամ Խորհրդի գործողությունների կամ անգործության, ապա հաշվետվությունը ներկայացվում է անմիջապես Խորհրդի նախագահին:

Սույն մասով նախատեսված դեպքերում հաշվետվությունները ներկայացվում են խախտումը հայտնաբերելուց առավելագույնը երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Ներքին աուդիտն օրենքների, այլ իրավական ակտերի խախտումներ բացահայտելու դեպքում պարտավոր է դրանք ներկայացնել Բանկի Խորհրդին՝ միաժամանակ առաջարկելով այդ խախտումների վերացման և ապագայում չկրկնման ուղղությամբ ձեռնարկվելիք միջոցառումներ:

բ. Տեղեկություններ թողարկողի կառավարմանը մասնակցող յուրաքանչյուր անձի վերաբերյալ՝

Անուն ազգանուն	Պաշտոնը	Բնակության վայրը (հասցեն)	մասնագիտությունը	վերջին 3 տարիներում զբաղեցրած պաշտոնները այդ թվում համատեղությամբ
Արմեն Տեր-Տաճատյան	Խորհրդի նախագահ	ՀՀ, ք. Երևան, Չեխովի 10, բն. 120	Իրավաբան	«Տեր-Տաճատյան» իրավաբանական խորհրդատվական ՓԲԸ, հիմնադիր-տնօրեն «Կոմվերս Բանկ» ՓԲԸ Խորհրդի անդամ է դարձել 15.03.2007թ.
Ջուսան Պաբլո Գեչիդջյան	Խորհրդի անդամ	ՀՀ, ք. Երևան, 0042, Զվարթնոց Միջազգային օդանավակայան (գործունեության վայրը)	Գործարար Վարչարարության մասնագետ	«Արմենիա» Միջազգային օդանավակայանների տնօրեն, «Տիեռաս դե Արմենիա» ՓԲԸ տնօրեն, «Կոմվերս Բանկ» ՓԲԸ Խորհրդի անդամ է դարձել 12.04.2007թ.
Ջեյմս Ռիչարդ Չիկ	Խորհրդի անդամ	ԱՄՆ, Ջորջիա	Միջազգային ծառայությունների մագիստրոս	«Կոմվերս Բանկ» ՓԲԸ Խորհրդի անդամ է դարձել 24.05.2007թ.
Ադամ Տոնիկյան	Խորհրդի անդամ	ՀՀ, ք. Էջմիածին, Արագածի գ, շենք 14, բն. 13	Տնտեսագետ	«Կոմվերս Բանկ» ՓԲԸ Խորհրդի անդամ է դարձել 15.03.2007թ.

Մաքիաս Գեյնգա Էրնեկյան	Խորհրդի անդամ	Արգենտինայի հանրապետություն 1339, Լոս Կեդրոս	Տնտեսագետ	2004-2006 թթ. Aeropuertos Argentina 2000, ֆինանսական խորհրդատու: 2006-2007թթ. Caminos de America, առևտրի ոլորտի կառավարիչ: 2007թ. մինչ օրս Proden SA բաժնետիրական ընկերության նոր բիզնեսի գծով տնօրեն: «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Խորհրդի անդամ է դարձել 10.2008թ.
Արարատ Ղուկասյան	Գործադիր Տնօրեն, Վարչության նախագահ	ՀՀ, ք. Երևան, Նորք Մարաշ, 6-րդ փ., 1-ին նրբանցք, տուն 5	Ֆիզիկոս	Էյչ-Էս-Բի-Սի խումբ, մասնավորապես HSBC Բանկ Հայաստան ՓԲԸ, HSBC Բանկ Մալթա և Ուկրաինա: «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ում Գլխավոր տնօրեն է նշանակվել 18.12.2007թ.
Ռուբեն Կույան	Գործադիր Տնօրենի տեղակալ-գործառնական և բանկային ավտոմատացված համակարգերի վարչության պետ, Վարչության անդամ	ՀՀ, ք. Երևան, Բաշինջաղյան 192, բն. 22	Տնտեսագիտական կիբեռնետիկա	Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան, «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ում Գլխավոր տնօրենի տեղակալ է նշանակվել 03.03.2008թ.
Տիգրան Դավթյան	Գործադիր Տնօրենի տեղակալ-ֆինանսական շուկաների վարչության պետ, Վարչության անդամ,	ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 43, բն. 16	Տնտեսագետ-մաթեմատիկոս	USAID/EMG «Ֆինանսական շուկաների զարգացման ծրագիր» Հայաստանում որպես ֆինանսական միջնորդության աշխատախմբի ղեկավար «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ում Գլխավոր տնօրենի տեղակալ է նշանակվել 02.04.2008թ.
Սուրեն Ջոհրաբյան	Գործադիր Տնօրենի տեղակալ-մասնաճյուղերի և բանկային ծառայությունների վարչության պետ,	ՀՀ, ք. Երևան, Ա. Տիգրանյան 35/1	Բժիշկ, Գործարար Ղեկավարման մագիստրոս	Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան, հաճախորդների սպասարկման բաժնի ղեկավար, մասնաճյուղերի կառավարիչ, «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ում Գործադիր տնօրենի տեղակալ 07.08.2008թ.
Արթուր Մխիթարյան	Գործադիր տնօրենի տեղակալ-Առևտրավարկային վարչության պետ, Վարչության անդամ	ՀՀ, ք.Երևան, Ծովրդյան 14 բն. 6	Շինարարության Էկոնոմիկա և կառավարում	Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան, «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ում Գործադիր տնօրենի տեղակալ - Առևտրավարկային Վարչության պետի ժ/պ է նշանակվել 06.03.2008թ.
Արշակ Կարախանյան	Գլխավոր հաշվապահ-հաշվապահական հաշվառման վարչության պետ, Վարչության անդամ	ՀՀ, ք. Երևան, Ա. Հովհաննիսյան 12, բն. 9	Տնտեսագետ	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ում Գլխավոր հաշվապահ 1998թ.-ից
Ռուբեն Հովհաննիսյան	Իրավաբանական վարչության պետ	ՀՀ, ք. Երևան, Բաշինջաղյան 1փ. 7շ., բն. 2	Իրավաբան	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ում իրավաբանական վարչության պետ 2002թ.-ից
Անդրանիկ Բարսեղյան	Ռիսկերի կառավարման վարչության պետ	ՀՀ, ք. Երևան, Ավան, Չարենցի 16-21	Ճարտարագետ	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ում ռիսկերի կառավարման վարչության պետ 2003թ.-ից
Լիլիթ Յորդանյան	Ներքին վերահսկողության ծառայության պետ-գլխավոր վերստուգիչ	ՀՀ, ք. Երևան, Ավան-Առինջ, 2. 2/7, բն. 25	Տնտեսագետ, Գործարար Ղեկավարման Մագիստրոս	2003-2008թթ.«Ընչ Փի Էմ Ջի Արմենիա» ՓԲԸ, «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ում Ներքին վերահսկողության ծառայության պետ 08.09.2008թ.-ից
Սերգեյ Ջհանգիրյան	Ներքին վերահսկողության ծառայության անդամ	ՀՀ, ք. Երևան, Տիգրան Մեծ 33 բն. 13	տնտեսագետ	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ում Ներքին վերահսկողության ծառայության անդամ 2004թ.-ից
Տաճատ Խերանյան	Ներքին վերահսկողության ծառայության անդամ	ՀՀ, ք. Երևան, Կոթյունի 7/1, բն 35	տնտեսագետ	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ում Ներքին վերահսկողության ծառայության անդամ 2005թ.-ից

գ. Բանկի և Բանկի կառավարմանը մասնակցող անձանց միջև շահերի բախման դեպքեր չեն եղել:

Բանկի հետ փոխկապակցված անձանց, թողարկողի նշանակալից մասնակիցների վերաբերյալ տեղեկություններ

Բանկի հետ փոխկապակցված անձանց մասին տեղեկություններ

ա.Բանկի հետ փոխկապակցված ֆիզիկական անձինք եմ

N	Անուն Ազգանունը	Բանկի կառավարման մարմիններում զբաղեցրած պաշտոնը վերջին 3 տարվա ընթացքում	Անձին պատկանող Բաժնային արժեթղթերի քանակը (հատ) (տոկոս)		Փոխկապակցվածության բնույթը		
1	Արմեն Տեր-Տաճատյան	Խորհրդի նախագահ, 2007թ. մարտի 21-ից(ՀՀ ԿԲ թիվ 1/362Ա որոշում) «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի թիվ 3 արձանագրություն առ 23.02.07թ.:			«Բանկերի և Բանկային գործունեության մասին» ՀՀ Օրենքի 8-րդ հոդվածի մաս 3, կետ գ.		
			Անդրանիկ Տեր-Տաճատյան				հայրը
			Մանուշակ Հովհաննիսյան				մայրը
			Լիանա Սահակյան				կինը
			Դավիթ Տեր-Տաճատյան				որդի
			Հայկ Տեր-Տաճատյան				որդի
			Գեորգի Սահակյան				կնոջ հայր
			Սեդիկ Սահակյան				կնոջ մայր
			Նարինե Ղալումյան				քույր
			Սամվել Ղալումյան				քրոջ ամուսին
			Սուրեն Ղալումյան				քրոջ տղա
			Տիգրան Ղալումյան				քրոջ տղա
			Արսեն Տեր-Տաճատյան				եղբայր
			Անահիտ Տեր-Տաճատյան				եղբոր կին
Էսվիրա Տեր-Տաճատյան			եղբոր աղջիկ				
2	Ջուան Պարլո Գեչիջյան	Խորհրդի անդամ, 2007թ. ապրիլի 18-ից (ՀՀ ԿԲ թիվ 1/518Ա որոշում) «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի թիվ 3 արձանագրություն առ 23.02.07թ.:			«Բանկերի և Բանկային գործունեության մասին» ՀՀ Օրենքի 8-րդ հոդվածի մաս 3, կետ գ.		
			Պարլո Գեչիջյան				հայրը
			Մարիա Լաուրա Ռոջաս				կինը
			Մերսեդես Ալվարես				դուստրը
			Գուադալուպե Ալվարես				որդի
			Թոմաս Գեչիջյան				որդի
			Վիկտորիա Գեչիջյան				դուստր
			Ժայնե Ռոջաս				կնոջ հայրը
			Նորմա Գոնզալես				կնոջ մայրը
			Էդուարդո Գեչիջյան				եղբայրը
			Մարիա Մեսիյա Գեչիջյան				քույրը
3	Ջեյմս Ռիչարդ Չիկ	Խորհրդի անդամ, 2007թ. մայիսի 31-ից (ՀՀ ԿԲ թիվ 1/701Ա որոշում) «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի թիվ 3 արձանագրություն առ 23.02.07թ.:			«Բանկերի և Բանկային գործունեության մասին» ՀՀ Օրենքի 8-րդ հոդվածի մաս 3, կետ գ.		
			Կարոլ Չիկ				կինը
			Լիզա Չիկ				դուստր
			Ֆորեստ Չիկ				որդի
			Սուրյա Չիկ				որդի
4	Ադամ Տոնիկյան	Խորհրդի անդամ, 2007թ. մարտի			«Բանկերի և		

		21-ից(ՀՀ ԿԲ թիվ 1/362Ա որոշում)			Բանկային գործունեության մասին» ՀՀ Օրենքի 8-րդ հոդվածի մաս 3, կետ գ.
	Տոնիկ Տոնիկյան				հայրը
	Անահիտ Տոնիկյան				մայրը
	Եսայի Տոնիկյան				եղբայրը
	Լուսինե Բարսեղյան				եղբոր կինը
	Անահիտ Տոնիկյան				եղբոր դուստրը
	Տիգրան Տոնիկյան				եղբոր որդի
	Արմեն Տոնիկյան				եղբայրը
	Մարինե Խաչատրյան				եղբոր կինը
	Գայանե Տոնիկյան				եղբոր դուստրը
5	Մաթիա Գեյնգա Էրնեկյան	Խորհրդի անդամ 2008թ. հոկտեմբեր 31-ից(ՀՀ ԿԲ թիվ 1/1065Ա որոշում) «Կոմվերս Բանկ» ՓԲԸ Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի թիվ 4 արձանագրություն առ 29.06.07թ.			«Բանկերի և Բանկային գործունեության մասին» ՀՀ Օրենքի 8-րդ հոդվածի մաս 3, կետ գ.
	Միլվիա Էրնեկյան				մայրը
	Ալբերտո Գեյնգա				հայրը
	Մուրատ Էրնեկյան				պապիկը
	Լուիզա Սկրինյա				տատիկը
	Մարիա Գեյնգա Էրնեկյան				քույրը
	Էգեթիել Գեյնգա Էրնեկյան				եղբայրը
	Սոլ Դեպյան				եղբոր կինը
	Վալենտինա Գեյնգա				զարմուհին
	Օլիվիա Գեյնգա				զարմուհին
	Ալբերտո Գեյնգա Էրնեկյան				եղբայրը
6	Արարատ Դուկասյան	Գործադիր Տնօրեն-Վարչության նախագահ, 2007թ. դեկտեմբերի 18-ից (Խորհրդի թիվ 16 արձանագրություն)			«Բանկերի և Բանկային գործունեության մասին» ՀՀ Օրենքի 8-րդ հոդվածի մաս 3, կետ գ.
	Մարգարիտ Զարգարյան				մայրը
	Ազնիվ Մարգարյան				կինը
	Տարոն Դուկասյան				որդի
	Տաթևիկ Դուկասյան				դուստր
	Արտուշ Դուկասյան				եղբայրը
	Անուշ Քեչիշ-Դուկասյան				քույրը
7	Ռուբեն Կոպյան	Գործադիր Տնօրենի տեղակալ-գործառնական և բանկային ավտոմատացված համակարգերի վարչության պետ, Վարչության անդամի ժ/պ, 2008թ. փետրվարի 29-ից (Խորհրդի թիվ 2 արձանագրություն) Գործադիր Տնօրենի տեղակալ-գործառնական և բանկային ավտոմատացված համակարգերի վարչության պետ, Վարչության անդամ մայիսի 29-ից («Կոմվերս Բանկ» ՓԲԸ Խորհրդի առ 29.05.08թ. թիվ 7 արձանագրություն 3-րդ հարց)			«Բանկերի և Բանկային գործունեության մասին» ՀՀ Օրենքի 8-րդ հոդվածի մաս 3, կետ գ.
	Միհրան Կոպյան				հայրը
	Ռոզա Կոպյան				մայրը
	Մերի Մարգարյան				կինը
	Մելս Մարգարյան				կնոջ հայրը
	Մուսաննա Ախոյան				կնոջ մայրը
	Վարդան Կոպյան				եղբայր

	Սաքեմիկ Կոլլան				եղբոր կինը
8	Սուրեն Զոհրաբյան	2006-2007թթ. հաճախորդների սպասարկման բաժնի ղեկավար, 2007-2008թթ. մասնաճյուղերի կառավարիչ, 07.08.2008թ.ից Գործադիր Տնօրենի տեղակալ-մասնաճյուղերի և բանկային ծառայությունների վարչության պետ,			«Բանկերի և Բանկային գործունեության մասին» ՀՀ Օրենքի 8-րդ հոդվածի մաս 3, կետ գ.
	Արշակ Զոհրաբյան				հայրը
	Նատալի Զրյան				մայրը
	Զառա Սողախյան				կինը
	Նատալի Զոհրաբյան				ղուստորը
	Մարինա Սողախյան				կնոջ մայրը
	Գագրի Սողախյան				կնոջ հայրը
	Սուրեն Զոհրաբյան				պապը
9	Տիգրան Դավթյան	Գործադիր Տնօրենի տեղակալ-ֆինանսական շուկաների վարչության պետ, Վարչության անդամի ժ/պ, 2008թ. փետրվարի 29-ից (Խորհրդի թիվ 2 արձանագրություն) Գործադիր Տնօրենի տեղակալ-ֆինանսական շուկաների վարչության պետ, Վարչության անդամ մայիսի 29-ից («Կոնվերս Բանկ» ՓԲԸ Խորհրդի առ 29.05.08թ. թիվ 7 արձանագրություն 2-րդ հարց)			«Բանկերի և Բանկային գործունեության մասին» ՀՀ Օրենքի 8-րդ հոդվածի մաս 3, կետ գ.
	Շյուրս Դավթյան				հայրը
	Թերեզա Դավթյան				մայրը
	Մարինա Հակոբյան				կինը
	Արմեն Հակոբյան				կնոջ հայրը
	Լարիսա Հակոբյան				կնոջ մայրը
	Կարեն Դավթյան				եղբայրը
	Մագդա Դավթյան				եղբոր կինը
	Երանուհի Դավթյան				եղբոր ղուստորը
	Դավիթ Դավթյան				եղբոր տղան
	Հովիկ Դավթյան				եղբայրը
	Վարդի Դավթյան				եղբոր կինը
	Թերեզա Դավթյան				եղբոր ղուստորը
	Էդգար Դավթյան				եղբոր տղան
	Ալեքսանդր Դավթյան				եղբոր տղան
10	Արթուր Մխիթարյան	Գործադիր Տնօրենի տեղակալ-առևտրավարկային վարչության պետ			«Բանկերի և Բանկային գործունեության մասին» ՀՀ Օրենքի 8-րդ հոդվածի մաս 3, կետ գ.
	Վալենտին Մխիթարյան				հայրը
	Ռուզաննա Գրիգորյան				մայրը
	Հասմիկ Սկրտչյան				կինը
	Սիեր Մխիթարյան				որդի
	Մարիամ Մխիթարյան				ղուստոր
	Վահան Մխիթարյան				որդի
11	Անդրանիկ Բարսեղյան	Ռիսկերի կառավարման վարչության պետ, Վարչության անդամ			«Բանկերի և Բանկային գործունեության մասին» ՀՀ Օրենքի 8-րդ հոդվածի մաս 3, կետ գ.
	Վոլոդյա Բարսեղյան				հայրը
	Մարգարիտա Բարսեղյան				մայրը
	Լուսինե Պողոսյան				կինը
	Ալեքսանդր Բարսեղյան				որդին
	Էդիկ Պողոսյան				կնոջ հայրը

	Էլեոնորա Խաչատրյան			կնոջ մայրը
	Լուսինե Պետրոսյան			քույրը
	Ասատուր Պետրոսյան			քրոջ ամուսինը
	Դավիթ Պետրոսյան			քրոջ որդին
	Տիգրան Պետրոսյան			քրոջ որդին
12	Ռուբեն Հովհաննիսյան	Իրավաբանական վարչության պետ, Վարչության անդամ		«Բանկերի և Բանկային գործունեության մասին» ՀՀ Օրենքի 8-րդ հոդվածի մաս 3, կետ գ.
	Հենրիկ Հովհաննիսյան			հայրը
	Քնարիկ Հովհաննիսյան			մայրը
	Նինա Հովհաննիսյան			կինը
	Հենրիկ Հովհաննիսյան			որդին
	Օլգա Նասիբյան			դուստրը
	Կարեն Հովհաննիսյան			որդին
	Զինաիդա Պուպկովա			կնոջ մայրը
	Մելսիդա Ռոստոմաշվիլի			քրոջ դուստրը
13	Լիլիթ Յորդանյան	Ներքին վերահսկողության ծառայության պետ-գլխավոր վերստուգիչ 2008թ. սեպտեմբերի 8-ից		«Բանկերի և Բանկային գործունեության մասին» ՀՀ Օրենքի 8-րդ հոդվածի մաս 3, կետ գ.
	Հովսեփ Յորդանյան			հայրը
	Անահիտ Պապիկյան			մայրը
	Լիանա Յորդանյան			քույրը
	Օլյա Յորդանյան			քույրը
	Շուշիկ Խաչատրյան			տատիկը
14	Արշակ Կարախանյան	Գլխավոր հաշվապահ-հաշվապահական վարչության պետ, Վարչության անդամ. 2000թ. հոկտեմբերի 6-ից (Խորհրդի թիվ 3 արձանագրություն)		«Բանկերի և Բանկային գործունեության մասին» ՀՀ Օրենքի 8-րդ հոդվածի մաս 3, կետ գ.
	Ռոզա Բարսյան			կինը
	Նարինե Կարախանյան			դուստր
	Կարեն Կարախանյան			որդի
15	Սերգեյ Ջհանգիրյան	Ներքին վերահսկողության ծառայության անդամ		«Բանկերի և Բանկային գործունեության մասին» ՀՀ Օրենքի 8-րդ հոդվածի մաս 3, կետ գ.
	Միշա Ջհանգիրյան			հայրը
	Ռիտա Թադևոսյան			մայրը
	Հասմիկ Ջհանգիրյան			քույրը
	Արտուր Սարգսյան			քրոջ ամուսինը
	Արշալույս Գալստյան			տատիկը
	Ալեքսանդր Սարգսյան			քրոջ երեխան
16	Տաճատ Խերանյան	Ներքին վերահսկողության ծառայության անդամ		«Բանկերի և Բանկային գործունեության մասին» ՀՀ Օրենքի 8-րդ հոդվածի մաս 3, կետ գ.
	Վահան Խերանյան			հայրը
	Օնիկ Խերանյան			եղբայրը
	Ռուզան Մուսեյան			կինը
	Կարինե Մուրադյան			մայրը

բ. Բանկի հետ փոխկապակցված իրավաբանական անձինք են

N	Անվանումը	Գտնվելու վայրը	Անձի կողմից իրականացվող գործունեության հակիրճ նկարագրությունը	Անձին պատկանող Բաժնային արժեթղթերի քանակը (հատ) (տոկոս)		Փոխկապակցվածության բնույթը
1	«Ընդվանդ Գլոբալ Ինվեսթմենթս» ՍՊԸ	ԱՄՆ, Դելավեր նահանգ, Ուիլմինգթոն Դելավեր 19808 Սենթրվիլ 2711 սեն. 400	Ընկերության նպատակն է իրականացնել վարել ցանկացած օրինական գործունեություն, որի համար կարող են ստեղծվել սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ և իրականացնել դրա համար անհրաժեշտ բոլոր գործառնությունները, հատկապես բանկային կամ ֆինանսական գործունեության իրականացումը ուղղակիորեն կամ այլ դուստր ընկերությունների միջոցով:	11714	95	բաժնետեր, «Բանկերի և Բանկային գործունեության մասին» Օրենքի 8-րդ հոդվածի մաս 1, կետ ա.
2	«Արմենիան Փոստբանկ» ՓԲԸ	ՀՀ ք. Երևան, Սարյան 22	Բանկային գործունեություն (ընկերությունը դեռևս չի ստացել Բանկային գործունեության լիցենզիա, սակայն ստեղծվել է նշված նպատակով)	«Ընդվանդ Գլոբալ Ինվեսթմենթս» ՍՊԸ-ն հանդիսանում է Արմենիան Փոստբանկ ՓԲԸ-ի հիմնադիրը		«Բանկերի և Բանկային գործունեության մասին» Օրենքի 8-րդ հոդվածի մաս 1, կետ բ.
3	«Կոնվերսիոնկասցիա» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Կոմիտաս 49	ինկասացիոն ծառայություններ	Ընկերության 96 % բաժնեմասը պատկանում է «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ին		«Բանկերի և Բանկային գործունեության մասին» Օրենքի 8-րդ հոդվածի մաս 1, կետ ա.
4	«Տեր-Տաճատյան, Վահանյան և Գրիգորյան» ՓԲԸ	ՉԵՆՈՎԻ Փ. 2.10 բն. 120, ԵՐԵՎԱՆ	Իրավաբանական խորհրդատվություն	Բանկի խորհրդի նախագահ Արմեն Տեր-Տաճատյանը տիրապետում է այս ընկերության 50% բաժնետոմսերին		«Բանկերի և Բանկային գործունեության մասին» Օրենքի 8-րդ հոդվածի մաս 1, կետ բ.
5	«Տեր-Տաճատյան» իրավաբանական և բիզնես խորհրդատվական ՓԲԸ	ՉԵՆՈՎԻ Փ. 2.10 բն. 120, ԵՐԵՎԱՆ	Իրավաբանական և բիզնես խորհրդատվություն	Բանկի խորհրդի նախագահ Արմեն Տեր-Տաճատյանը տիրապետում է այս ընկերության 100% բաժնետոմսերին		«Բանկերի և Բանկային գործունեության մասին» Օրենքի 8-րդ հոդվածի մաս 1, կետ բ.
6	«Նորին ՓԲԸ»	ՀՀ, ք. Երևան, Արամ Խաչատրյան 17/40	առևտուր	Բանկի գործադիր տնօրեն Արարատ Դուկասյանի Կինը տիրապետում է այս ընկերության 50% բաժնետոմսերին		«Բանկերի և Բանկային գործունեության մասին» Օրենքի 8-րդ հոդվածի մաս 1, կետ բ.

Բանկի հետ որպես կապակցված իրավաբանական անձինք կարելի է նշել նաև հետևյալ ընկերություններին՝

N	Անվանում	Կապվածության մեխանիզմները	Հասցե
1	Հայփոստ ՓԲԸ	Փոխկապակցվածություն Էդուարդո Էռնեսկյանի հետ	Սարյան 22, Երևան
2	Կամինոս դե Ամերիկա Էս Էյ	փոխկապակցվածություն Էդուարդո Էռնեսկյանի հետ	Honduras 5663, C1414BNE, Buenos Aires
3	Նավինտեն Էս Էյ	Փոխկապակցվածություն Էդուարդո Էռնեսկյանի հետ	Camino Carasco Sin, Canelones, Uruguay
4	Պուերտա Դել Սուր Էս Էյ	Փոխկապակցվածություն Էդուարդո Էռնեսկյանի հետ	Camino Carrasco sin, Canelones, Uruguay
5	Սանտա Կատարինա Կորոպորեյշն	Փոխկապակցվածություն Էդուարդո Էռնեսկյանի հետ	Vanterpool plaza, 2nd floor, Weckhams Cay I, Road Town, Tortola, British Virgin Islands

6	Բռավարդ Ֆինանս Կորպորեյշն	Փոխկապակցվածություն Էդուարդո Էռնեսկյանի հետ	VANTERPOOL PLAZA,2AN FLOOR, P.O BOX873 ROAD TOWN
7	Զվարթնոց Հենդլինգ ՓԲԸ	Փոխկապակցվածություն Էդուարդո Էռնեսկյանի հետ	Զվարթնոց միջազգային օդանավակայան, Երևան
8	ԷյԴիԷՖ Շոփս ՓԲԸ	Փոխկապակցվածություն Էդուարդո Էռնեսկյանի հետ	Զվարթնոց միջազգային օդանավակայան, Երևան
9	Տերմինալ Աերոպորտուարիա դե Գուայակիլ Ս.Ա.	Փոխկապակցվածություն Էդուարդո Էռնեսկյանի հետ	AV.DE LAS AMERICA AEROPUERTO INTERNACIONAL SIMON BOLIVAR
10	Կորրեդոր Ամերիկանո Ս. Ա.	Փոխկապակցվածություն Էդուարդո Էռնեսկյանի հետ	
11	Յունիքեք Բիո Ս. Ա.	Փոխկապակցվածություն Էդուարդո Էռնեսկյանի հետ	
12	Էմպրեսա դե Կարգաս Աերեսա դել Ատլանտիկո Սուդ Ս. Ա.	Փոխկապակցվածություն Էդուարդո Էռնեսկյանի հետ	
13	Դյուքի Ֆրի Էկվադոր Ս. Ա.	Փոխկապակցվածություն Էդուարդո Էռնեսկյանի հետ	
14	Ամերիկա Լոջինգ Էս Էյ	Փոխկապակցվածություն Էդուարդո Էռնեսկյանի հետ	567/3 Honduras, Ciudad Autonoma de BS. AS, Argentina
15	Յունիքեք Ագրո Էս Էյ	Փոխկապակցվածություն Էդուարդո Էռնեսկյանի հետ	CIUDAD AUTONOMA DE BS. AS, Avda, Rivadavia 2057 BS.AS, aptr 4-B
16	Պրոդեն Էս Էյ	Փոխկապակցվածություն Էդուարդո Էռնեսկյանի հետ	CIUDAD AUTONOMA DE BS. AS, Avda, Rivadavia 2057 BS.AS
17	Աերոպորտուս Արգենտինա 2000 Էս Էյ	Փոխկապակցվածություն Էդուարդո Էռնեսկյանի հետ	CIUDAD AUTONOMA DE BS AS, 12 APT 268 SUIPACHA
18	Արմենիա Սիջազգային Օդանավակայաններ ՓԲԸ	Փոխկապակցվածություն Էդուարդո Էռնեսկյանի և Խորհրդի անդամ Ջուան Պարլո Գեչիդջանի հետ, որը համդիսանում է Ընկերության տնօրենը	Զվարթնոց միջազգային օդանավակայան, ԱՄՕ շենք, Երևան
19	Տերմինալ դե Կարգաս դե Ուրուգվայ	Փոխկապակցվածություն Էդուարդո Էռնեսկյանի հետ	
20	Դյուքի Փեյդ ՍԱ	Փոխկապակցվածություն Էդուարդո Էռնեսկյանի հետ	
21	Էյ Ար Ջի ԲիՖ ՍԱ	Փոխկապակցվածություն Էդուարդո Էռնեսկյանի հետ	
22	Մերվիսես Աերոս Սուդասամերիկանոս Էս Էյ	Փոխկապակցվածություն Էդուարդո Էռնեսկյանի հետ	4B/2057 RIVADAVIA, CIUDAD AOTONOMA DE BS. AS, ARGENTINA
23	Տանգո ՓԲԸ	Փոխկապակցվածություն Էդուարդո Էռնեսկյանի հետ	Մաշտոցի պողոտա, 29- 20, Երևան
24	Հելպորտ Էս Էյ	Փոխկապակցվածություն Էդուարդո Էռնեսկյանի հետ	2765, Buenos Aires
25	Տիեռաս դե Արմենիա ՓԲԸ	Փոխկապակցվածություն Էդուարդո Էռնեսկյանի և Խորհրդի անդամ Ջուան Պարլո Գեչիդջանի հետ, որը համդիսանում է Ընկերության տնօրենը	Խորենացու 1 փակ, 8- Ա2, Երևան
26	Մայր Արոս Սուրբ Էջմիածին	5 % Բանկի բաժնետեր	Էջմիածին

Բանկի նշանակալից մասնակիցների վերաբերյալ տեղեկություններ

ա. Բանկը չունի նշանակալից մասնակից հանդիսացող ֆիզիկական անձինք:

բ.Բանկի նշանակալից մասնակից հանդիսացող իրավաբանական անձիք՝

Անվանումը	Գտնվելու վայրը	Անձի կողմից իրականացվող գործունեության հակիրճ նկարագրությունը	Անձին պատկանող Բաժնային արժեթղթերի քանակը (տոկոս)
«Ըղվանադ Գլոբալ Ինվեսթմենթս» ԷլԷՄԻ	ԱՄՆ, Գելափեր նահանգ, Ուիլմինգթոն Գելափեր 19808 Սենթրվիլ 271 1սեն.400	Ընկերության նպատակն է իրականացնել վարել ցանկացած օրինական գործունեություն, որի համար կարող են ստեղծվել սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ և իրականացնել դրա համար անհրաժեշտ բոլոր գործառնությունները, հատկապես բանկային կամ ֆինանսական գործունեության իրականացումը ուղղակիորեն կամ այլ դուստր ընկերությունների միջոցով:	95
«Բլեյքբերի Աստեթս» ԷլԹԻԴԻ	Վանտերպուլ Պլազա, 2-րդ հարկ, Վիքամս Քեյ 1, Թաուն փողոց, Տորոնտո, Բրիտանիայի Վիրջինյան Կղզիներ	Հոլդինգային ընկերություն	

«Բլեյքբերի Աստեթս» ԷլԹԻԴԻ-ն հանդիսանում է «Գտնվերս Բանկ» ՓԲԸ-ի անուղղակի նշանակալից մասնակից, քանի որ տիրապետում է Բանկի նշանակալից մասնակից՝ «Ըղվանադ Գլոբալ Ինվեսթմենթս» ԷլԷՄԻ-ի 100% բաժնետոմսերին: «Բլեյքբերի Աստեթս» ԷլԹԻԴԻ-ի 100 % բաժնետոմսերի սեփականատերը հանդիսանում է Էդուարդո Էռնեսկյանը:

Բանկի կողմից թողարկված արժեթղթերի վերաբերյալ տեղեկություններ

«Գտնվերս Բանկ» ՓԲԸ-ի կողմից մինչ այժմ թողարկվել և տեղաբաշխվել է 12331 /տասներկու հազար երեք հարյուր երեսունմեկ/ հատ սովորական բաժնետոմսեր՝ յուրաքանչյուրը 100,000.00 /հարյուր հազար/ ՀՀ դրամ անվանական արժեքով, և 333 /երեք հարյուր երեսուներեք/ հատ արտոնյալ փոխարկելի բաժնետոմսեր՝ յուրաքանչյուրը 100.00 /հարյուր/ ՀՀ դրամ անվանական արժեքով, որոնք էլ ձևավորում են Բանկի կանոնադրական կապիտալը:

- 1) Բանկի կողմից թողարկված բոլոր արժեթղթերը ոչ փաստաթղթային են:
- 2) Բանկի կողմից թողարկված արժեթղթերը թույատրված չեն որևէ կարգավորվող շուկայում առևտրին:
- 3) Բանկի թողարկված 12231 հատ սովորական և 333 հատ արտոնյալ բաժնետոմսերը տեղաբաշխվել են ամբողջությամբ:
- 4) Թողարկված արժեթղթերի մարման ժամկետ նախատեսված չէ:
- 5) *Բանկի հասարակ /սովորական/ բաժնետոմսերի սեփականատեր բաժնետերն իրավունք ունի՝*

- ա/ մասնակցել Ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով,
- բ/ մասնակցել Բանկի կառավարմանը, ՀՀ նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերում՝ մասնակցող անձի մասնագիտական որակավորման վերաբերյալ ՀՀ կենտրոնական բանկի դրական եզրակացության առկայության դեպքում,
- գ/ ստանալ շահութաբաժիններ Բանկի գործունեությունից առաջացած շահույթից,
- դ/ առաջնահերթ կարգով ձեռք բերել Բանկի կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը, եթե ՀՀ օրենսդրությամբ և Կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ,
- ե/ ստանալ Բանկի գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն՝ գաղտնի փաստաթղթերից և տեղեկություններից բացի, այդ թվում՝ Կանոնադրությամբ սահմանված կարգով ծանոթանալ հաշվապահական հաշվեկշիռներին, հաշվետվություններին, Բանկի ֆինանսական գործունեությանը, ստանալու Բանկի վերջին տարեկան հաշվետվության և արտաքին աուդիտի եզրակացության պատճենները, ինչպես նաև հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունները: Իսկ Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 2% և ավելիին տիրապետող բաժնետերն իրավունք ունի ստանալ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված փաստաթղթերն ու տեղեկությունները նույն հոդվածով սահմանված կարգով:

- զ/ ժողովներում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի,
- է/ հանդես գալ առաջարկություններով ժողովներում,
- ը/ ժողովներում քվեարկել իրեն պատկանող քվեարկող բաժնետոմսերի ձայների չափով,
- թ/ դիմել դատարան՝ ժողովի կողմից ընդունված և գործող ՀՀ նորմատիվ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով,
- ժ/ Բանկի սեփական միջոցների հաշվին կանոնադրական կապիտալն ավելացնելիս Խորհրդի կողմից որոշված գնով, բայց ոչ պակաս անվանական արժեքից, ձեռք բերել համապատասխան քանակությամբ հասարակ /սովորական/ բաժնետոմսեր,
- ժա/ Բանկի լուծարման դեպքում ստանալ Բանկի գույքի /միջոցների/ իրեն հասանելիք մասը,
- ժբ/ նախապատվության իրավունքով նույն գնով, որով այն բաժնետերերի կողմից վաճառվում է և այլ հավասար պայմաններով ձեռք բերել վաճառվող բաժնետոմսերը՝ պահպանելով Կանոնադրության պահանջները,
- ժգ/ Բանկի կանոնադրական կապիտալում իր բաժնետոմսերը կամ դրա մի մասը վաճառել կամ այլ ձևով զիջել Բանկի մեկ կամ մի քանի բաժնետերերի, ինչպես նաև երրորդ անձանց՝ պահպանելով ՀՀ օրենսդրությամբ և Կանոնադրությամբ սահմանված կարգը,
- ժդ/ ունենալ Կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներ:

Բանկի արտոնյալ փոխարկելի բաժնետոմսերի սեփականատեր բաժնետերն իրավունք ունի՝

- ա/ ժողովում մասնակցել ձայնի իրավունքով, եթե քննարկվում են Բանկի վերակազմակերպման կամ լուծարման հարցերը, Կանոնադրության փոփոխման կամ լրացման հետ կապված այն որոշումները, որոնք սահմանափակում են իր իրավունքները,
- բ/ արտոնյալ փոխարկելի բաժնետոմսերի ձեռք բերման պահից մեկ տարվա ընթացքում պահանջել դրանց փոխարկում հասարակ /սովորական/ բաժնետոմսերի, առաջնահերթության իրավունքով ձեռք բերել Բանկի կողմից տեղաբաշխվող հայտարարված բաժնետոմսերը, արտոնյալ բաժնետոմսերը՝ հավասար քանակային հարաբերակցությամբ փոխարկելով հասարակ /սովորական/ բաժնետոմսերի և Կանոնադրությամբ սահմանված ժամկետներում վճարելով լրացուցիչ տեղաբաշխվող հասարակ /սովորական/ բաժնետոմսերի շուկայական արժեքի և արտոնյալ փոխարկվող բաժնետոմսերի անվանական արժեքի ու վերջիններիս հասանելիք շահութաբաժնի գումարի տարբերությունը,
- գ/ իրավասու մարմնի կողմից շահութաբաժիններ վճարելու մասին որոշման կայացման դեպքում ստանալ տարեկան հաստատագրված շահութաբաժին իրենց պատկանող արտոնյալ փոխարկելի բաժնետոմսի անվանական արժեքի 20%-ի չափով,
- դ/ օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված դեպքերում մասնակցել Բանկի գործերի կառավարմանը՝ մասնակցող անձի մասնագիտական որակավորման վերաբերյալ ՀՀ կենտրոնական բանկի դրական եզրակացության առկայության դեպքում,
- ե/ հանդես գալ առաջարկություններով ժողովներում,
- զ/ Կանոնադրությամբ նախատեսված դեպքերում ժողովներում քվեարկել իրեն պատկանող բաժնետոմսերի ձայների չափով,
- է/ Բանկի չբաշխված շահույթի հաշվին կանոնադրական կապիտալն ավելացնելիս Խորհրդի կողմից որոշված գնով, բայց ոչ պակաս անվանական արժեքից, ձեռք բերել համապատասխան քանակությամբ հասարակ /սովորական/ բաժնետոմսեր:

Բանկի բաժնետերը պարտավոր է՝

- ա/ Կանոնադրությամբ սահմանված ժամկետներում լրիվ վճարել իր բաժնետոմսերի արժեքը,
- բ/ չհրապարակել Բանկի գործունեության վերաբերյալ գաղտնիք ներկայացնող տեղեկությունները, որոնց ցանկը սահմանում է Բանկի խորհուրդը,
- գ/ Խորհրդին և Բանկի աուդիտն իրականացնող անձին տրամադրել օրենքով սահմանված տեղեկություններ Բանկի գործարքներում իր շահագրգռվածության, Բանկի հետ գործարք իրականացնող անձանց հետ իր փոխկապակցվածության մասին,
- դ/ ենթարկվել Կանոնադրության այլ պահանջներին:

6) ա. «Կոնվերս բանկ» ՓԲԸ-ի կողմից 2005 թվականի 1722527 հազ դրամ շահույթից հաշվարկել և վճարել է 295951 հազ. դրամ շահաբաժին, իսկ 2006 և 2007 թվականներին համապատասխանաբար 29.06.2007թ. և 05.06.2008թ. բաժնետերերի ժողովի որոշումներով որոշվել է շահութաբաժիններ չվճարել և ստացված ողջ շահույթը ուղղել եկամուտների պահուստին:
բ. «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի կողմից ընթացիկ տարում շահութաբաժիններ չի վճարել:

7) Ընկերության բաժնետոմսերի շուկայական գնի մասին տեղեկություններ չկան, քանի որ նրանք ազատորեն չեն շրջանառվում շուկայում:

8) Ընկերության բաժնետոմսերի փոխարկման, բաժանման, համախմբման, հետգնաման դեպքեր չեն եղել:

ԱՌԱՋԱՐԿԻ ԾՐԱԳԻՐ

«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ ԹՈՂԱՐԿԱԾ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ, ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ

Գ Լ ՈՒ Խ 1. ԹՈՂԱՐԿՎԱԾ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ Պ Ա Յ Մ Ա Ն Ն Ե Ր Ը

- 1.1. Հիմք ընդունելով ՀՀ Քաղաքացիական օրենսգիրքը, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածը, «Կոնվերս Բանկ» ՓԲԸ (այսուհետ Բանկ) Կանոնադրության դրույթները և Խորհրդի 23.06.08 նիստում հաստատված (Արձանագրություն թիվ 8) ««Կոնվերս Բանկ» ՓԲԸ միջնաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության և մարման ընթացակարգը»՝ Թողարկվել է 50.000 (Հիսուն հազար) հատ պարտատոմս:
- 1.2. Պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացվելու է մեկից ավելի տրանշերով, ընդ որում առաջին տրանշի տեղաբաշխման առաջին օրվանից հաշված 12 ամսվա ընթացքում պետք է տեղաբաշխվի առնվազն երկու տրանշ:
- 1.3. Պարտատոմսերի առաջին տրանշի տեղաբաշխումն սկսվում է ոչ ուշ, քան 2008 թվականի դեկտեմբերի 20-ը,
- 1.4. Պարտատոմսերի վերջին տրանշի տեղաբաշխումն սկսվում է ոչ ուշ, քան 2009 թվականի դեկտեմբերի 20-ը,
- 1.5. Պարտատոմսերի մարման ժամկետը 3 տարի է՝ հաշվարկված տվյալ տրանշի տեղաբաշխման առաջին օրից:
- 1.6. Պարտատոմսերի արժեկտրոնները վճարվում են եռամսյակային հաճախականությամբ:
- 1.7. Բոլոր տրանշերով տեղաբաշխված պարտատոմսերը պետք է շրջանառվեն Հայաստանի Ֆոնդային Բորսայում:
- 1.8. Թողարկված պարտատոմսերի առաջին և հերթական յուրաքանչյուր տրանշի պայմանները միևնույնն են, բացառությամբ յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխման սկզբի, ծավալի և եկամտաբերության տարեկան տոկոսադրույթի: Պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխման սկիզբը, ծավալը և տարեկան եկամտաբերության տոկոսադրույթը սահմանվում է Բանկի Վարչության կողմից:
- 1.9. Թողարկված պարտատոմսերի առաջին և հերթական յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխման ծավալը որոշվում է ելնելով շուկայական պահանջարկից և սահմանվում է Բանկի Վարչության կողմից:

Գ Լ ՈՒ Խ 2. ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄԸ

- 2.1 Պարտատոմսերը տեղաբաշխվում են հրապարակային առաջարկի միջոցով, ՀՀ Կենտրոնական Բանկում գրանցված Ծրագրային ազդագրի հիման վրա:
- 2.2 Ծրագրային ազդագիրը պետք է կազմվի սույն առաջարկի ծրագրի հիման վրա:
- 2.3 Պարտատոմսերը տեղաբաշխվելու են լիցենզավորված անդերռայթերի (տեղաբաշխողի) միջոցով:
- 2.4 Պարտատոմսերի առաջին տրանշի տեղաբաշխումն սկսվում է սույն ծրագրի հիման վրա կազմված Ծրագրային ազդագիրը ՀՀ կենտրոնական բանկի կողմից գրանցելուց տաս անցած օրից հետո:
- 2.5 Պարտատոմսեր ձեռք բերելու համար Գնորդը Բանկ է ներկայացնում Հայտ՝ համաձայն հավելված 1-ի, և միաժամանակ կատարում է համապատասխան վճարումը կամ ներկայացնում է համապատասխան վճարումը հավաստող փաստաթուղթ:

- 2.6 Պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխման ավարտը համարվում է տեղաբաշխման սկզբից 30-րդ օրը ներառյալ: Եթե տվյալ օրը հանդիսանում է ոչ աշխատանքային, ապա տեղաբաշխման ավարտը համարվում է այդ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը:
- 2.7 Մինչև տեղաբաշխման սահմանված ավարտը բոլոր պարտատոմսերի տեղաբաշխման դեպքում տեղաբաշխման ավարտ է համարվում վերջին պարտատոմսի իրացման օրը:

Գ Լ ՈՒ Խ 3. ԱՐԺԵԿՏՐՈՆՆԵՐԻ ՎՃԱՐՄՈՒՄԸ ԵՎ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՐՈՒՄԸ

- 3.1. Պարտատոմսերի դիմաց վճարվող արժեկտրոնը հաշվարկում է եռամսյակային պարբերականությամբ՝ տեղաբաշխման սկսման օրվան հաջորդող 3-րդ, 6-րդ, 9-րդ, 12-րդ, 15-րդ, 18-րդ, 21-րդ 24-րդ, 27-րդ 30-րդ, 33-րդ և 36-րդ ամսվա համապատասխան օրերին:
- 3.2 Պարտատոմսերի մարման օրը տեղաբաշխման սկսման օրվան հաջորդող 36-րդ ամսվա համապատասխան օրն է:

Ը Ն Թ Ա Ց Ա Կ Ա Ր Գ

«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ, ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ, ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐՄԱՆ

Գ Լ Ո Ւ Խ 1. Ը Ն Դ չ Ա Ն Ո Ւ Բ Դ Ի Ո Ւ Յ Թ Ն Ե Ր

- 1.1 Սույն ընթացակարգը սահմանում է «Կոնվերս Բանկ» Փակ Բաժնետիրական Ընկերության (այսուհետ նաև՝ Բանկ) կողմից թողարկված միջնաժամկետ (մեկից մինչև հինգ տարի մարման ժամկետով) արժեկտրոնային պարտատոմսերի (այսուհետև՝ Պարտատոմս) թողարկման, տեղաբաշխման, շրջանառության և մարման կանոնները:
- 1.2 Բանկի միջնաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման շրջանառության և մարման ընթացակարգն (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) ընդունվում է «Բաժնետիրական ընկերությունների մասին», «Բանկերի և ֆանկային գործունեության մասին», «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, ինչպես նաև Բանկի կանոնադրության պահանջներին համապատասխան և նպատակ ունի կանոնակարգել Բանկի կողմից թողարկված պարտատոմսերի տեղաբաշխման առնչությամբ Բանկի և պարտատոմսերի գնման առաջարկությունը ստացող և/կամ ներկայացնող անձանց միջև առաջացող հարաբերությունները:

Գ Լ Ո Ւ Խ 2. Պ Ա Ր Տ Ա Տ Ո Մ Ս Ե Ր Ի Թ Ո Ղ Ա Ր Կ Մ Ա Ն Հ Ի Մ Ն Ա Կ Ա Ն Պ Ա Յ Մ Ա Ն Ն Ե Ր Ը

- 1.10. Պարտատոմսերն արժեկտրոնային են, անվանական, ոչ փաստաթղթային, առանց ապահովման, ոչ փոխարկելի:
- 1.11. Պարտատոմսերի յուրաքանչյուրի անվանական արժեքը 30000 (երեսուն հազար) ՀՀ դրամ է:
- 1.12. Պարտատոմսերի թողարկումներն իրականացվում են Բանկի խորհրդի որոշմամբ, որտեղ ամրագրվում է թողարկման ծավալը (գումարային անվանական արժեքը), թողարկվող պարտատոմսերի քանակը, շրջանառության ժամկետը, արժեկտրոնի վճարման պարբերականությունը, տեղաբաշխվող տրանշերի քանակը, տեղաբաշխման սկզբի և ավարտի ժամկետները, տարեկան եկամտաբերությունը:

- 1.13. Պարտատոմսերը մեկից ավելի տրանշերով տեղաբաշխման դեպքում, յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխման սկզբի և ավարտի ժամկետները, տարեկան եկամտաբերությունը և թողարկման ծավալը սահմանվում է Բանկի Վարչության առանձին Որոշմամբ:
- 1.14. Պարտատոմսերի սեփականատերերի ռեստորի վարումն իրականացվում է Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի կողմից՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գ Լ ՈՒ Խ 3. Պ Ա Ր Տ Ա Տ Ո Մ Ս Ե Ր Ի Տ Ե Ղ Ա Բ Ա Շ Խ Մ Ա Ն Կ Ա Ր Գ Ը

- 3.1 Պարտատոմսերը տեղաբաշխվում են հրապարակային առաջարկի միջոցով, եթե Խորհուրդը այլ բան չի որոշում:
- 3.2 Պարտատոմսերը կարող են տեղաբաշխվել ինչպես Բանկի կողմից, այնպես էլ լիցենզավորված անդերռայթերի (տեղաբաշխողի) միջոցով:
- 3.3 Հրապարակային առաջարկի դեպքում, պարտատոմսերի ազդագիրը գրանցվում է ՀՀ Կենտրոնական Բանկում, համաձայն ՀՀ օրենսդրության:
- 3.4 Ազդագիրը մինչև ՀՀ կենտրոնական բանկին գրանցման ներկայացնելը, այն հաստատվում է Բանկի Խորհրդի կողմից: Առանձին դեպքերում, Խորհրդի որոշմամբ, հրապարակային տեղաբաշխումը կարող է իրականացվել առաջարկի ծրագրի հիման վրա կազմված Ծրագրային ազդագրի միջոցով:
- 3.5 Պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխումն սկսվում է Ազդագրի, իսկ Ծրագրային ազդագրի դեպքում «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 11-րդ մասով նախատեսված լրացումը, ՀՀ կենտրոնական բանկի կողմից գրանցելուց տասնաշխատանքային օր հետո:
- 3.6 Մինչև պարտատոմսերի առաջին տեղաբաշխման սկիզբը, Բանկը Հայաստանի Կենտրոնական դեպոզիտարիայում բացում է պարտատոմսերի թողարկման հաշիվ՝ այդ հաշվին փոխանցելով թողարկված պարտատոմսերը:
- 3.7 Պարտատոմսեր ձեռք բերելու համար Գնորդը Բանկ է ներկայացնում Հայտ՝ համաձայն հավելված 1-ի, և կատարում է համապատասխան վճարումը:
- 3.8 Պարտատոմսերի դիմաց վճարումները կատարվում են ՀՀ դրամով:
- 3.9 Գնման Հայտերը բավարարվում են ըստ ներկայացման ժամկետի հերթականության:
- 3.10 Գնորդների կողմից գնման հայտերը ներկայացնելուց հետո դրանք կարող են հետ կանչվել գնորդի կողմից՝ համապատասխան գրությամբ, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքին համաձայն:
- 3.11 Չբավարարված կամ հետ կանչված հայտերի համապատասխան գումարները գնորդները կարող են 2 աշխատանքային օր հետո ստանալ Բանկից այն նույն կարգով, որով կատարել են վճարումը (կանխիկ կամ փոխանցումով): Հետ կանչված հայտերի գումարների վերադարձման դեպքում բանկային փոխանցումների հետ կապված ծախսերը պետք է կատարի գնորդը, որը հետ է կանչել իր կողմից նախապես ներկայացված հայտը:
- 3.12 Գնորդի կողմից Գնման Հայտը ներկայացնելուց և համապատասխան գումարը վճարելուց հետո, Բանկը կամ տեղաբաշխողն երկու աշխատանքային օրվա ընթացքում հանձնարարական է տալիս Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիային՝ համապատասխան քանակությամբ պարտատոմսերը Ընկերության հաշվից գնորդի հաշվին փոխանցելու համար:
- 3.13 Չբավարարված հայտերի համապատասխան գումարները Բանկը վերադարձնում է գնորդներին:
- 3.14 Մինչև տեղաբաշխման սահմանված ավարտը, բոլոր պարտատոմսերի տեղաբաշխման դեպքում, տեղաբաշխման ավարտ է համարվում վերջին պարտատոմսի իրացման օրը:
- 3.15 Մեկ պարտատոմսի տեղաբաշխման գինը որոշվում է համաձայն հետևյալ բանաձևի.

$$P = \frac{N}{\left(1 + R \times \frac{t}{365}\right)} \times \left\{ c \times \frac{m}{365} \times \sum_j^n \frac{1}{\left(1 + R \times \frac{m}{365}\right)^{j-1}} + \frac{1}{\left(1 + R \times \frac{m}{365}\right)^{n-1}} \right\}$$

որտեղ.

P – Պարտատոմսի գինն է,

N – Պարտատոմսի անվանական արժեքն է

R – Պարտատոմսի դիմաց վճարվող տարեկան տոկոսադրույքի բացարձակ արժեքն է

m – տվյալ թողարկման արժեկտրոնի վճարման պարբերականության ժամանակահատվածի օրերի քանակն է,

t – Մինչև տվյալ արժեկտրոնի վճարումը մնացած օրերի քանակն է,

c – տարեկան վճարվող արժեկտրոնային տոկոսադրույքն է

n - արժեկտրոնի վճարումների քանակն է,

j – արժեկտրոնի տվյալ հերթական համարն է, որը փոխվում է կախված տվյալ պահից մինչև վերջնական մարումը մնացած արժեկտրոնների վճարումների քանակից:

Գ Լ ՈՒ Խ 4. Պ Ա Ր Տ Ա Տ Ո Մ Ս Ե Ր Ի Շ Ր Ջ Ա Ն Ա Ռ ՈՒ Թ Յ Ա Ն Կ Ա Ր Գ Ը

4.1 Պարտատոմսերը կարող են օտարվել, գրավադրվել և հանդիսանալ ՀՀ օրենսդրությամբ թույլատրված այլ քաղաքացիաիրավական պայմանագրերի օբյեկտ՝ սույն Ընթացակարգի պահանջներին համապատասխան, հիշյալ պայմանագրերից բխող իրավունքները Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի կողմից վարվող պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրում համապատասխան փոփոխությունը գրանցելով: Ընդ որում, Պարտատոմսերով կնքված պայմանագրերից բխող իրավունքները ծագում են ռեեստրում համապատասխան գրառում կատարելու պահից:

Գ Լ ՈՒ Խ 5. Պ Ա Ր Տ Ա Տ Ո Մ Ս Ե Ր Ի Մ Ա Ր Մ Ա Ն Ե Վ Ա Ր Ժ Ե Կ Տ Ր Ո Ն Ն Ե Ր Ի Վ Ճ Ա Ր Մ Ա Ն Ը Ն Դ Հ Ա Ն ՈՒ Ր Կ Ա Ր Գ Ը

5.1 Պարտատոմսերի դիմաց վճարվող արժեկտրոնը հաշվարկում է համաձայն տվյալ թողարկման Որոշմամբ սահմանված պարբերականության:

5.2 Բանկը պարտատոմսերի դիմաց վճարվող արժեկտրոնը հաշվարկում է հետևյալ բանաձևով.

$$A = \frac{N \times c}{100} \times \frac{m}{365}$$

որտեղ՝ A – յուրաքանչյուր տարի վճարվող արժեկտրոնի չափն է,

N – Պարտատոմսի անվանական արժեքն է,

- c – տարեկան վճարվող արժեկտրոնային տոկոսադրույքն է,
 m – տվյալ թողարկման արժեկտրոնի վճարման պարբերականության ժամանակահատվածի օրերի քանակն է:
- 5.3 Բանկն արժեկտրոնների հաշվարկման օրվան նախորդող օրվա ժամը 18.00-ի դրությամբ Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիայից վերցնում է պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրից քաղվածք, որի հիման վրա պարտատոմսերի սեփականատերերին՝ նրանց բանկային հաշիվներին փոխանցելու միջոցով, վճարում է համապատասխան գումարները:
- 5.4 Արժեկտրոնի գումարը Բանկը վճարում է պարտատոմսերի սեփականատերերին արժեկտրոնի հաշվարկման օրվանից սկսած երկու աշխատանքային օրվա ընթացքում:
- 5.5 Բանկը մարման օրվանը նախորդող օրվա ժամը 18.00-ի դրությամբ Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիայից վերցնում է պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրից քաղվածք, որի հիման վրա պարտատոմսերի մարման օրը պարտատոմսերի սեփականատերերին՝ նրանց բանկային հաշիվներին փոխանցելու միջոցով, վճարում է համապատասխան գումարները (պարտատոմսերի անվանական արժեքը): Միաժամանակ Բանկը հանձնարարական է տալիս Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիային՝ պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրից տրված քաղվածքում նշված քանակության պարտատոմսերը մարելու համար:

Գ Լ ՈՒ Խ 6. Պ Ա Ր Տ Ա Տ Ո Մ Ս Ե Ր Ի Ս Ե Փ Ա Կ Ա Ն Ա Տ Ե Ր Ե Ր Ի Ի Ր Ա Վ ՈՒ Ն Ք Ն Ե Ր Ը Ե Վ Պ Ա Ր Տ Ա Վ ՈՐ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր Ը

- 6.1 Պարտատոմսերի սեփականատերերն իրավունք ունեն պարտատոմսերի մարման օրը ստանալ պարտատոմսի անվանական արժեքը:
- 6.2 Պարտատոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ստանալ վճարվող արժեկտրոնները՝ դրանց հաշվարկման օրվանից սկսած երկու աշխատանքային օրվա ընթացքում:
- 6.3 Պարտատոմսերը սահմանված ժամկետում չմարելու դեպքում Բանկը կարող է լուծարվել դատական կարգով: Բանկի լուծարման դեպքում պարտատոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ծանոթանալ Բանկի լուծարմանն առնչվող բոլոր փաստաթղթերին: Լուծարման հանձնաժողովը մասնաշաղկապում հայտարարություն է գետեղում Բանկի լուծարման և պարտատերերի պահանջների ներկայացման կարգի և ժամկետի մասին: Պարտատոմսերի կողմից պահանջներ ներկայացնելու ժամկետն ավարտվելուց հետո լուծարման հանձնաժողովը կազմում է միջանկյալ լուծարման հաշիվներ, որը տեղեկություններ է պարունակում լուծարվող Բանկի գույքի կազմի, պարտատերերի ներկայացրած պահանջների ցանկի, ինչպես նաև պահանջների քննարկման արդյունքների մասին: Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի, Ընկերության պարտատերերին վճարումները կատարվում են ՀՀ Քաղաքացիական Օրենսգրքի 70-րդ հոդվածով սահմանված հերթականությամբ, որի համաձայն Բանկի կողմից առաջարկվող պարտատոմսերի սեփականատերերի պահանջները բավարարվում են հինգերորդ հերթին: Ընդ որում յուրաքանչյուր հերթի պահանջները բավարարվում են նախորդ հերթի պահանջները լրիվ բավարարելուց հետո: Պարտատոմսերի սեփականատերերը կարող են օգտվել օրենքով և իրավական ակտերով սահմանված այլ իրավունքներից:
- 6.4 Պարտատոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ինքնուրույնաբար տնօրինել, տիրապետել և օգտագործել իրենց սեփականության ներքո գտնվող պարտատոմսերը: Ընդ որում, պարտատոմսերի վաճառքը կարող է կատարվել ինչպես ֆոնդային բորսայում, այնպես էլ բորսայից դուրս:
- 6.5 Պարտատոմսեր ձեռք բերող անձը պարտավոր է Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայում բացել անձնական հաշիվ՝ վերջինիս կողմից սահմանված կանոններին համաձայն:
- 6.6 Երկրորդային շուկայում պարտատոմսեր ձեռք բերող կամ օտարող անձը պարտավոր է իր հաշիվն կատարել Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի կամ ֆոնդային բորսայի կողմից սահմանված պարտադիր վճարները՝ կապված սեփականության իրավունքի գրանցման կամ գործարքների ձևակերպման հետ:

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ միջնաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի
թողարկման, տեղաբաշխման, շրջանառության և մարման Ընթացակարգի

ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ

ՀԱՅՏ

Հաճախորդի անունը և ազգանունը, անձնագրային տվյալները, բնակության վայրը, (իրավաբանական անձի դեպքում՝

անվանումը, գտնվելու վայրը) _____ ցանկանում է գնել _____
Թողարկման գրանցման համարը

հատ Պարտատոմս:

Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայում կամ _____

այլ պահառուի մոտ


բացվել է հաշիվ _____:

_____ Բանկում բացվել է դրամային հաշիվ _____:

Օր, ամիս, տարի

Ժամ, րոպե

Ստորագրություն (կնիք՝ իրավաբանական անձի դեպքում)

 CONVERSE BANK	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ Գործադիրության հրահանգ	IN 42-04		
	Հավելված 12 Խորհրդի նիստի արձանագրություն	<i>Ամսաթիվ</i> 11.06.08	<i>Խմբագրություն</i> 1	55/ 87

ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 10	BOARD MEETING MINUTES № 10
---	---

Նիստի ամսաթիվը՝ 29.07.08թ. Ժամը՝ 17:30 Վայրը՝ ք. Երևան, Հանրապետության Հրապարակ, Վ. Սարգսյանի փող., 26/1 Մասնակիցներ՝ Խորհրդի անդամներ՝ Ջուան Պարլո Գեչիդջյան, Արմեն Տեր-Տաճատյան, Տեր Թորգոմ վրդ. (Ադամ) Տոնիկյան (մասնակցել է հեռախոսակապի միջոցով ուղիղ ժամանակի ռեժիմում), Ջեյմս Ռիչարդ Չիկ (մասնակցել է հեռախոսակապի միջոցով ուղիղ ժամանակի ռեժիմում): Գլխավոր տնօրեն՝ Ա. Դուկասյան Հրավիրված՝ Ներքին վերահսկողության ծառայու- յան պետ-Գլխավոր վերստուգիչ Չ. Ռաֆայելով	Date: July 29, 2008 Time: 17:30 Place: 26/1 V. Sargsyan street, Republic Square, Yerevan Participants: Board Members: Juan Pablo Gechidjian, Armen Ter-Tachatyan, Father Torgom Rev. (Adam) Tonikyan (participated by means of telephone connection, in the regime of virtual time), James Richard Cheek (participated by means of telephone connection, in the regime of virtual time). General Director: A. Ghukasyan Guest: Internal Supervision Service Head-Chief Supervisor Z. Rafayelov
Օրակարգ 7. «Կոնվերս բանկ» ՓԲԸ թողարկած միջնաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի առաջարկի ծրագրի վերաբերյալ:	Agenda 7. On offering program for Medium-term Coupon Bonds emitted by “Converse Bank” CJSC.
Խորհրդի նիստը բացեց «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Խորհրդի անդամ Արմեն Տեր-Տաճատյանը: Նա տեղեկացրեց, որ Խորհրդի բոլոր 4 անդամները ներկա են, և քանի որ կա քվորում, Խորհրդի նիստը հայտարարեց բացված: Օրակարգի 7-րդ հարցի վերաբերյալ՝ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ միջնաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, չրջանառության և մարման ընթացակարգը և «Կոնվերս բանկ» ՓԲԸ թողարկած միջնաժամկետ	Armen Ter-Tachatyan, Board Member, opened the Board session of “Converse Bank” CJSC. Since 4 members of the Board were present and they had a quorum, he declared the session of the Board open. On the 7th issue of the Agenda: On approval of the Procedure of Issuance, Allocation, Circulation and Redemption of Medium- Term Coupon Bonds and the Offer Program for Medium-Term Coupon Bonds

**արժեկտրոնային պարտատոմսերի Առաջարկի
ծրագիրը հաստատելու վերաբերյալ**

Լսեցին «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Գլխավոր տնօրեն Ա.Գուկասյանի զեկույցը «Կոնվերս բանկ» ՓԲԸ թողարկած միջնաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի առաջարկի ծրագրի և «Կոնվերս Բանկ» ՓԲԸ միջնաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության և մարման ընթացակարգը հաստատելու վերաբերյալ:

Ելույթ ունեցան Ա. Տեր-Տաճատյանը, Ջուան Պաբլո Գեչիդջյանը, Տեր Թորգոմ վրդ. (Ադամ) Տոնիկյանը, Ջեյմս Ռիչարդ Չիկը:

Խորհրդի անդամներ Ա. Տեր-Տաճատյանը, Տեր Թորգոմ վրդ. (Ադամ) Տոնիկյանը, Ջուան Պաբլո Գեչիդջյանը, Ջեյմս Ռիչարդ Չիկը հայտնեցին իրենց համաձայնությունը հիմք ընդունելով ՀՀ Քաղաքացիական օրենսգիրքը, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածը, ինչպես նաև «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Կանոնադրության դրույթները հաստատել «Կոնվերս Բանկ» ՓԲԸ միջնաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության և մարման ընթացակարգը և «Կոնվերս բանկ» ՓԲԸ թողարկած միջնաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի Առաջարկի ծրագիրը:

Որոշում՝

1. Ուժը կորցրած ճանաչել 23.06.08 «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի կողմից պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման կարգի և պայմանների հաստատման վերաբերյալ Խորհրդի որոշումը /թիվ 8 արձանագրություն 13-րդ հարց/:
2. Հաստատել «Կոնվերս Բանկ» ՓԲԸ միջնաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության և մարման ընթացակարգը:
3. Հիմք ընդունելով սույն որոշման կետ 2-ով հաստատված «Կոնվերս Բանկ» ՓԲԸ միջնաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության և մարման ընթացակարգը հաստատել «Կոնվերս բանկ» ՓԲԸ թողարկած միջնաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի առաջարկի ծրագիրը:
4. «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Գլխավոր տնօրեն Ա. Գուկասյանին՝

emitted by “Converse Bank” CJSC:

Heard: the report of A. Ghukasyan, “Converse Bank” CJSC General Director, on approval of the Procedure of Issuance, Allocation, Circulation and Redemption of Medium-Term Coupon Bonds and the Offer Program for Medium-Term Coupon Bonds emitted by “Converse Bank” CJSC.

Members of Board Armen Ter-Tachatyan, Juan Pablo Gechidjian, Father Torgom Rev. (Adam) Tonikyan, James Richard Cheek spoke and assuming as basis the RA Civil Code, article 40 of the RA Law “On Joint-Stock Companies” as well as the provisions of the Charter of “Converse Bank” CJSC, voiced their consent to approve the of Procedure of Issuance, Allocation, Circulation and Redemption of Medium-Term Coupon Bonds and the Offer Program for Medium-Term Coupon Bonds emitted by “Converse Bank” CJSC.

Decision

1. To declare invalid the resolution of the Board as of June 23, 2008 (issue 13, Minutes # 8) on approval of order and terms of issuance and allocation of coupon bonds emitted by “Converse Bank” CJSC Medium-term Coupon Bonds.
2. To approve the Procedure of Issuance, Allocation, Circulation and Redemption of Medium-Term Coupon Bonds.
3. Assuming as basis the Procedure of Issuance, Allocation, Circulation and Redemption of Medium-Term Coupon Bonds, approbated by point 2 of this decision, approve the Offer Program for Medium-Term Coupon Bonds emitted by “Converse Bank” CJSC.
4. To task A. Ghukasyan, the General Director of “Converse Bank” CJSC to prepare the package of required documents for registration of shares.
5. The control over implementation of this decision be placed on Armen Ter-Tachatyan, Board Member of “Converse Bank” CJSC.

<p>ՀՀ Կենտրոնական Բանկին ներկայացնելու համար պատրաստել արժեթղթերի թողարկման գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը:</p> <p>5. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Խորհրդի անդամ Ա. Տեր-Տաճատյանի վրա:</p> <p>Նշումներ</p> <p>Քվեարկության արդյունքներ՝</p> <p>Ջուան Պաբլո Գեչիդջյան՝ կողմ</p> <p>Տեր Թորգոմ վրդ. (Ադամ) Տոնիկյան՝ կողմ</p> <p>Արմեն Տեր-Տաճատյան՝ կողմ</p> <p>Ջեյմս Ռիչարդ Չիկ՝ կողմ</p>	<p><i>Notes</i></p> <p>Results of voting:</p> <p>Juan Pablo Gechidjian – for</p> <p>Father Torgom Rev. (Adam) Tonikyan – for</p> <p>Armen Ter-Tachatyan – for</p> <p>James Richard Cheek – for</p>
--	---

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՂԻՇՏ Է

«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ

ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

<p>«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №13</p>	 <p>CONVERSE BANK</p>	<p>“CONVERSE BANK” CJSC BOARD MEETING MINUTES # 13</p>
---	--	---

<p>Նիստի ամսաթիվը՝ 03.11.08թ.</p> <p>Ժամը՝ 17:00</p> <p>Վայրը՝ ք. Երևան, Հանրապետության Հրապարակ, Վ. Սարգսյանի փող., 26/1</p> <p>Մասնակիցներ՝ <i>Խորհրդի անդամներ՝ Ջուան Պաբլո Գեչիդջյան, Արմեն Տեր-Տաճատյան, Տեր Թորգոմ վրդ. (Ադամ) Տոնիկյան, Ջեյմս Ռիչարդ Չիկ (մասնակցել է հեռախոսակապի միջոցով ուղիղ ժամանակի ռեժիմում), Մաթիաս Գեյնզա Էրնեկյան (մասնակցել է հեռախոսակապի միջոցով ուղիղ ժամանակի ռեժիմում):</i></p> <p>Գործադիր տնօրեն՝ Ա. Դուկասյան</p>	<p>Date: November 3, 2008</p> <p>Time: 17:00</p> <p>Place: 26/1 V. Sargsyan Street, Republic Square, Yerevan</p> <p>Participants: <i>Board Members: Juan Pablo Gechidjian, Armen Ter-Tachatyan, Father Torgom Rev. (Adam) Tonikyan, James Richard Cheek (participated by means of telephone connection, in the regime of virtual time), Matias Gainza Eurnekian (participated by means of telephone connection, in the regime of virtual time).</i></p> <p>Executive Director: A. Ghukasyan</p>
<p style="text-align: center;">Օրակարգ</p> <p>8. «Կոնվերս Բանկ» ՓԲԸ պարտատոմսերի թողարկման ազդագրի և առաջին տրանշի թողարկման պայմանների վերաբերյալ:</p>	<p style="text-align: center;">AGENDA</p> <p>8. On the “Converse Bank” CJSC Prospectus on emission of bonds and terms of emission of the first tranche.</p>
<p>Խորհրդի նիստը բացեց «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Խորհրդի նախագահ Արմեն Տեր-Տաճատյանը: Նա տեղեկացրեց, որ Խորհրդի բոլոր 5 անդամները ներկա են, և քանի որ կա քվորում, Խորհրդի նիստը հայտարարեց բացված:</p>	<p>Armen Ter-Tachatyan, Board Chairman, opened the Board session of “Converse Bank” CJSC. Since 5 members of the Board were present and they had a quorum, he declared the session of the Board open.</p>
<p>Օրակարգի 8-րդ հարցի վերաբերյալ՝ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ պարտատոմսերի թողարկման ազդագրի և առաջին տրանշի թողարկման պայմանների վերաբերյալ:</p> <p>Լսեցին «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Գործադիր տնօրեն Արարատ Դուկասյանի զեկույցը «Կոնվերս Բանկ» ՓԲԸ պարտատոմսերի թողարկման ազդագրի և առաջին տրանշի թողարկման պայմանների վերաբերյալ:</p> <p>Ելույթ ունեցան Ա. Տեր-Տաճատյանը, Ջուան-Պաբլո Գեչիդջյանը, Տեր Թորգոմ վրդ. (Ադամ) Տոնիկյանը, Ջեյմս Ռիչարդ Չիկը, Մաթիաս Գեյնզա Էրնեկյանը:</p> <p>Խորհրդի նախագահ Ա. Տեր-Տաճատյանը և Խորհրդի անդամներ Ջուան Պաբլո Գեչիդջյանը, Տեր Թորգոմ</p>	<p>On the 8th issue of the Agenda: On the “Converse Bank” CJSC Prospectus on emission of bonds and terms of emission of the first tranche.</p> <p>Heard: the report of A. Ghukasyan, “Converse Bank” CJSC Executive Director, on the “Converse Bank” CJSC Prospectus on emission of bonds and terms of emission of the first tranche.</p> <p>Armen Ter-Tachatyan, Juan Pablo Gechidjian, Father Torgom Rev. (Adam) Tonikyan, James Richard Cheek, Matias Gainza Eurnekian spoke as well.</p> <p>Board Chairman Armen Ter-Tachatyan and Board Members Juan Pablo Gechidjian, Father Torgom Rev. (Adam) Tonikyan, James Richard</p>

վրդ. (Ադամ) Տոնիկյանը, Ջեյմս Ռ-իչարդ Չիկը, Մաթիաս Գեյնզա Էրնեկյանը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40 հոդվածը, ««Կոնվերս Բանկ» ՓԲԸ միջնաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության և մարման» ընթացակարգը, «Կոնվերս Բանկ» ՓԲԸ թողարկած միջնաժամկետ, արժեկտրոնային պարտատոմսերի առաջարկի ծրագիրը, ինչպես նաև «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Կանոնադրության 9.3.2. կետը, հայտնեցին իրենց համաձայնությունը հաստատել «Կոնվերս Բանկ» ՓԲԸ պարտատոմսերի թողարկման ազդագիրը և առաջին տրանջի թողարկման պայմանները:

Որոշում

1. Հաստատել 04.09.08թ. Վարչության թիվ 145 որոշմամբ հավանություն ստացած «Կոնվերս Բանկ» ՓԲԸ պարտատոմսերի թողարկման ազդագիրը:

2. Հաստատել Պարտատոմսերի առաջին տրանջի թողարկման հետևյալ պայմանները`

- Թողարկել 10.000 (Տաս հազար) հատ, յուրաքանչյուրը 30.000 (Երեսուն հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով պարտատոմս:
- Պարտատոմսերի անվանական արժեքների ընդհանուր հանրագումարը կազմում է 300.000.000 (Երեք հարյուր միլիոն) ՀՀ դրամ:
- Պարտատոմսերի մարման ժամկետը 3 տարի է` հաշվարկված տվյալ տրանջի տեղաբաշխման առաջին օրից:
- Պարտատոմսերի առաջին տրանջի տեղաբաշխումը սկսվում է Ազդագիրը ՀՀ ԿԲ կողմից գրանցելուց տաս աշխատանքային օր հետո:
- Պարտատոմսերի տարեկան եկամտաբերությունը սահմանել 10.64%:

3. Առ 29.07.08թ. Խորհրդի որոշմամբ հաստատված /թիվ 10 արձանագրություն 7-րդ հարց/ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ թողարկած միջնաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի Առաջարկի ծրագրում 1.3 Կետում «Պարտատոմսերի առաջին տրանջի տեղաբաշխումն սկսվում է ոչ ուշ, քան 2008 թվականի նոյեմբերի 1-ը» արտահայտությունը փոխարինել «Պարտատոմսերի առաջին տրանջի տեղաբաշխումն սկսվում է ոչ ուշ, քան 2008 թվականի դեկտեմբերի 20-ը» արտահայտությամբ, և 1.4 կետում «Պարտատոմսերի վերջին տրանջի տեղաբաշխումն սկսվում է ոչ ուշ, քան 2010 թվականի մարտի 20-ը» արտահայտությունը փոխարինել «Պարտատոմսերի վերջին տրանջի տեղաբաշխումն սկսվում է որ ուշ, քան 2009 թվականի դեկտեմբերի 20-ը» արտահայտությամբ:

Cheek, Matias Gainza Eurnekian, taking as basis the RA Civil Code, clause 40 of the RA Law “On Joint-Stock Companies”, “Converse Bank” CJSC Procedure on issuance, placement, circulation and redemption of medium-term coupon bonds, “Converse Bank” CJSC Offering program for medium-term coupon bonds, as well as point 9.3.2 of the Charter of “Converse Bank” CJSC, voiced their consent to approving the “Converse Bank” CJSC Prospectus on emission of bonds and terms of emission of the first tranche.

Decision

1. Approve the “Converse Bank” CJSC Prospectus on emission of bonds and terms of emission of the first tranche, approved by the resolution # 145 of the “Converse Bank” CJSC Board of Administration as of September 4, 2008.

2. Approve the below terms of emission of the first tranche of the bonds:

- Issue 10 000 (ten thousand) bonds all of which have a par value of AMD 30 000 (thirty thousand) each
- The par value of all bonds totals to AMD 300 000 000 (three hundred million).
- The maturity of bonds is 3 years starting from the first day of placement of the tranche.
- The placement of the first tranche of the bonds starts 10 days after the Prospectus is registered by the RA CB.
- Annual yield – 10.64%

3. Substitute the phrase “The placement of the first tranche is started not later than on November 1, 2008.” in point 1.3 of the “Converse Bank” CJSC Offering program for medium-term coupon bonds, approved by the resolution of the Board as of July 29, 2008 (issue 7 of minutes # 10) with the phrase “The placement of the first tranche is started not later than on December 20, 2008.”, and the phrase “The placement of the last tranche is started not later than on March 20, 2010.” in point 1.4 – with the phrase “The placement of the last tranche is started not later than on December 20, 2009.”

<p>4. «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Գործադիր տնօրեն Ա. Դուկասյանին՝</p> <p>օրենսդրությամբ սահմանված կարգով ՀՀ Կենտրոնական բանկ ներկայացնել արժեթղթերի թողարկման գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը:</p> <p>5. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Խորհրդի նախագահ Արմեն Տեր-Տաճատյանի վրա:</p> <p>Նշումներ</p> <p>Քվեարկության արդյունքներ՝</p> <p>Արմեն Տեր-Տաճատյան՝ կողմ</p> <p>Ջուան Պաբլո Գեչիդջյան՝ կողմ</p> <p>Տեր Թորգոմ վրդ. (Ադամ) Տոնիկյան՝ կողմ</p> <p>Ջեյմս Ռիչարդ Չիկ՝ կողմ</p> <p>Մաթիաս Գեյնզա Էրնեկյան՝ կողմ</p>	<p>4. To A. Ghukasyan, “Converse Bank” CJSC Executive Director:</p> <p>In accordance with the procedure established by the RA Legislation, file with the the RA Central Bank the documents required for registration of emission of bonds.</p> <p>5.The control over implementation of this decision be placed on Armen Ter-Tachatyan, Board Chairman of “Converse Bank” CJSC.</p> <p>Notes</p> <p>Results of voting:</p> <p>Juan Pablo Gechidjian – for</p> <p>Father Torgom Rev. (Adam) Tonikyan – for</p> <p>Armen Ter-Tachatyan – for</p> <p>James Richard Cheek – for</p> <p>Matias Gainza Eurnekian – for</p>
---	---

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է

«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ

ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ

Ա.ԴՈՒԿԱՍՅԱՆ

<p align="center">«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №14</p>	 <p align="center">CONVERSE BANK</p>	<p align="center">“CONVERSE BANK” CJSC BOARD MEETING MINUTES # 14</p>
--	--	--

<p>Նիստի ամսաթիվը՝ 20.11.08թ.</p> <p>Ժամը՝ 11:00</p> <p>Վայրը՝ ք. Երևան, Հանրապետության Հրապարակ, Վ. Սարգսյանի փող., 26/1</p> <p>Մասնակիցներ՝ <i>Խորհրդի նախագահ՝ Արմեն Տեր-Տաճատյան</i></p> <p><i>Խորհրդի անդամներ՝ Ջուան Պաբլո Գեչիդջյան, Տեր Թորգոմ վրդ. (Ադամ) Տոնիկյան, Ջեյմս Ռիչարդ Չիկ (մասնակցել է հեռախոսակապի միջոցով ուղիղ ժամանակի ռեժիմում), Մաթիաս Գեյնզա Էրնեկյան (մասնակցել է հեռախոսակապի միջոցով ուղիղ ժամանակի ռեժիմում):</i></p> <p><i>Գործադիր տնօրեն՝ Ա. Դուկասյան</i></p>	<p>Date: November 20, 2008</p> <p>Time: 11:00</p> <p>Place: 26/1 V. Sargsyan Street, Republic Square, Yerevan</p> <p>Participants: <i>Board Chairman: Armen Ter-Tachatyan</i></p> <p><i>Board Members: Juan Pablo Gechidjian, Father Torgom Rev. (Adam) Tonikyan, James Richard Cheek (participated by means of telephone connection, in the regime of virtual time), Matias Gainza Eurnekian (participated by means of telephone connection, in the regime of virtual time).</i></p> <p><i>Executive Director: A. Ghukasyan</i></p>
<p align="center">Օրակարգ</p> <p>1. «Կոնվերս Բանկ» ՓԲԸ պարտատոմսերի թողարկման ազդագրում լրացում կատարելու մասին:</p>	<p align="center">AGENDA</p> <p>1. On supplement to the “Converse Bank” CJSC Prospectus on emission of bonds</p>
<p>Խորհրդի նիստը բացեց «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Խորհրդի նախագահ Արմեն Տեր-Տաճատյանը: Նա տեղեկացրեց, որ Խորհրդի բոլոր 5 անդամները ներկա են, և քանի որ կա քվորում, Խորհրդի նիստը հայտարարեց բացված:</p>	<p>Armen Ter-Tachatyan, Board Chairman, opened the Board session of “Converse Bank” CJSC. Since 5 members of the Board were present and they had a quorum, he declared the session of the Board open.</p>
<p>Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ՝ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ պարտատոմսերի թողարկման ազդագրում լրացում կատարելու մասին:</p> <p>Լսեցին «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Գործադիր տնօրեն Արարատ Դուկասյանի զեկույցն առ 03.11.08թ. Խորհրդի որոշմամբ հաստատված /թիվ 13 արձանագրություն 8-րդ հարց/ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ պարտատոմսերի թողարկման ազդագրում լրացում կատարելու վերաբերյալ:</p> <p>Ելույթ ունեցան Ա. Տեր-Տաճատյանը, Ջուան Պաբլո Գեչիդջյանը, Տեր Թորգոմ վրդ. (Ադամ) Տոնիկյանը, Ջեյմս Ռիչարդ Չիկը, Մաթիաս Գեյնզա Էրնեկյանը:</p> <p>Խորհրդի նախագահ Ա. Տեր-Տաճատյանը և Խորհրդի անդամներ Ջուան Պաբլո Գեչիդջյանը, Տեր Թորգոմ վրդ. (Ադամ) Տոնիկյանը, Ջեյմս Ռիչարդ Չիկը, Մաթիաս Գեյնզա Էրնեկյանը, հիմք ընդունելով Հայաստանի</p>	<p>On the 1st issue of the Agenda: On supplement to the “Converse Bank” CJSC Prospectus on emission of bonds.</p> <p>Heard: the report of A. Ghukasyan, “Converse Bank” CJSC Executive Director, on making a supplement to the “Converse Bank” CJSC Prospectus on emission of bonds approved through the resolution of the Board as of November 03, 2008 (issue 8 of minutes # 13).</p> <p>Armen Ter-Tachatyan, Juan Pablo Gechidjian, Father Torgom Rev. (Adam) Tonikyan, James Richard Cheek, Matias Gainza Eurnekian spoke as well.</p> <p>Board Chairman Armen Ter-Tachatyan and Board Members Juan Pablo Gechidjian, Father Torgom Rev. (Adam) Tonikyan, James Richard Cheek,</p>

<p>Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40 հոդվածը, ««Կոնվերս Բանկ» ՓԲԸ միջնաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության և մարման» ընթացակարգը, «Կոնվերս Բանկ» ՓԲԸ թողարկած միջնաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի առաջարկի ծրագիրը, ինչպես նաև «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Կանոնադրության 9.3.2 կետը, հայտնեցին իրենց համաձայնությունը հաստատել «Կոնվերս Բանկ» ՓԲԸ պարտատոմսերի թողարկման ազդագրում կատարված լրացումը:</p> <p>Որոշում</p> <p>1. Հաստատել «Կոնվերս Բանկ» ՓԲԸ առ 03.11.08թ. Խորհրդի որոշմամբ հաստատված /թիվ 13 արձանագրություն 8-րդ հարց/ պարտատոմսերի թողարկման ազդագրում կատարված լրացումը (կցվում է):</p> <p>2. «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Գործադիր տնօրեն Ա. Դուկասյանին՝</p> <p>օրենսդրությամբ սահմանված կարգով ՀՀ Կենտրոնական բանկ ներկայացնել պարտատոմսերի թողարկման ազդագրում կատարված լրացումը:</p> <p>3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Խորհրդի նախագահ Արմեն Տեր-Տաճատյանի վրա:</p> <p>Նշումներ</p> <p>Քվեարկության արդյունքներ՝</p> <p>Արմեն Տեր-Տաճատյան՝ կողմ</p> <p>Ջուան Պաբլո Գեչիդջյան՝ կողմ</p> <p>Տեր Թորգոմ վրդ. (Ադամ) Տոնիկյան՝ կողմ</p> <p>Ջեյմս Ռիչարդ Չիկ՝ կողմ</p> <p>Մաթիաս Գեյնզա Էրնեկյան՝ կողմ</p>	<p>Matias Gainza Eurnekian, taking as basis the RA Civil Code, clause 40 of the RA Law “On Joint-Stock Companies”, “Converse Bank” CJSC Procedure on issuance, placement, circulation and redemption of medium-term coupon bonds, “Converse Bank” CJSC Offering program for medium-term coupon bonds, as well as point 9.3.2 of the Charter of “Converse Bank” CJSC, voiced their consent to approving the supplement to the “Converse Bank” CJSC Prospectus on emission of bonds.</p> <p>Decision</p> <p>1. Approve the supplement to the “Converse Bank” CJSC Prospectus on emission of bonds. approved through the resolution of the Board as of November 03, 2008 (issue 8 of minutes # 13) /enclosed/.</p> <p>2. To A. Ghukasyan, “Converse Bank” CJSC Executive Director:</p> <p>In accordance with the procedure established by the RA Legislation, submit the supplement to the Prospectus on emission of bonds to the RA Central Bank.</p> <p>3. The control over implementation of this decision be placed on Armen Ter-Tachatyan, Board Chairman of “Converse Bank” CJSC.</p> <p>Notes</p> <p>Results of voting:</p> <p>Armen Ter-Tachatyan – for</p> <p>Juan Pablo Gechidjian – for</p> <p>Father Torgom Rev. (Adam) Tonikyan – for</p> <p>James Richard Cheek – for</p> <p>Matias Gainza Eurnekian – for</p>
--	--

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է
«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ
ԳՈՐԾԱԳԻՐ ՏՆՕՐԵՆ

Ա.ԴՈՒԿԱՍՅԱՆ

Անկախ աուդիտորի եզրակացություն

«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի 2005թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի բաժնետերերին,

Մեր կողմից իրականացվել է «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) 2005թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվապահական հաշվեկշիռի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների, դրամական միջոցների հոսքերի և սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունների աուդիտը: Նշված ֆինանսական հաշվետվությունների համար պատասխանատվությունը կրում է Բանկի ղեկավարությունը: Մեր պատասխանատվությունն է իրականացված աուդիտի հիման վրա արտահայտել կարծիք Բանկի ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի Հայաստանի Հանրապետության ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտները պահանջում են այնպես պլանավորել և իրականացնել աուդիտը, որպեսզի ձեռք բերվի բավարար երաշխիքներ, որ ֆինանսական հաշվետվությունները չեն պարունակում էական բեռություններ: Աուդիտն ընդգրկում է ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տվյալներն ու համապատասխան ծանոթագրությունները հիմնավորող փաստերի ընտրանքային կարգով ստուգում: Աուդիտն ընդգրկում է նաև Բանկի ղեկավարության կողմից կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների և կատարված գնահատումների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատականը: Մենք համոզված ենք, որ մեր կողմից անցկացված աուդիտը բավարար հիմք է հանդիսանում մեր եզրահանգման համար:

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները տալիս են Բանկի 2005թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ Հայաստանի Հանրապետությունում բանկային գործունեությունը կանոնակարգող օրենսդրության համաձայն:


ԱՌԻՂԻՏՈՐ

/ Մ. Հարությունյան /



ՏՆՕՐԵՆ

Ա. Փինարասի /




Երևան, 28 փետրվարի 2006թ.

ԳՐԱՆՁ ԲՈՐՈՒՅՈՒ ԱՄԻՈ ՍՐԸ

- ԳՂ, Երևան 375012
- Վարչառչյալ 8/1
- Գ (374 10) 260 964 / 260 976 / 276 544
- Ֆ (374 10) 260 961
- Էլ gta@gta.am
- Կ www.gta.am

Գրանք ԹՈՐՆՏՈՆ ԻՌԵՐՆԱԿՆԵՐԻ ԱՆՊԱՑ

*Խնայողական գրանցման վկայական թիվ 01 Ա 035877, Աուդիտորական գործունեության լիցենզիա ԱՊ # 011 տրված ԳԳ ֆինանսների և կրեմոնիզացիոն հանրապետության կողմից

Անկախ աուդիտորի եզրակացություն

«ԱՄՆԱԼԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի 2006թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

«ԱՄՆԱԼԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի բաժնետերերին,

Մեր կողմից իրականացվել է «ԱՄՆԱԼԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) 2006թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվապահական հաշվեկշռի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների, դրամական միջոցների հոսքերի և սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունների աուդիտը: Նշված ֆինանսական հաշվետվությունների համար պատասխանատվությունը կրում է Բանկի ղեկավարությունը: Մեր պատասխանատվությունն է իրականացված աուդիտի հիման վրա արտահայտել կարծիք Բանկի ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի Հայաստանի Հանրապետության ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտները պահանջում են այնպես պլանավորել և իրականացնել աուդիտը, որպեսզի ձեռք բերվի բավարար երաշխիքներ, որ ֆինանսական ինֆորմացիան չեն պարունակում էական բերություններ: Աուդիտն ընդգրկում է ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տվյալներն ու համապատասխան ծանոթագրությունները հիմնավորող փաստերի ընտրանքային կարգով ստուգում: Աուդիտն ընդգրկում է նաև Բանկի ղեկավարության կողմից կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների և կատարված գնահատումների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատականը: Մենք համոզված ենք, որ մեր կողմից անցկացված աուդիտը բավարար է հանդիսանում մեր եզրահանգման համար:

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները տալիս են Բանկի 2006թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ Հայաստանի Հանրապետությունում բանկային գործունեությունը կանոնակարգող օրենսդրության համաձայն:

Հ. Բակրաչյան
ԱՌԻԳԻՏԻ ԳԵՆԵՐԱԼ

Handwritten signature
Ա. Փինարյանի
ՏՆՕՐԵՆ-ԲԱԺՆԵՏԻՐ



Երևան, 26 հունվարի, 2007թ.

ԳՐԱՆՑ ԹՈՒՐՆԵՐՆ ԱՄԻՑ ՍՊԸ
33, Երևան 375012
Վաղարշյան 8/1
Ֆ (374 10) 260 964 / 260 976 / 276 544
Ֆ (374 10) 260 961
Էլ gta@gta.am
Կ www.gta.am

Գրանց թիվերն ԻԳՆԵՐՆԵՐԻ անդամ

*Պատվան գրանցման վկայական թիվ ՓԻ Ա՝ 055877, Աուդիտորական գործունեության լիցենզիա ԱՊ # 011 տրված 11 ֆինանսների և կրեդիտի նախարարության կողմից

Ղրաթք Պրթթրթս Ամթս ՍՊԸ
 ԿԿ, ք. Երևան 0012
 Վարչաթյան ՑԻ

Գ. +374 10 260 964
 Ծ. +374 10 260 961

Grant Thornton Amyot LLC
 8/1 Vaghshyan Str.
 0012 Yerevan, Armenia
 T +374 10 260 964
 F +374 10 260 961
 www.gta.am

Աճկախ աուդիտորի եզրակացություն

«Վոնվերս բանկ» ՓԲԸ-ի բաժնետերերին և խորհրդին

Մենք աուդիտի ենք ենթարկել «Վոնվերս բանկ» ՓԲԸ (այսուհետ՝ «Բանկ») ֆինանսական հաշվետվությունները 2007թ. դեկտեմբերի 31-ին ավարտված ֆինանսական տարվա համար, որոնցից ստացվել է հաշվապահական հաշվեկշիռը, նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները՝ ՀՀ աուդիտի ստանդարտներին համապատասխան: 2008թ. ապրիլի 1 ամսաթվով թվագրված մեր հաշվետվությունում մենք ներկայացրել ենք դրական եզրակացություն ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ, որոնցից ստացվել է սույն հակիրճ ֆինանսական տեղեկատվությունը:

Մեր կարծիքով, հակիրճ ֆինանսական տեղեկատվությունը բոլոր էական առումներով համապատասխանում է ֆինանսական հաշվետվություններին, որոնցից այն ստացվել է:

2007թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ֆինանսական վիճակի, գործունեության արդյունքների և դրամական միջոցների հոսքերի, ինչպես նաև աուդիտի շրջանակների վերաբերյալ ավելի լավ պատկերացում կազմելու համար հակիրճ ֆինանսական տեղեկատվությունը պետք է դիտարկել հակիրճ ֆինանսական տեղեկատվության ստացման համար հիմք հանդիսացող ֆինանսական հաշվետվությունների, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեր աուդիտորական եզրակացության հետ համատեղ:

1 ապրիլի, 2008թ.

ք. Երևան





Արման Փինարբասի
 Տնօրեն-բաժնետեր

Հրանուշ Բակրաչյան
 Աուդիտի ղեկավար

«ՎՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ	
ՄՈՒՏՔ	
ԵՊՈՒ ԱՅ 2364	
05	05
2008 թ. ր.	

ԳՐԱՆՑԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ ԲԻԿ 0164

Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» և «Հաղորտումի Հիմնադրամային կառուցման և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, սույն վկայականը տրվում է

**«Կոնվերտ Բանկ»
փակ բաժնետիրական ընկերություն**

Հասցեն՝ Բ. Երևան, Հանրապետության
Հրապարակ, Վ. Մարգարյան 26/1

Գրանցման համարը՝ 57

Գրանցման ամսաթիվ, ամիս, տարեթիվ՝ 20.12.93թ.

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ



Ա.Տ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ԲԱՆԿԻ ԳՐԱՆՑԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ

Բ. ԵՐԵՎԱՆ

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ՝

S. Սարգսյան



Լիցենզիան տրվել է 20 դեկտեմբերի, 1993թ.

Լիցենզիայում փոփոխություն է կատարվել 21 փետրվարի, 1995թ.

20 մայիսի, 1996թ.

31 հոկտեմբերի, 1996թ.

23 մայիսի, 1997թ.

13 նոյեմբերի, 2001թ.

Բանկային գործունեության լիցենզիա թիվ 57

Սույն լիցենզիան տրվում է **Կունկերս Բանկ փակ բաժնետիրական ընկերությանը**

«Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հայկական դրամով և արտարժույթով բանկային գործունեություն և ֆինանսական գործառնություններ իրականացնելու համար:

Գրանցման թիվը 57

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Ֆինանսական արդյունքների մասին (ձև 1)

«31» դեկտեմբերի 2005 թ.

«Կոմվերս բանկ» ՓԲԸ, ք. Երևան, Վ. Սարգսյան 26/1
(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծանոթագրու- թյուններ	Հաշվետու ժամանակաշրջանի տվյալներ	Նախորդ ժամանակաշրջանի տվյալներ
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	3	2,659,418	2,470,680
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	4	1,030,131	865,167
Զուտ տոկոսային եկամուտ		1,629,287	1,605,513
Շահաբաժնի տեսքով եկամուտներ		3,577	3,650
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ		1,281,341	880,550
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր		247,005	175,021
Առևտրային նպատակով պահվող ներդրումների գուտ շահույթ/ (վնաս)	5	492,031	332,354
Վաճառքի նպատակով պահվող ներդրումներից գուտ շահույթ/ (վնաս)	6	-3,204	0
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներից գուտ շահույթ/ (վնաս)		0	28,454
Արտարժույթային գործառնություններից գուտ շահույթ/ (վնաս)	7	559,382	285,673
Այլ գործառնական եկամուտ	8	345,745	290,581
Գործառնական եկամուտ		2,678,872	1,821,262
Ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին կատարված գուտ մասհանումներ	9	88,386	-152,344
Ընդհանուր վարչական ծախսեր	10	1,248,394	994,212
Այլ գործառնական ծախսեր	11	516,670	422,396
Շահույթ/(վնաս) հարկումից առաջ		2,207,704	1,987,490
Շահութահարկի գծով ծախս /փոխհատուցում/	12	485,177	398,730
Շահույթ (վնաս) հարկումից հետո		1,722,527	1,588,760
Հաշվարկված շահաբաժիններ, այդ թվում՝		295,951	258,956
արտոնյալ բաժնետոմսերի գծով		7	7
սովորական բաժնետոմսերի գծով		295,944	258,949
Մեկ բաժնետոմսին ընկնող բազային շահույթ		0	0
Մեկ բաժնետոմսին ընկնող նուսրացված շահույթ		0	0

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ (Ձև 2)

«31» դեկտեմբերի 2005 թ.

«Կոնվերս բանկ» ՓԲԸ, ք. Երևան, Վ. Սարգսյան 26/1
(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

	ԱՆՎԱՆՈՒՄԸ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ տարվա վերջ
1	Ակտիվներ		
1.1	Գրանական միջոցներ և մնացորդներ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում	6,290,888	4,943,258
1.2	Այլ պահանջներ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նկատմամբ	110,525	160,156
1.3	Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորներ և հուշադրամներ	2,222	-
1.4	Թանկարժեք մետաղներով հաշիվներ և ավանդներ	-	-
1.5	Առևտրական նպատակով պահվող ֆինանսական ներդրումներ	4,062,062	3,662,153
1.6	Այլ բանկերում տեղաբաշխված միջոցներ	7,341,281	8,973,987
1.7	Գրանական շուկայում այլ տեղաբաշխումներ	843,701	-
1.8	Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխառություններ	17,153,077	11,493,657
1.9	Վաճառքի համար նախատեսված ներդրումներ	112,133	471,916
1.10	Բանկային գործառնությունների գծով ստացվելիք գումարներ	175,526	145,496
1.11	Վարձակալության գծով ստացվելիք գումարներ	-	-
1.12	Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	612,581	407,713
1.13	Ներդրումներ այլ անձանց կանոնադրական կապիտալում	-	-
1.14	Կապիտալ ներդրումներ բանկի հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում	5,505	121,373
1.15	Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	4,350,680	2,230,712
1.16	Հետաձգված հարկային ակտիվ	-	806
1.17	Ստացվելիք տոկոսներ	228,563	106,931
1.18	Այլ ակտիվներ	415,345	374,870
	Ընդամենը՝ ակտիվներ	41,704,089	33,093,030
2	Պարտավորություններ		
2.1	Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նկատմամբ պարտավորություններ	1,500,000	1,500,000
2.2	Այլ բանկերի նկատմամբ պարտավորություններ	1,523,456	1,637,780
2.3	Գրանական շուկայից ստացված այլ փոխառություններ	117,630	75,934
2.4	Հաճախորդներից ներգրաված միջոցներ	24,639,037	16,090,569
2.5	Պարտավորություններ Հայաստանի Հանրապետության Կառավարության նկատմամբ	2,497,569	1,944,621
2.6	Վարձակալության գծով վճարվելիք գումարներ	-	-
2.7	Բանկի կողմից թողարկված ավանդային սերտիֆիկատներ	-	-
2.8	Բանկի կողմից թողարկված այլ արժեթղթեր	-	-
2.9	Պահուստներ	44,809	16,593
2.10	Վճարվելիք գումարներ	564,627	528,710
2.11	Հետաձգված հարկային պարտավորություններ	575,527	247,510
2.12	Վճարվելիք տոկոսներ	179,541	169,092
2.13	Այլ պարտավորություններ	1,614,255	5,102,398
	Ընդամենը՝ պարտավորություններ	33,256,451	27,313,207
3	Կապիտալ		
3.1	Կանոնադրական կապիտալ	1,296,366	1,296,366
3.2	Պահուստներ՝	2,816,067	1,321,178
3.2.1	Գլխավոր պահուստ	461,773	130,973
3.2.2	Վերագնահատման պահուստներ	2,354,294	1,190,205
3.3	Կուտակված շահույթ (վնաս)	4,335,205	3,162,278
	Ընդամենը՝ կապիտալ	8,447,638	5,779,823
	Ընդամենը՝ պարտավորություններ և կապիտալ	41,704,089	33,093,030

Գլխավոր տնօրեն _____ Ս. Նախիբյան

Գլխավոր հաշվապահ _____ Ա. Կարախանյան

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին (Ձև 3)

«31» դեկտեմբերի 2005 թ.

«Կոնվերս բանկ» ՓԲԸ, ք. Երևան, Վ. Սարգսյան 26/1

(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

Նախորդ տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվը

(հազար դրամ)

Սեփական կապիտալի տարրերի անվանումը	Կանոնադրական կապիտալ	Գլխավոր պահուստ	Վերագնահատման պահուստ	Կուտակված շահույթ	Ընդամենը
Հոդվածներ					
